

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆՓԱՏԻԱ.

2 ԱՂԻԼ 1881



Կ. ՊՕԼՈՍ

1881

— ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կ. ՊՕԼՈՍԻ ԿՆՆՈՒՄ ԸՆԿԵՐԱՆՈՒՄ
20 Մերձանը Քաշտի ԼՅԵԼՆԻՔԻ ԿԱՌԱՐԱՆՈՒՄԻՆ ԳՐԱԿԱՆ 20 Կ

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՂԱՅ

ՄԱՅԻ ԴԻԻԱՆ

Յ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի	Ա. Արեւ-դէր
Ա. արեւ էֆէնտի Ալթուն Տիւրքի	Բ. »
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւ-դէր
Միհրան էֆէնտի Զօղանեան	Բ. »

Չեռնասուքեան դիւան

Յարաբերութեան դիւան

Յովհաննէս Քահանայ Մկրեան	Արեւ	Միհրան էֆէնտի Զօղանեան	Արեւ
Պապի էֆէնտի Պապօեան		Նշան էֆէնտի Օտեան	

Դատարանական դիւան

Իրաւասութեան դիւան

Ռէթէնս էֆէնտի Պէրպերեան	Արեւ	Սեպուհ էֆէնտի Թիւրապեան	
Յարութիւն էֆէնտի Թիւրեան		Տելեմար էֆէնտի Էքսերճեան	
Դասապար էֆէնտի Չերազ		Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան	

Կարւածոյ դիւան

Նախսնեռնութեան դիւան

Քրիստոսաւոր էֆ. Ղազարոսեան	Արեւ	Ղազար էֆէնտի Հոյուեան	Արեւ
Յակօր էֆէնտի Եւմէնիճեան		Եղիազար էֆէնտի Մելիքեան	

Համարակալութեան դիւան

Միջնա էֆէնտի Գափամանեան

Յակօր էֆէնտի Արշակ	Արեւ	Իմրազարութեան դիւան	
Մանփան էֆէնտի Փափազեան		Կարապետ էֆ. Խթիւճեան	Արեւ
Պօղոս էֆէնտի Թորգոմեան		Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	
		Աբրահամ էֆէնտի Մուրատեան	

Ելեւստից յանձնախումբ

Քրիստոսաւոր էֆէնտի Ղազարոսեան Արեւ-դէր
 Մկրտիչ էֆէնտի Մելիքեան
 Միհրան էֆէնտի Զօղանեան

Ա Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Ղ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԹ

Ն Ի Ս Տ Ի Ա.

2 ԱՊՐԻԼ 1884

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան (առժամեայ)
 ԱՏԵՆԱՊԵՏ. — Գ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի

Ա Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ե Ր Ե Ս Փ Ո Ւ Ա Ն Ք

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Ա. Վիճակ	ԵՍԵՐԵՍՅԱՆՔ (Ա. Վիճակ)	47 Յ. Նիշմանեան Տօքթօր
1 Կարապետ Եպ. Սերոբեան	Բ 9	Գումգաբու, Կետիկ փաշա եւ Գումգաբուի դուրս	48 Իսկիւտար Ս. Կարապետ
2 Սիմօն Եպ. Սէֆէրեան	Բ 2	21 Գրիգոր Չէրպէրեան	49 Միհրան Պանճէղապուլիճ
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան	Բ 9	22 Կարապետ Աղաբաճանեան	50 Պօղոս Թորգոմեան Բ 9
4 Կարապետ Գ. Սէթեան		23 Համբարձում Մաղպուլեան	51 Տրդատ Փափազեան Բ 2
	Բ. Վիճակ	24 Մինաս Գափամանեան	52
5 Մատթէոս Եպ. Իզմիրլեան		25 Սարգիս Աղաբէկեան	(Գ. Վիճակ)
6 Պօղոս Վ. Խօրտամեան	Բ 9	26 Սենեքերիմ Մանուկեան	Գասքմ բաշա
7 Յովհաննէս Գ. Մկրեան	Բ	27 Բարթող Քիւրքճիւղաշեան	53 Գասապար Չէրազ
8 Գրիգոր » Աճէմեան	Բ	28 Գէորգ Ազատլահեան	Բեքա
	Գ. Վիճակ	29 Յ. Մէրեւէմ-Գուլի	54 Արիկ Ունճեան Բ 9
9 Յակօր Վ. Ա. Փափազեան		30	55 Գրիգոր Աէլիֆէճեան Բ
10 Ահալ Գ. Տ. Սարգսեան	Բ 9	31	56 Գրիգոր Օտեան Բ 9
11 Խորէն » Փէչլիզեան	Բ	32	57 Միքայէլ Մօմճեան Բ 4
12		33	58
	Դ. Վիճակ	34	59
19 Սուրիաս Գ. Ստեփանեան	Բ	35	60
44		36	61
45		37	62
46		(Բ. Վիճակ)	Միջազիւղ
	Ե. Վիճակ	38 Ալփասն Խօրտամանեան	63 Յակօր Պ. Նորատունկ Բ 2
47 Խորէն Արքե. Նար Պէլ		39 Բարսեղ Հալաճեան	67 Տիգրան Եռսուֆեան
48 Յովհաննէս Վ. Փափազեան		40	65 Մկրտիչ Գաղանճեան Բ
49 Գարեգին » Թաթարեան	Բ 3		66 Նշան Օտեան Բ
20			67
Բ Բացակայութիւն առաջին		41 Մկրտիչ Քիւրքճիւղաշեան	Պէլգօզ եւ Ղալաքիա
Բ.2 Բացակայութիւն երկրորդ		42 Մարուգէ Զրէնկեան	56 Միքայէլ Մատթիսեան Բ
Բ.9 Բացկ. բանաւոր պատճառաւ		43 Պօղոս Էքսերճեան	(Գ. Վիճակ)
		44	Քուզիլմանուկ եւ Իմատիկ
		45 Սիմօն Յէլէկեան	70 Ստեփան Պէլիճեան Բ 3
		46	70



Գատըգիւղ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Մկրտիչ Մուրատեան Բ		121 Ստեփան Փափազեան
72 Նարըզարու	404 Կարին	Տիվրիկ
73 Յակոբ Եջմէնիճեան Բ	402 Բեօրանէա	122 Նշան Գարագոշ Բ
Եեհիմահալիկ Սամարիոյ		Ջէյրուն Է. Մարաշ
74 Թօփգափու	403 Անդրիանուպօլիս	123 Տրապիզօն
75 Յովհաննէս Մարգարեան	404 Նիկոմիդիա	124 Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս. Աստուածածին	405 Կարապետ Ս. Իւթիւճեան Ակն	125 Մելքօն Իսկէնտէրեան Բ Գ
76 Գարեգին Յ. Մէլիքեան Բ	406 Ղարանիսար	Տիգրանակերտ
Գուրուշէլմէ		126 Միհրան Զօպունեան
77 Աստուծաբան Երեմիայեան	407 Կարապետ Իսախանեան	Վան
Հիսար Է. Պօլաճի գիւղ	Բաղէշ	127 Աղբամար
78 Նոր գիւղ Է. Սրէնիա	408 Պրուսա	128 Հալիպ Է. Այնթապ
79 Ղազար Հովուեան	409 Քրիստոստուր Ղազարուեան	129 Սեբաստիա
Պալատ	Եւդոկիա	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
80 Տելեմաք Էջմէնեան Բ	410 Ամասիա	Ռուսնուգ
81		131 Կարս
82 Գարակեօմրիկ	411 Համբարձում Ալանանեան Բ	132 Արրահամ Յ. Այվազեան
83 Սեպուհ Թիւրապեան	Բալու	Զմլիածագ
84 (Ե. Վիճակ)	412 Յովհաննէս Ազնաւորեան Բ	133 Համբարձում Սարգէլ շիշեան Բ
Սամարիա	Եղեսիա	Գաղատիս
85 Այլքոսան Պէլլիբեան	413 Յակոբ Իւթիւճեան	134 Ատանա
86 Եղիազար Մէլիքեան Բ Գ	Մանճրլիս	135 Սդերդ
87 Մինաս Ճաֆնաֆեան Բ 2	414 Հանքն	136 Մատթէոս Ալէքսանեան Բ
88 Նաղարէթ Նաչապեան Բ	415 Երզնկա	Եօզղատ
89 Յարութիւն Թիւրեան Բ 2	416 Ռէթէոս Պէրպէրեան	137 Լօղօֆէթ Պալեօզեան Բ Գ
90 Յակոբ Արշակ	Թէրիքտաղ	Մալաթիա
91 Սեպուհ Թիւրապեան	417 Տիգրան Գ. Սինանեան	138 Գէորդ Վարդանեան Բ
92	Կեսարիա	Իզմիր
93	418 Գէորդ Գրչմանեան Բ Գ	139 Պապի Պապօեան Բ Գ
94 Խասգիւղ	Խարբերդ	Եգիպտոս
95 Առաքել Ալթուն Տիւրքի	419 Պալքեօք	140 Արրահամ Մուրատեան Բ
96 Ռէթէոս Պէլլիկեան Բ Գ	420	
97 Սարգիս Պապուքեան Բ Գ		
98		
99		
100		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Երազիր Թաղային մատակարարութեան . — Վիճարանութիւն շարունակութեան ի վերայ Ատենապետաց դիւանի Տեղեկագրին :

Բ. Փակումն ժողովոյ .

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի բացակայութեան Ամեն. Ս. Պատրիարք Զօր, Ատենապետ էֆէնտի ստեանը բացաժամը 3 ին, 'ի ներկայութեան 14 երեսօտիսանաց, և առժամեաց Նախագահութեան պաշտօն վարելու հրահրեց զՏէր Մատթէոս Եղիսկոպոս Իզմիրեան, Երեսօտիսանաց թիւն ի վերջէ 30 ի յանգեցաւ :

տարեալ ատենապետութիւն չունէր Գիւանը՝ Ժողովոյն ընդունելութեան ենթարկելի, և թէ կըրթական ծրագիրն ալ արդէն աւարտելու վրայ լինելով, այն ալ վերջին ատենապետութեան կցեալ պիտի հրատարակուի, որպէս զի փակման միջոցին Երեսօտիսանք ժամանակ ունենան զայն լուսը սերտելու, յառաջիկայ բացման վիճարանութեան դրուելու համար :

1 .

2 .

Վանքացումն Ատենապետութեանց

Բացակայութիւն

Ատենական գործողութեանց սկսելով Ատենապետ էֆէնտին՝ յայտնեց թէ այս անգամ

Ազգային երեսօտիսաններէն՝ Պօղոս էֆէնտի Թորգոմեան

Պապի էֆէնտի Պատգեան, և
Գէորգ էֆէնտի Գըրըճճեան

Իրենաց բացակայութեան օրինական պատ-
ճառը Գիւանին ծանուցած լինելով, Ատենա-
պետ էֆէնտի ըստ օրինի բացակայ նշանակել
տուաւ զանոնք, ներկայութեան տուժարին մէջ:

3.

Առաջարկութիւն Ս. Փափազեան էֆէնտիի,
յրագրական ճրատարակութեանց դիմ ազգային
պաշտօնատարները պաշտարանելու մասին:

Ազգային երեսփոխաններէն Փափազեան
Ս. էֆէնտիի կողմանէ Գիւանին մատուցեալ յե-
տագոյ առաջարկութիւնը կարգացուցաւ:

Առաջարկութիւն առ Ազգ. ժողով

Որպէս զի ազգային ամենայն պաշ-
տօնատարք ազատուն և պահպանուն
խմբագրաց ոմանց անձնական ատելու-
թեան և շահախնդրութեան նիւթ և որս
ըլլալէ, և այս պատճառաւ անոնց ձրի
բամբասանքէն և անուանարկութենէն
խոյս տալու համար՝ խոյս չի տան նաև
ազգային պաշտօններէ, և կամ չստիպ-
ունին դրամական զոհեր ևս յանձն առ-
նուլ:

Եւ որպէս զի աշխատութիւնն յար-
գուի, արժանաւորք չնախատուն և
կամ խոյս չի տան պաշտօնէ, և անար-
ժանք չխրախուսուն ազգէն կորզել, և
կորզածին բաժանորդ ընել այդ կարգի
խմբագիրներն,

Կառաջարկեմ յանձնարարել վար-
չութեան որ

1. Դատական խորհրդականն փո-
խանորդարար դատախազ կանգնի ա-
ռանց սպասելու վնասելոյն դատախա-
զութեան, և ազգային դատարանին
յանձնէ այն անուանարկիչ հրատարա-
կութիւններն, որ տեղի կունենան յազ-
գային թերթս ընդդէմ եկեղեցական և
աշխարհական, ձրի կամ թոշակաւոր ա-
մենայն պաշտօնէից, և դատարանին վը-
ճիւն հրատարակէ ի լուր ազգին:

2. Ի պակասել ազգային օրինաց՝
ազգային դատարանք Տէրութեան օրի-
նօք վարուն, ըստ պատշաճի ազգին
վիճակին:

3. Ներկայ թուականէն գործադ-
րուն սոյն երկու առաջարկութիւններն,
եթէ վարչութիւնն դիտողութիւն մը
չունի:

2 Ապրիլ 1884 Ազգ. երեսփոխան
Ս. Գ. Գ. Փափազեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իմացոր թէ առաջար-
կութեան տէրը կուզէ միանգամայն որ՝ եթէ
վարչութիւնը զիտողութիւն չունի՝ իւր առա-
ջարկն սցթմէն գործադրութեան գրուի: Ար-
դէն առաջարկն յղելի է առ վարչութիւն, և
նոյն իսկ այժմէն գործադրութեան գրուելու
նկատմամբ վարչութեան կարծիքն իմանալու
համար պէտք է առ նա յղէ զայն ժողովը:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — [Ատենապետ
վարչութեան]. Կարծեմ թէ վարչութիւնն
սկզբամբ կրնայ ընդունիլ այդ առաջարկը
թէ և այժմէն բան մը չեմ կրնար ըսել յանուն
վարչութեան, վասն զի տոխիմ եղած չէ վար-
չութեան մէջ այս խնդիրը յուղելու, որպէս
զի կարենամ յանուն նորին կարծիք յայտնել:

Ուստի յղեցէք առաջարկը, տեսնելք ինչ կար-
ծիք կունենայ վարչութիւնն: Ըստ իս պէտք
է ընդունի. ես անձնական կարծեօքս լու ա-
ռաջարկութիւն մը կը նկատեմ զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — վարչութեան Ատե-
նապետ էֆէնտին կը խնդրէ որ իրենց յղուի
այս առաջարկն, և կը յուսայ թէ վարչութի-
ւնը ընդունելի պիտի գտնէ զայն: Եւ ըստ ո-
րում ոչ որ յղման դէմ կը խօսի, ժողովոյն հա-
ւանութեամբ վարչութեան ԿԸ ՅՂԵՄ Փա-
փազեան էֆէնտիի առաջարկութիւնն:

4.

Միջադէպ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործադր-
ութեանց վերաբերեալ ուրիշ գրութիւն չկայ Գի-
ւանիս վրայ, ուստի Սրակարգին պիտի անց-
նիմք: Բայց որովհետև դեռ ևս ներկայից թիւն
անբաւական է, և որոշման պահու հասած ա-
տեններս սարսելու պիտի ստիպուիմք, հարկ կը
տեսնեմ առ այժմ 57 անլոյծ խնդիրները ձեռք
առնուլ, որոց համար խրատքանչիւր նախ սկիզ-
բը կէս ժամ յատկացնելու որոշում ունիմք:
Թէ և այս անգամ Թաղ. օրինաց ծրագիրն յա-
ռաջ տանելու համար պիտի յետաձգէինք զայն,
եթէ ներկայից թիւն այսչափ նուազ չլինէր:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Կարասէի
տեսնել այսօր՝ Կրօնական Խորհրդականին ուղ-
ղեալ հարցմանցս պատասխանը, տակայն զըժ-
բաղդարար այդպիսի բան մը չը ներկայացաւ
Ժողովոյս: Երբ Երեսփոխանական ժողովը ո-
րոշում մը կընէ, պէտք է յարգել այդ որո-
շումը: Ամեն պաշտօնեաց, ո՛վ որ ալ լինի,
պէտք է համակերպի ժողովոյս որոշմանց և ե-
ղած հարցմանց պատասխանները բերէ: Տա-

րակոյս չկայ թէ՛ Կրօնական Խորհրդականն երբ
փութար պատասխանել այս հարցմանց, այսօր
այս զիտողութեանց տեղի չէր տար: Ուստի
կը խնդրեմ որ Կրօնական Խորհրդականը բարե-
հաճի խնդրուած պատասխանը բերել յառաջի-
կայ նստին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ալ իմ արդէն
ըրած հարցմանցս պատասխանները լսել կը
փախարիմ, և որովհետև վարչական Խորհրդ-
ոյ Ատենապետը ներկայ է, կրնայ այդ պա-
տասխանները տալ:

Այսօր ներկայ տարեշրջանին վերջին նիստն
է կարծեմ, պէտք էր նախարանիչ զիւանաց
յղեալ խել մը խնդրոց պատասխաններն ալ ե-
կած ըլլային, մանաւանդ անոնց մէջ ստիպու-
ղականութիւն ունեցող խնդրոց պատասխան-
ներն, յորս են և իմ երեք խնդիրներս, որք
կարծեմ թէ մեծ կարեւորութիւն ունին: Այդ
երեք խնդրոց մին էր՝ քաղաքական խնդրոց
մասին Սրբազան Պատրիարքին պատասխանա-
տուութեան տակ եղած գործոց համարատուու-
թիւնը լսել, երկրորդը՝ առ Սրբազան Կաթո-
ղիկոսն պատուիրակ զրկելու առաջարկութիւնս,
և երրորդը՝ Հայաստանի մէջ, որ որ հիւսա-
տաներ կարգեալ են, հոն լեզուազէտ պատ-
ուիրակներ ունենալու խնդիրս: Անգամ մը
խնդրեցի որ վերջին երկու առաջարկութիւն-
ներս յղուն վարչութեան առ ի գործադրու-
թիւն, բայց յետաձգուեցան Ատենապետ է-
ֆէնտիի զիտողութեան վրայ, որ առարկեց թէ
նախարանիչ զիւանաց պատասխանն ամենէ յե-
տոյ անօրէնութիւն լինի Ետտ ստիպողական են
այս խնդիրները և ես չեմ հանդուրժեր որ
առկաւին բարձի թողի լինին:

Գալով քաղաքական խնդրոց համարա-
տութեան մասին, ևս առաջարկած էի, ի
19 դեկտեմբեր 1880, թէ Մայր Գիւանն Ս.
Պատրիարք Հոր կարծիքն ամենէ յետոյ դռն-
փակ նիստ հրաւիրէ Ս. Պատրիարքի համարը
լսելու: Արդ ամիսներ անցան և տակաւին չը

գիտենք թէ Ս. Պատրիարքին հետ բանակցու-
թիւն եղած է և թէ ի՞նչ պատասխան ա-
նուած է : Անշուշտ ես այդ առաջարկը բերած
եմ ոչ միայն համարառութեան իրաւունքս
գործադրելու համար , այլ դիտողութիւններ ալ
ունենալուս համար :

Ահա ես իմ պարտքս կը կատարեմ ու պա-
տասխանատուութենէ կազատիմ . քանզի ի՞նչ
կրնամ ընել , երբ այսրան յարադրւած տեղի
կունենայ . իմ զօրութիւնս առաջարկութիւնը
բերել և գայն պահանջել է , որոց որ անկ է
պատասխանել , թող հասնին փութալ իւրեանց
պատասխանը ներկայել ժողովոյս :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Արդէն Մատ-
թէոս Արքազանի և Փափուղեան էֆէնտիի դի-
տողութեանց համաձայն եմ : Ես ալ Եղիպտոսի
խնդրոյն համար տարիէն աւելի է որ հարցում
մ'ուղղած էի , և ապա առաջարկութիւն ըրի
որ խնդիրը Ընդհանուր ժողովոյ բերուի , բայց
մինչև ցարդ չկարայինք այդ խնդիրը Դիւանին
միայն տեսնել , թէ և պատասխանը վերջընթեր
նիստին մէջ պիտի գար Վարչութեան Ատե-
նապետին խոստման համաձայն , բայց չեկաւ .
անցեալ նիստին դիտողութիւն ըրի այս մասին ,
ահա այսօր ալ եկած չէ այդ հարցման և ա-
ռաջարկութեանս պատասխանը : Ես ալ իբր
երեսփոխանական պարտաւորութիւն՝ կը պըն-
դեմ կրկին որ այդ հարցման և առաջարկու-
թեանս պատասխանները յառաջիկայ բացման
առաջին նստին բերուին , և եթէ անկէ վերջն
ալ Վարչութիւնը չը բերէ , ես ալ պիտի լռեմ
ու ինքզինքս պատասխանատուութենէ ազատ
պիտի համարիմ ապագային առջև , թողով
պատասխանատուութիւնը անոր՝ որու որ անկ
է , ինձ բաւական է որ դիտողութիւններս ա-
տենադրութեան մէջ կանցնին :

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Տ. Մատթէոս Եպիս-
կոսոսին խնդրած պատասխանին նկատմամբ
Դիւանին միայն տեղեկութիւն մը չկայ , միայն

թէ ոչ ի սրտով կրնամ ըսել Ձեզ որ՝ պա-
տասխանմք Տ. Միսէօն Եպիսկոսոսը տեսայ անց-
եալ օր , որ կըսէր թէ խնդիրը կրօնային Ատե-
նին յանձնած է , զի ինքն խնդրոյն ծագումէն
յետոյ կրօնական Խորհրդականի պաշտօնն ըն-
դունելով , տեղեկութիւն չունէր խնդրոյն պա-
րագայից միայն .

Գալով Փափուղեան էֆէնտիի այն դիտու-
ղութեան թէ Ատենապետին առարկութեան
միայ իւր խնդրած յղումն յետաձգուեցաւ , ար-
դարեւ այն օրը Դիւանն ուղեց յետաձգել յը-
զումը , վասն զի հրահանգ տուած էր իւր Դի-
ւանադպրին որ բոլոր յղեալ խնդրոց պատաս-
խանները ժողովէ նախարանիչ Դիւաններէն , ո-
րոց համար յատկապէս զրած էր իրենց , և
հետեւաբար իրաւունք ունէր յուսալու , որ հե-
տզետէ ստանայ անոնց տեղեկագրերն :

Իսկ Պատրիարք Արքազանի համարառու-
թեան նկատմամբ՝ երբ Դիւանս Նորին Արքազ-
նութեան կարծիքը խնդրեց , պատասխանս ստա-
ցաւ թէ Բարենորոգմանց Յանձնախօսին հա-
մարառութեան տեղեկագիրը տեսնել կուզէր
Պատրիարք Արքազանն : Եւ ըստ որում այդ հա-
մարառութիւնը մի միայն թղթակցութիւն
ներէ կը բաղկանար , զորս Յանձնախօսներն իս-
կութեամբ ներկայած էր ժողովոյդ , պիտի ի-
մացնեմ զայս Նորին Արքազնութեան , և տա-
րակոցս չունիմ որ այն ատեն Պատրիարք Ար-
քազանի կարծիքը պիտի կրնամք առնուլ և
թերեւս օրն ալ որոշելով ժողովոյդ հաղորդել :

Եղիպտոսի խնդրոյն գալով , պէտք է յի-
շէր որ Վարչութիւնը նախընթաց նիստին մէջ
պատասխանեց այն մասին , բայց ժողովը գոհ
չեղաւ այնչափով և որոշեց Եղիպտոսի նա-
խորդ գործերէն սկսեալ տեղեկութիւն առնուլ
Վարչութիւնէն , որ խոստացաւ տալ : Ուրեմն
այդ տեղեկութիւններն յառաջիկային պիտի
հաղորդուին ժողովոյս հաւանականաբար :

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Կրօնական
Խորհրդական Արքազանը թերեւս իրաւունք ու-

նենայ առ ինքն եղած հարցումը կրօնային Ա-
տենին յղելու . սակայն քանի որ ժողովս իր-
մէն պատասխան մ'ուղած է , այդ պատաս-
խանը պարտաւոր էր հաղորդել այսօր ժողո-
վիս : Եթէ չկրցաւ կրօնային Ատենան իր
պատասխան ընդունիլ դեռ ևս , պարտաւոր էր
զոնէ զայս իմացնել ժողովոյս , բայց չխա-
ցուց : Իմ ցաւս այն չէ թէ խնդրուած պա-
տասխանը չէ բերուեր , այլ կուզեմ որ ող-
գային պաշտօնեացը գիտնան թէ ժողովոյս ձայ-
նին հնազանդելու և անոր որոշումներն յարգե-
լու պարտաւոր են :

Ուստի կառաջարկեմ որ Դիւանը Վարչու-
թեան և մասնաւոր կերպով կրօնական Խորհր-
դականին ծանուցանէ թէ Ազգամտօրոյ կաթո-
ղիկոսական խնդրոյն համար ի՞նչ ընթացք որ
բռնած էր Վարչութիւնը , նոյն ընթացքը
պարտաւոր է բռնել ներկայ կիլիկիոյ կաթողի-
կոսական խնդրոյն մէջ :

ԵՊԻՍՏՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — [Ատենապետ
Վարչութեան] Կարծեմ թէ Մատթէոս Արքա-
զանին ըրած առաջարկութեան բնաւ տեղի չը
կայ . արդէն Վարչութեան գաղափարը նոյնն
է՛ ինչ որ է Մատթէոս Արքազանինը , ինչպէս
որ անցեալ նիստին յայտարարեց արդէն : Պա-
րապ տեղ պէտք չէ այդ մասին նոր ազգարա-
րութիւն ընել : Եթէ կրօնական Խորհրդականը
ներկայ լինէր , հաւանականաբար ինքն ալ մի և
նոյն յայտարարութիւնը պիտի ընէր ինձ հետ :
Ուստի կապալովեմ զԳեր. Մատթէոս Եպիս-
կոսոսն՝ որ Վարչութիւնն այս խնդիրը ազգա-
յին շահուց և ժողովոյս որոշմանց համաձայն
պիտի լուծէ :

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Իմ պա-
հանջումս կրօնական կէտերուն համար է միայն .
չնորհակալ եմ որ նորին մեծարարառութենէն
Յուսուֆեան էֆէնտի յայտարարեց թէ խնդի-
րը ազգային շահուց և ժողովոյս որոշմանց հա-
մաձայն պիտի լուծուի . այս յայտարարութիւնը

խնդրոյն ոչ-կրօնական մասերուն համար կը
հասկնամ , և կրօնական Խորհրդական Արքա-
զանէն ալ մի և նոյն յայտարարութիւնն ընել
կսպասեմ , խնդրոյն կրօնական մասերուն հա-
մար : Բայց եթէ Վարչութիւնն այդ մասին
ալ պատասխանատուութիւնը կ'ստանանէ , ի-
սկից չունիմ :

ԵՊԻՍՏՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Քանի որ յայտա-
րարեցի յանուն Վարչութեան թէ կիլիկիոյ կա-
թողիկոսական խնդիրն Ազգ. ժողովոյ որոշմանց
համաձայն պիտի լուծուի , թէ կրօնական և
թէ քաղաքական տեսակէտներով ըսել ուզե-
ցի , հետեւաբար Վարչութեան և Իզմիրեան
Արքազանի մէջ անհամաձայնութիւն չմնար :
Ուստի ժամանակ չկորսնցնելու համար կը խնդ-
րեմ որ անցնինք օրակարգին :

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Արդէն ամեն խնդիր
որ յղուած է ժողովէն և պատասխան չէ առ-
նուած , ինչպէս է և առ կրօնական Խորհրդա-
կանն յղուած խնդիրը , Դիւանը պիտի խնդրէ
անոնց պատասխաններն , այս նստին ատենա-
դրութեան կցելու համար : Եւ կարծեմ թէ կի-
լիկիոյ խնդրոյն վրայ այսչափ վիճարանու-
թիւն բաւ է , Վարչութեան Ատենապետ է-
ֆէնտիին ըրած յայտարարութեան առջև : Ես
չեմ կրնար ենթացրել որ կրօնային Ատենան
կամ կրօնական Խորհրդական կարենան Ազգ.
ժողովոյ որոշմանց հակասակ անօրինութիւն
մ'ընել : Ազգարարութեան ալ հարկ չմնար ,
կարծեմ , քանի որ Վարչութեան Ատենապետ
Յուսուֆեան էֆէնտի կը յայտարարէ թէ խըն-
դիրը Ազգ. ժողովոյս որոշմանց և Ազգին շա-
հուց համաձայն պիտի լուծուի :

Ներկայ երեսփոխանաց թիւն ստուարա-
ցաւ արդէն և հաւանական է որ դեռ ևս աւել-
նայ . ուստի այլ ևս օրակարգին կրնամք անց-
նիլ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ հարցմանցս տըր-

ուած պատասխանը դիւ չգոհացուց : Արքայան Պատրիարքը Բարենորոգմանց Յանձնարարին թղթերը կամ տեղեկագիրը տեսնել կուզէ կը- սէք : Իր տալիք համարատուութիւնը բնաւ յա- րարերութիւն չունի անցելոյն մէջ եղած հա- մարատուութեանց հետ : Իր տալիք համարը իր ժամանակին կը վերաբերի : Արքայան Պատրի- արքը 1879 օգոստոս 10 էն մինչև 1880 նոյեմ- բեր իւր առանձին գործոց համարը կուզէ ոչ մի տալ թէ ոչ : զայս պէտք է ինք ըսէ մեզ : Մայր Դիւանն պիտի խնայէ Նորին Արքայու- թեան թէ Բարենորոգմանց Յանձնարարին հա- մարատուութիւնն ուրոզի իր թղթակցութիւնն են և ին : Ս. Պատրիարք Հայրը տեսնելով որ գոնորակ նիստերու ատենագրութիւններն տա- կուին փաւերացած չեն ժողովէս , թերևս վա- ղը ելլէ ըսէ թէ այդ տանադրութիւնները փաւերացեալ չըլլալով , չեմ կրնար ըսել իրս ը- սել , և այսպէս խնդիրը երկարի :

Բարենորոգմանց Յանձնարարին թղթերն ի Պատրիարքարանի են , և անոր թղթակցու- թեանց տուժարն ևս ինքն յանձնած եմ Նորին Արքայութեան : Արդ կրկին կը խնդրեմ որ Մայր Դիւանն Արքայան Պատրիարքին հարցու- յէ թէ կուզէ իւր գործոց համարն այժմ տալ թէ ոչ : Եթէ Արքայան Պատրիարքն չուզէ գոնորակ նիստի մէջ Արդ. Ժողովիս համար տալ , ան ատեն յատուկ Յանձնարար մը կընտրուի Ժողովէս , որ կերթայ Արքայան Պատրիարքին համարատուութիւնը ըսել , ինչ- պէս եղաւ 1878 ին , և երբ այդ Յանձնարար մը զայ մեզ ըսէ թէ շատ բաւ գտայ ամեն բան , ինչպէս եղաւ 1878 ին , մենք ալ նոցա խզին և պատասխանատուութեան տակ գոհ կըլլանք և կը փակենք խնդիրն : Կր խնդրեմ ըստ ուղարկութիւն ըրէք տառաջարկութեանս , զոր ճ ամիսէ ի վեր բերած եմ և տակաւին պատասխան մ'անգամ եկած չէ : Ես իրր ե- բնափոխան , ընդհանուր տեսութեամբ դժգոհ եմ իրաց վիճակէն . թող խնայց Արքայան Պատրիարքը . Պէրլինի զաշնագրէն ի վեր ինչ

որ պէտք էր ընել զայն չորինք , և էական գործելիքներն թողուցինք և երկրորդական գործերով զբաղեցանք : 1879 օգոստոս 10 էն ի վեր կը զխտեմ եղելութիւններն , և կը ցա- տիմ որ անգին ժամանակէն պէտք եղածին չափ օգուտ չենք քաղեր :

Թերևս ևս սխալած ըլլամ , թերևս այն- պիտի համար մը այս Արքայան Պատրիարքը որ զիս գոհ ընէ և յեղաշրջէ իմ համոզմանս մէջ . իմ այսորուան գաղափարներս իմ տեսածնե- րուս և ատած տեղեկութեանցս վրայ հիմնեալ են : Ուստի պէտք չէ որ ժամանակ անցունեմք , այլ որ յառաջ լսեմք Արքայան Պատրիարք Հօր պատասխանն ու համարատուութիւնը , և այս ամիս ինչպէս ինչպէս անուամբ մեր քաղա- քական կացութիւնն ու վիճակը :

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Կերևի թէ չը կրցայ հասկցնել : Արքայան Պատրիարք Հայրը մեզ հաշիւ չտալու դիտաւորութիւն չէ յայտնած , և մեք իրեն վրայ կատարեալ տեղի չունիմք . միայն խնայալ ուզած է թէ ինչ էր Բարենո- րոգմանց Յանձնարարին համարատուութիւնը . պիտի ըսեմք իրեն թէ մի միայն թղթակցու- թիւններ էին անոնք , և այն ատեն իւր կար- ծիրը պիտի խնայեմք : Պատրիարք Արքայանը կրնայ պատճառներ ունենալ իրոք խնդրուած համարատուութիւնը յետաձգելու և Ձեր փա- փարն այժմն չկարենալ կատարելու , բայց դեռ այսպիսի բան մ'ալ չեմք գիտեր . ուստի և չեմք կրնար կանխահաս կարծիքներով դա- տել խնդիրը :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Իմ ըսելիքս ար- դէն Ատենագրեա Էֆէնտին ըստ , ուստի կը փախարիմ որ այսչափ բացատրութիւն բաւ համարուի : Բայց գաղով Փափաղեան Էֆէնտիի այն խօսքին թէ ինք դժգոհ է եղեր , ևս ալ դժգոհ կրնամ ըլլալ , միայն թէ Փափաղեան Է- ֆէնտիի չափ յոտի չեմ տեսներ իրաց վիճակը , քանի որ մի և նոյն շրջանին մէջ եմք , ևար-

Օ Ր Ա Կ Ա Ր Գ



Իրագիր Քաղային օրինաց

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Դիւանն Երեսփոխան Տեարք որ անցեալ նստին երբ Ծր յօդուածին վրայ եղած վիճարանութիւնը փակեալով , խըն- դիրը քուէի դրինք , որոշող ձայնից միտարանու- թիւն չը կրցաւ գոյանալ և որոշումն իրրև չեղեալ այս նիստին մնաց : Այժմ այդ յօդ- ուածը պիտի քուէարկեմք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկարբեր) Անցեալ նիստին մէջ Ծր յօդուածին վրայ ե- դած վիճարանութիւնը ի նկատի առնելով , կուզեմ համաձայնութիւն մը գոյացնել . ոմանք ըսին թէ այն յօդուածին վերջին մասն' այն է թաղային սնտուկի բովանդակ հասութից առ նուազն 40 առ 0/0 Վարժարանաց յատկա- ցընել , կրթական օրինաց կը վերաբերի և հոս գործ չունի : Իրաւացի է այս դիտադրութիւնն . ուստի ևս կառաջարկեմ այն Ծր յօդուածն նայնութեամբ սրահել , բայց ծրագրին մասնա- ւոր տրամադրութեանց մէջ յաւելալ թէ՛

« Ծր յօդուածին » որոց հիմ պէտք է բըն- նուի՝ թողային սնտուկի բովանդակ հասութից առ նուազն 40 0/0 ի տրամադրութիւնն առժա- մանակեաց է , մինչև կրթական օրինաց հաս- տատութիւնն և գործադրութիւնը » :

Այս կերպով Քաղ. Ժողովը գէթ առժա- մանակեաց ուղեցոյց մը կուեննան ձեռքերնին վարժարանաց համար :

Եթէ այսպէս համաձայնիք խնդիրը կը ըսեմուի : Ինչպէս կարգաւ գրեւորն վրայ բա- ցատրութիւն կոյ մասնաւոր տրամադրու-

նեմ թէ մեզ պէտք եղածն անցեալը քննադա- տել չէ , այլ ներկային հոգ տանիլ , և ևս այդ տատինան յուսահատ վիճելու պէտք չեմ տեսներ : Թերևս Ս. Պատրիարքին տալիք բացատրու- թիւններն գոհացնէ զմեզ , մանաւանդ որ նա չէ ըսած թէ ևս հաշիւ չեմ տար , և միայն տեղեկութիւն մ'առնուլ ուզեր է կանխաւ : Ըստ իս աւելորդ է շարունակել վիճարանու- թիւնը , ուստի կառաջարկեմ անցնիլ օրակար- գին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ժամանակը կանց- նի , եթէ տակաւին խնդրուած պատասխան- ները ուշանան , դժգոհութիւնն աւելի կընդ- հանրանայ :

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Կրնաք վստահիլ Ձեր Դիւանին որ բոլոր յղուած խնդրոց պատաս- խաններն առնելու պիտի փութայ . և երբ այդ պատասխանները չկարենան առնուիլ , Ժողովը պիտի խնայալ և այն ատեն հարկ եղած տնօրէն- ութիւնը պիտի ընէ անշուշտ ամեն յապաղեալ խնդրոց մասին : Արեմն այսչափ խօսք այս- օրուան համար շատ իսկ համարելով , պիտի անց- նիմ օրակարգին , որ Քաղային Օրինաց ծրագ- րին կարեւոր խնդիրն է , և գրեթէ յատկապէս անոր համար այս նիստն ընել ուղած է Ժողովը :

Եւ հետեւապէս Ատենագրեա Էֆէնտի փի- ճարանութեանը վերջ տալով , ձեռք կառնու օրակարգը :

թեանց մէջ, նոյնպէս ալ ըսած կերպովս յօդուած մը կրնանք յաւելուլ անդ, 40⁰/0 ի տրամադրութեան համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մրազիրը ձեռքերնիս է, անգամ մ'ալ կարգանք այս Ծր յօդուածը, որպէս զի լաւ ըմբռնեմք:

Յօդ. 9. Թաղ. Ժողովը՝ սնտուկին ելմտացոյցը սահմանելու ատեն՝ պարտի ինկատ առնուլ կրթական օրինաց տրամադրութիւնն, և ըստ այնմ իւր թաղին վարժարանաց յատկացնել՝ կրթութեան պատկանեալ հասոյթներն, որոց հիմ պէտք է բռնուի թաղային սնտուկի բովանդակ հասութից առ նուազն 40 % ը:

Վիճարանութիւնը հասնուածեալ 40⁰/0ը պահելու կամ վերցնելու վրայ էր. սմանք լաւ չէին գտներ անխտիր կերպիւ ամեն թաղի համար միօրինակ թիւ մը սահմանել, և սմանք զայն բոլորովին վերցնել կառավարիչին, իբրև կրթական օրինաց վերաբերեալ տրամադրութիւն, և ոչ թէ թաղային օրինաց. մինչդեռ Տեղեկարեր էֆէնտին և շատ մ'երեսխոտաններ առնուազն 40 % ի տրամադրութիւնը պահել կուզէին, թաղային օրինաց մէջ, սկզբունքն Ազգ. Ժողովէս ընդունուած և ընդհանուր ուղեցոյց մը ցոյց տրուած ըլլալու համար: Այժմ Տեղեկարեր էֆէնտին կուզէ համապետութիւն գոյացնել այս մասին, ստանջարիկով որ այն յօդուածին մէջի 40 % տրամադրութիւնը մնայ և մասնաւոր տրամադրութեանց մէջ յօդուած մ'աւելնայ այն իմաստով թէ՛ այդ 40 % ի տրամադրութիւնն առժամանակեայ է մինչ ի հաստատութիւն և ի կիրառութիւն կրթական օրինաց:

Ուստուտն ստանջարիկութիւն մ'է այս որ կրնայ երեսխոտաններն համաձայնեցնել ծրագրին Ծր յօդուածին վրայ: Մանուանդ որ պր-

զէն յօդուածին ոգւոյն մէջ անհարկութիւն կոչ կրթական օրինաց նկատմամբ, որ երբ հաստատեմք զայն, այս մասին յօդուած մը պիտի գտնուի անշուշտ անոր մէջ:

Արեմն եթէ այս բարեփոխման դէմ խօսք ուզող չկայ, քուէի պիտի դնեմ գայն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՅ. — Ամերս ալ կը համաձայնիմք այդ բարեփոխման, բայց քուէ տալու շտի թիւ չունիմք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Քանի որ ներկայից թիւն օրինական չափուն հասած չէր կարծեր, կանցնիմք յաջորդ յօդուածներուն և պահ մը յետոյ կը քուէարկեմք: Ուստի կաղաչեմ Ատենադպիր էֆէնտին, որ հաճի ընթեռնուլ յաջորդ յօդուածներն:

Ատենադպիր էֆէնտին կընթեռնու:

Յօդ. 10. Թաղ. Ժողովը գնմանց, վաճառմանց, փոխառութեանց, փոխատուութեանց, և՛ արաւարոյ սահմանեալ ելմտացոյցի հարկ եղած՝ շինութեանց և նորոգութեանց անօրէնութիւններն ըստ 25րդ յօդուածոյ վարչական կազմակերպութեան օրինաց՝ վարչութեան հաւանութիւնն ստանալէ յետոյ կը գործադրէ:

Վիտողութիւն չլինիր:

Յօդ. 11. Իւրաքանչիւր Թաղ. Ժողովարտի, ամեն սահմանադրական տարեգլխին՝ որ ի ՎՄայիս մատուցանել առ կեդրոնական վարչութիւնն մի համարատուութեան տեղեկագիր, որ պէտք է

պարունակէ Թաղ. Ժողովոյ պաշտօնին ու պարտաւորութեան մէն մի մասին վերաբերեալ տեղեկութիւններն:

Կեդրոնական վարչութիւնն Ազգ. Ժողովոյ կը ներկայէ անոնց հաւաքածոյն, ամփոփմամբ, և ի հարկին նոյնութեամբ:

Վիտողութիւն չլինիր:

Յօդ. 12. Թաղ. Ժողովը՝ կեդր. վարչութեան հաստատեալ ընդհանուր կանոնագրի մը համաձայն՝ կը վարեն իրենց պաշտօնն:

Վիտողութիւն չլինիր:

Յօդ. 13. Թաղական Խորհուրդը կը բաղկանայ հինգ անդամներէ, որոց իւրաքանչիւրն՝ ըստ իւր յանձնառութեան՝ հետեւեալ ճիւղերէն միոյն կը յատկանայ, և նորա անօրինումն ու հսկողութիւնը կստանանէ:

1. Ատենապետութիւն,
2. Ատենադպրութիւն,
3. Եկեղեցականութիւն,
4. Հոգաբարձութիւն,
5. Փանձապետութիւն:

Փոքր թաղերու մէջ այս պաշտօնէութեանց երկուքը մէկ անձի կրնան յանձնուիլ, որով Թաղ. Խորհուրդն երեք անդամէ կը կազմուի: Բայց Ատենապետութիւնն ուրիշ պաշտօնի, և Ե-

կեղեցականութիւն ու Փանձապետութիւնն իրարու հետ չեն կրնար միանալ:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — 13րդ յօդուածին վերջին սարբերութեան մասին հարցում մ'ունիմ, այն է թէ ինչո՞ւ Եկեղեցականութիւնը Փանձապետութեան հետ չը կրնար միանալ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Շատ սարգ է աւելաց, որովհետեւ Եկեղեցական անհաշիւ տասկ պիտի հաւարէ և Փանձապետը պիտի պահէ զայն. այդ երկու պաշտօնն մէկ անձի վրայ պէտք չէ թողումք, որպէս զի գօնրօյի սկզբունքը կարենանք պահել: Փանձապետը ըստ իր եկած հասոյթները պահողն է, իսկ Եկեղեցականն եկեղեցոյն հասոյթից հաւարողը: Փաղով ատենապետութեան, այս պաշտօնին բնութիւնը շնորհ բնու ուրիշ պաշտօնի հետ միանալ: Ուստի փոքր թաղերու մէջ Թաղական Խորհուրդները շատ շատ երեք հոգիէ պիտի բաղկանան, այսինքն Ատենապետէ մը, Փանձապետէ մը և Եկեղեցականէ մը. ասով 5 թիւը 3 ի կը վերածուի, միւս երկու պաշտօններէն իւրաքանչիւրը Եկեղեցականութեան կամ Փանձապետութեան միացնելով:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Կարծեմ կրթական օրինաց ծրագիրն ալ հոգաբարձութեան համար պիտի տրամադրէ որ Հոգաբարձուն իրաւունք ունենայ զպրոցական թոշակներն ու հասոյթներն գանձելու: Եկեղեցական իւր ճիւղին հասոյթներն ունի, զոր պիտի թափէ գանձանակին մէջ, բայց Հոգաբարձուն ալ ըստ կրթական օրինաց զպրոցական հասոյթները պիտի հաւարէ: Եթէ Տեղեկարեր էֆէնտինն ստուած բացատրութիւնները միայն անհաշիւ տասկի մասին է, ըսելիք չունիմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս, անհայտ հասցիները գտնարդի ներքև գնելու համար է:

ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՖ. — Չեմք գիտեր թէ այս օրէնքը գործադրելի պիտի լինի արդեօք. մինչև հիմայ Քաղսկան Խորհուրդները մինչդեռ 9, 10 և 12 անգամ ունէին, կը տեսնեմք այժմ որ այդ թիւը մէկէն ի մէկ 5 ի իջած է, և ծրագրոյն 19րդ յօդուածը կըսէ. « խորհրանչիւր պաշտօնեաց զէթ երկու օրը մի անգամ՝ խոր պաշտօնին զըլիւր կը գտնուի, և խոր ճիւղին վերաբերեալ խնդիրները կը տընորինէ: » Ըսել է՝ արդէն պաշտօնեաց մը խոր ժամանակին գրեթէ կէսը ազգային գործոց պիտի զօրէնէ. ստով Քաղսկան Խորհրդոց անդամաց բնոր շատ պիտի ծանրանայ և թերևս գործերն երեսի վրայ պիտիմնան: Ասկէ առաջ Քաղ. Խորհր. բազմաթիւ անդամներէ կը բաղկանային, որք շատ անգամ խորտու պաշտօնն ալ կը կատարէին, և ստով թաղին գործերը կը տեսնուէին. խոկ հիմայ որ թէ անդամոց թիւը նուազած է և թէ իրենց պաշտօնը ծանրացած է, կարծեմ թէ շատ գործեր երեսի վրայ պիտի մնան: Օրինակի համար, երբ որ ստեղծագործը բացակայ գտնուի և այն օրը նորա պաշտօնին յոտուկ գործ մը պատահի, միւս պաշտօնեաց պիտի չը կրնան նորա գործը տեսնել. այս տեսակ գործերը սիրով և միաբանութեամբ յառաջ կերթան. եթէ դանձապետը, օրինակի համար, ևս անտուկէն զոտ ուրիշ բանի չեմ խառնուիր ըսէ, եթէ այսպէս մտածեն նաև միւս պաշտօնեացները, տարակոյս չկայ որ յայնժամ գործերը չտփէն աւելի պիտի ծանրանան: Յայտնի է թէ անհասարար պատասխանատու լինելու ուրիշ է, հասարարու պատասխանատու լինելն ուրիշ է: Եթէ Ատենապետը շատ զբաղած լինի և քանի մը մարդիկ միանգամայն գործ ունենան անոր հետ, չը պիտի կրնայ իր բոլոր գործերուն հասնիլ, քանի որ իր ընկերները չը պիտի աշխատակցին իրեն: Եւ ևս կը ցուցնի որ շատ թաղերու մէջ խիտա քիչ մար-

դիկ պիտի գտնուին այսուհետև այսպիսի ծանր պաշտօն մը իրենց վրայ տանող: Մենք մեր հիմակուան գտնուած վիճակը բնեմք. ևս շատերը գիտեմ որ արդի վիճակին մէջ խոկ պաշտօն չեն ընդունիր. սակէ վերջ բոլորովին չը պիտի ընդունին: Մենք ստիպելու զօրութիւն չունիմք, մինչև հիմայ ազաչելով պաշտօնը, շահելով շոյելով պաշտօն կուտայինք թողականներուն, և անոնք ալ գործն հաւարար կը կատարէին. խոկ հիմայ պաշտօնները մէկ մէկ անձի վրայ պիտի կեդրոնանան և շատ պիտի դժուարանան: Քանի տարի է զէշ աղեկ կերթանք նախկին դրութեամբ, թէև շատ պակասութիւններ տեղի կուենեային, սակայն տեսնենք թէ յանցանքը Քաղսկանոց կը վերաբերէր: Վերջապէս սա կուղեմ ըսել որ, օրինակի համար, Ստամբուլի պէս մեծ թաղի մը Քաղսկան Խորհրդոյն համար հինգ անձ չը բուէր, և ևս անձնական փորձառութեամբ կըսեմ այս խօսքերը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկարեր). Ընչ որ Խորասանձեան Ալիբաթն էֆէնտին ըսաւ, արհայանողական դրութեան վրայ հիմնելով ըսաւ. խոր խօսքերէն սա կը հետեւէր թէ՝ հաղիւ ազգը ստիպեցաւ ժողովներով, հոգարարձութիւններով ազգային պաշտօններ վարել, սակէ վերջն ալ շարունակեմք այս դրութիւնը, ստով պաշտօնեաց բան կուտանին և ազգային պաշտօններու համար մարդիկ կը պատրաստուին:

Այդ դրութիւնը կրնայ իր օգուտներն ունենալ, բայց եթէ անոր օգտակար հանգամանքներն ստուգուած ըլլային, փորձը հակասակ արդիւնք չպիտի տար ազգային գործոց մէջ. նախ որ ժողովական դրութեամբ իրական պատասխանատուութիւն չկար, երկրորդ որ գործերու կարող ժողովականք բացակայ կամ անհմտա ժողովականաց առջև կը կաշկանդուէին և կը մնային, և այս վիճակին համար կը տուածէր ազգը:

Միւս կողմէն մեր բաղադրական կայութիւնն ալ թող չէր տար որ վատահոթիւն ունենայինք մէկ անձի կամ պաշտօնէի ազգային գործ յանձնել անկէ համար աննելու իրաւամբ: Սակայն ժամանակն այժմ ամեն բան փոխեց և հետզհետէ փոխելու վրայ է. այժմեան քաղաքական և ազգային կայութիւնն իր հարկ կը դնէ մեր վրայ պատասխանատու պաշտօնէութեան դրութիւնն ընդունիլ և գործել, խորհրանչիւր պաշտօնեաց պէտք է զխոնոց թէ իր յանձն առած գործին աճողջին համար պատասխանատու է, և ըստ այնմ պէտք է գործէ: Այս դրութեան վրայ հիմնեց Ազգ. Ժողովս վարչական օրէնքը. նոյն դրութեան վրայ բերաւ Ատենապետաց դիւանն և թաղային օրինոց ծրագիրը:

Ես չեմ հասկնար թէ Քաղսկան Խորհրդոց մը համար հինգ հոգին ինչո՞ւ քիչ պիտի լինի. մտածեցէ՛ք անգամ մը. այսօր 3-4 միլիոն ազգի մը գործերը Պատրիարքարանի մէջ՝ փոխանակ 50-60 մարդու՝ 5-6 հոգի կրնան տեսնել, միթէ 4-5 հոգի չեն բուէր նոյն խոկ ամենէն բազմաթիւ թաղերու համար:

Գաղով այն կէտին թէ երբ Քաղ. Խորհրդոց անդամներէն մին, օրինակի համար Ատենապետը, հիւանդութեան կամ ճանապարհորդութեան պատճառաւ բացակայ գտնուի, նախ պաշտօնն ո՞վ պիտի կատարէ. ստիպեց նախատեսուած է արդէն 12րդ յօդուածով, որ կը տրամադրէ թէ Քաղ. Ժողովը ընդհանար կանոնադիր մը պիտի ունենան, այդ կանոնադիրն այդպիսի դիտողութեանց կը պատասխանէ և հետզհետէ գործնական դրութիւն մը կը հաստատէ թաղերու մէջ:

Ես կը խնդրեմ Խորասանձեան էֆէնտին որ չընդդիմանայ այս դրութեան, վասն զի նորա օգուտներն ակներև են. մինչև հիմայ ուրիշ ուղղութեան հետեւեցանք, գործը չը բաւեց. բայց կը յուսամք որ այս նոր դրութեամբ գործերն ուրիշ կերպարանք պիտի անտեսն: Մինչև ցարգ պատասխանատուութիւնն բարս-

յական էր, խոկ ասկէ վերջ նիւթական պիտի լինի: Ժամանակը փոխուած է հիմայ. ո՞վ որ պաշտօն կընդունի, պէտք է գործէ, եթէ ոչ՝ պէտք է քաշուի աստարէզէն:

ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՖ. — Փափաղեան էֆէնտի Վարչութիւնն օրինակ բերաւ մեզ. բայց Վարչութիւնն և Քաղսկան Խորհուրդը տարբեր վիճակներու մէջ կը գտնուին: Վարչութիւնը բաւական գորութիւն ունի և կրնայ գործ քաղցնել. բայց Քաղ. Խորհրդոց համար այսպէս չէ: Այս նոր օրէնքը որ պիտի քաղց կըսէք, զիտէ՞ք որչափ ծանր բեռ մը տուած է Քաղ. Խորհրդոց վրայ: Օրինակները պակաս չեն: Ինչպէս զիտէք, ըստ Վարչական նոր կազմակերպութեան օրինոց, ամեն թաղի մէջ հաշտարար գատարաններ պիտի հաստատուէին, մեր թաղին մէջ ալ այդ դատարանը կազմելու համար, իրաւ կանչուեցանք բանի մը հոգի, բայց սասնք՝ որ պարզ մարդիկներ էին՝ սա ծանր գործ է մենք չենք կրնար ընել ըսելով մէկզի քաղցեցան. և արդարև ի՞նչպէս պիտի կրնային այդ պաշտօնը կատարել, բանի որ օրէնսգէտ չեն և այդ պաշտօնին համար պէտք եղած յատկութիւնը չունին: Փափաղեան էֆէնտի կըսէ թէ այդ դրութիւնը Վարչութեան համար ընդունած էմք, թաղերու համար ալ ընդունիմք: Բայց Վարչութիւնն այս դրութեամբ թող չըջան մը բոլորէ, մենք ալ տեսնեմք, փորձեմք թէ լու՞ւ պիտի լինի այս թէ ոչ. թաղային օրէնքը պիտի բարեփոխեմք ըսելով հինը շարեմէք և դժուարագործադրելի դրութիւն մը չը հաստատենք. գործը բոլորովին տակն ու վրայ չընենք. մէկ տարուան չըջանի մը մէջ նոր Վարչութեան վիճակը փորձեմք, այնուհետև ըստ այնմ բարեփոխութիւն ընենք: Հիմայ Վարչութեանն սա Քաղ. Խորհուրդս ուղեալ նամակներն, հրահանգներն աւելի խիտա, աւելի ազգու կը գրուին կոր. ո՞վ յանձն կատու այդ դժուար գործերն միայնակ տեսնել:

Ես փոփոխեան էֆէնտի աս խօսքը միայն կընդունիմ թէ պատասխանատուութիւնը նախ թահան պէտք է լինի : Արիշ ազգաց մէջ, երբ նոր օրէնք մը պիտի դրուի, յանկարծ չեն դնէր . նախ փորձառու անձեր կը հրաւիրուին, անոնց խորհուրդը կը հարցուի, որ պէս զի կարելի լինի լու օրէնք մը խորհուրդէ : Գիտէք որ այս ծրագիրը Ատենապետաց դիւանը բերաւ . բայց ատոնց մէջ շատեր չկան որ թաղ խորհրդոց անդամ եղած և շոշափելի կերպով տեսած լինին թաղային գործերը : Իրաւ այս ծրագիրը բերողները խեղացի և ազգասէր մարդիկ են, բայց կարծեմ թէ միայն տեսական կերպով խորհարած են զայն : Ատենապետ թէ կրթական ծրագիրն ալ մի և նոյն վիճակն ունենայ, գործերը շօտենք ըսելով հիմէն չը խախտենք . ինչ որ գործադրելի է, այն ընենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խորատանձեան էֆէնտի բրած գիտողութիւններէն զլիսաւորարար աս կը հասկցուի թէ թաղային Ծրինաց ծրագրոյն այն տրամադրութիւնը որ հինը կը փոխեն, շատ խիստ են . և թէ 13րդ յօդուածին թաղական խորհրդոց անդամաց համար նշանակած 5 թիւը շատ է : Աստի կը խնդրեմ իրմէ որ համի ըսել թէ ինչ կառաջարկէ ինքն այս կէտերուն համար :

ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՅ. — Կառաջարկեմ թաղական խորհրդականաց համար այնչափ խտտապահանջ չըլլալ, իսկ թուոյն գալով մինչև ցարդ քանի հոգիէ որ կը բաղկանային թաղ խորհուրդը, միննոյն թիւերը պահել :

ԵՆՈՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Թաղային ծրագրին գործադրելիութեան մասին Ալիքսան էֆէնտի բրած գիտողութեանց մէջ խիստ օրինաւոր կէտեր կան զոր անկարելի է ժխտել . մանաւանդ 13րդ յօդուածին վրայ ըրած գիտողութեանց մէջ : Աստի ես կը կրկնեմ այն ա-

ռաջարկութիւնը թէ թաղ խորհրդոց անդամաց 5 թիւը պէտք չէ պահուի, այլ ըստի թէ խորհրդանշիւր թաղ խորհուրդ իւր թաղական խորհրդոց անդամաց թիւն ինք օրոշէ, կամ այսպէս ընելու է և կամ իրաւունք տալու է թաղ խորհրդոց որ խորհրդանշիւր պաշտօնեաց իւր պաշտօնին նկատմամբ ի հարկին կարենայ իրեն օգնականներ ընտրել, կամ աւելի լու ընկերակիցներ ընտրել, որովհետեւ կարելի է շատեր դժուարին ուրիշի մ'օգնականը կոչուելու սակայն ես կը կարծեմ թէ թաղականաց ընկերակիցներ տալէ աւելի աղէկ է սա պարբերութիւնը յաւելուլ . « թաղին կարեւորութեան համաձայն թաղ խորհուրդ իրենք կորոշեն թաղական խորհրդոց անդամաց թիւը » : Ասի աւելի բանաւոր և գործնական կը լինի : Եւ ըստ որում փորձը ցուցուցած է արդէն որ սա առաւելն 12 անձ կը բաւեն թաղ խորհրդոց համար, ուստի կրնայ ըսուիլ նաև թէ թաղ խորհրդոց անդամաց թիւը 12 էն աւելի չկրնար լինիլ :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Յ. ԷՅ. — Ես կառաջարկեմ որ այս օրէնքը չը փոխուի . սակայն բացառութիւններ ըլլան, և այս բացառութիւններն ալ մասնաւոր կանոնադրին մէջ նշանակուելու են :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — [Տեղեկարար] Եռօտիքեան էֆէնտի մէջ բերած մանրամասնութիւնները կանոնադրին մէջ պիտի մտնեն, որովհետեւ ատոնք փորձի պէտք ունին և օրէնքին երկրորդական մասերը կը կաղմեն : Արդէն այդ կանոնադրը Աւարչութիւնը պիտի չինէ : Պաշտոյ մէջ ոյժմ քանի մը թաղեր կան միայն որ 12 հոգիէ բաղկացեալ թաղ խորհուրդ ունին, մնացեալները 5—7—9 հոգիներէ կը բաղկանան և անոնք ալ կզգան թէ այդ թիւը բիշ չէ : Արդէն թաղը ներկայացնողը թաղական խորհուրդը չպիտի լինի, այլ թաղ խորհուրդը : Քանի որ այս վերջինը 25 հոգիէ կը

բաղկանայ, թաղական խորհրդոց համար 5 թիւը բիշ չէ : 5 թիւը որոշուած է մանաւանդ այն պատճառաւ որ փոքր թաղերու համար այդ թիւը մեծ չերևայ : Աստի այն յօդուածը պէտք է նոյնութեամբ ընդունիմք :

ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՅ. — Փորձառութեամբ շինուած չէ այդ յօդուածը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Փորձառութեամբ և շատ աւելի փորձառութեամբ, չը կարծէք թէ այս ծրագիրը հարեանցի դիտողութիւններով շինուած է : Ամեն վիճակէ անձանց խորհրդակցութեամբը և փորձառութեամբը, և զանազան ժամանակներու մէջ զանազան թաղերու մէջ երևան ելած վէճերը ի նկատ առնելով յօրինուած է այս ծրագիրը :

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻՋՄԻՐԼԵԱՆ. — Երբ նկատողութեան տանու՞մք միանգամ թաղական խորհրդոց անցեալ կացութիւնը, կրնամք հասկընալ թէ 5 հոգիով կարելի է թաղի մը գործերն տեսնել : Ինչ էին մինչև ցարդ թաղ խորհուրդը . բացարձակապէս կըսեմ թէ զատական ատենաներ : Կը տեսնես մըքքարը կուգայ իլմոխապիւր մը կուգէ . գրողքին գրել կուտան, կը կրթեն, ըմպու գնաց, ուրիշ բան չկար : Գանձապետը դժուարութիւններ կը բաշէր մինչև հիմայ, զի շատ թաղեր ելմտացոյց չունէին . երբ ելմտացոյց չկայ, ի հարկէ գրամական գործողութիւնները կը դժուարանան : Բայց ինչո՞ւ թաղ խորհրդոց համար 5 հոգի բաւական չը լինին . արդէն գրեթէ ամեն թաղի մէջ 5 էն աւելի աշխատող անձինք չեն տեսնուիր : Նախկին գրութեան մէջ խորհրդանշիւր թաղականին պատասխանատուութիւնը որոշ գծուած չըլլալուն համար, պաշտօններն ալ լու չեն կատարուիր : Օրինակի համար՝ Ատենապետիներ ունին ամեն թաղ խորհուրդները, բայց ո՞ր թաղ խորհրդոց մէջ կանոնաւոր արձանագրութիւն կայ . Պատրիարք-

քարան եկած գրերը կը տեսնենք, օրինաւոր գրութիւն մը հաղիւ կը տեսնուի, ըսել է խընդիրը թաղ խորհրդոց անդամաց շատութեան վրայ չէ : Ըստ իս, այս հինգ հոգիին մէջ մը ճարեալ մէկը պէտք է որ հանապազօրեաց հրահրութիւն ընէ թաղին գործոցը, եթէ ո՞չ հարկ պիտի լինի վճարեալ ձեռնհաս պաշտօնեաց մ'ընտրել որ կարող լինի ծննդեան, մը կըլրտութեան, մահուան եւն. դէպքերը կանոնաւորապէս արձանագրել և միւս գործերն ալ երեսի վրայ չթողուլ : Արդ քանի որ զատաբանները զատուած են, քանի որ զայրոցներն ալ առանձին հագարարութիւններու պիտի յանձնուին և ելմտացոյցեր պիտի սահմանուին, ամեն գործ թեթեւցած է, և 5 հոգին բաւական և շատ խոկ է : Կը մնայ միայն Ատենապետի պաշտօնը, այս ալ դիւրին է, քանի որ խորհրդանշիւր պաշտօնեաց իւր ճիւղին նկատմամբ ուղղակի պիտի կրնայ բանակցիլ Պատրիարքարանի հետ : Թէպէտ ես Ատենապետաց գիտնին մէջ գտնուելու պատիւը չունիմ, բայց այնպէս կը հասկնամ որ այս մտօք խմբագրած են ծրագիրը : Հետեւապէս կը կարծեմ թէ 5 հոգին բաւական և շատ խոկ է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Յարաբերութեան խնդիրը ատենապետին պաշտօնին մէջ է որուն վրայ վերջը պիտի խօսիմ . իսկ միւս կէտերուն վրայ Խզիլլեան Արքազան շատ լու խտեցաւ . արդէն բոլոր պաշտօնները թեթեւցած են, ուստի կը խնդրեմ որ բուէի կենթարկէք յօդուածը :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, քուէ՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Լսեցիք որ վիճարանութիւնը բաւական համարելով բուէ կը ձայնեն : Եւ իրօք ամեն կարծիք պէտք եղածին չափ բացատրուեցան և պաշտարանուեցան . այլ ևս պէտք է ժողովն իր որոշումը տայ ծրագրի 13րդ յօդուածին վրայ :

Բայց ասկից յառաջ Զրոյնն ակեալ նա խընթաց յօղուածները բուէի պիտի դնեմ : Եւ ըստ որում վերջէն հասնող երեսօտիտաններ գտնուեցան , անոնց ծանօթութիւն տալու համար պէտք է ըսեմ որ երեսօտիտանը համաձայնեցան Զրոյ յօղուածին 40% ի տրամադրութիւնըն անօտօտիտա պահելու , պայմանաւ որ՝ պարբերութիւն մ'աւելնայ ծրագրին մասնաւոր տրամադրութեանց մէջ՝ սա իմաստով թէ այդ 40% ի տրամադրութիւնն առ ժամանակեաց է , ցհաստատութիւն կրթական Օրինաց : Իսկ յաջորդ 10 , 11 և 12րդ յօղուածներն առանց դիտողութեան անցան :

Այս անօտօտիտան ընելով Ատենապետ էֆէնտին ծրագրին 9, 10, 11 և 12րդ յօղուածները բուէի դրաւ , որք 26 բուէով ԸՆԳՈՒՆ ՈՒՆՅԱՆ Ժողովէն նոյնութեամբ առանց ընդդիմախօսի . 40% ին առ ժամանակեաց լինելուն համար՝ մասնաւոր տրամադրութեանց մէջ պարբերութիւն մը յաւելլու պայմանաւ :

Յետոյ 13րդ յօղուածին գաղով՝ ըստ որում անոր մէջ նշանակեալ 5 թիւն անբաւական համարողներ գտնուեցան և զայն բարեփոխել առաջարկեցին , բարեփոխուելն ակեալ բուէի ենթարկեց զայն Ատենապետ էֆէնտին . բայց կրկին փորձով տեսնուեցաւ որ բարեփոխուել 3 բուէ ունէր միայն , իսկ ծրագրին յօղուածը միայն 19 բուէ :

Ուստի Ատենապետ էֆէնտին բուէից այս արդիւնքը ծանուցանելով յայտարարեց թէ որոշումն ըստ օրինի՝ չեղեալ էր , և թէ այսօրուան համար հարկ կըլլար կամ օրակարգով աշխատելէ գաղբիլ և կամ 13րդ յօղուածն առ կախ թողլով միւս յօղուածներուն անցնիլ , յուսալով որ տակաւին երեսօտիտանաց թիւը կաւելնայ և այն տառն 13րդ յօղուածին համար ալ օրինական մեծամասնութեան համաձայնութիւն կը գոյանայ :

Տ. ԻՈՐԵՆ ԵՊԻՍ. ՆԱՐ-ՉԷՑ. — Ես ալ

ձեռնպահ գտնուեցայ այս բուէարկութեան մէջ . որովհետեւ այսպիսի մանրամասնութիւնք կանոնադրին մէջ կրնան անցնիլ , ինչ հարկ կայ հաս որոշումներ ընել թուոյ մասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բայց չը կրցի ըմբռնել թէ լինն ձեռնպահութեամբ ինչ ելքի կարելի էր հասնիլ : Այսչափ վիճարմութենէ յետոյ պէտք էր 5 թիւը կամ բաւական համարել կամ անբաւական . եթէ անբաւական զնուէր , այն տառն սահմանելի թիւը նկատուի՞նք անօտօտիտա պիտի առնուինք և անոր վրայ պիտի խորհիմք . թերեւս ժողովը՝ բարեփոխութիւնն սկզբամբ ընդունելէ յետոյ՝ Ատենապետաց Դիւանին կը վերադարձնէր յօղուածը , թիւը սահմանելու համար : Իսկ արդ կարծիրներն երկուքի բաժնուեցան , և կրկին բուէարկութենէ ետե ոչ մին՝ ոչ միւսն օրինական թիւ չունեցան : Բայց եթէ ձեռնպահ մնացողներն ալ բուէարկէին , թերեւս օրինական մեծամասնութիւն գոյանար որոշում տալու համար : Իսկ արդ պէտք է համաձայնիր կամ օրակարգով դրաղելէ դաղրելու այսօր , և կամ 14րդ յօղուածին անցնելու :

Բազում նատարաններէ բուէարկութեան կրկնումը կը խնդրեն , համաձայնելու տրամադրութիւն յայտնելով :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ալ կրկնեցի Խորասանեան էֆէնտինի առաջարկութիւնը . սակայն այժմ ուրիշ առաջարկութիւն մը կը նեմ : Կարծեմ թէ՛ ժողովը լաւ կընէ որ միայն զիստօր սկզբունքներն ի նկատի առնու և որոշէ , իսկ մանրամասնութիւնքն վարչութեան թողու , որպէս զի վարչութիւնն անոնց անգործադրելի կէտերը նկատողութեան առնելով՝ ըստ այնմ պատրաստէ թաղական օրինաց վերաբերեալ ընդհանուր կանոնադիրն ու բերէ ժողովիս :

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Մենք այնպէս զիտեմք որ այս ծրագրին եկած ժամանակ վարչութիւնը իւր կարծիքը տուած էր և գործադրելի գտած էր զայն : Ուստի այդ 13րդ յօղուածը անգործադրելի կը դանեն , և ասոր պատճառն այն է որ ընդհանրապէս Թաղ. Խորհրդոց անդամք չեն ուզեր պատասխանատու մնալ , չեն ուզեր որ իրենց վրայ հսկող մարմին մը գտնուի :

ԻՕՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՖ. — [Ընդմիջելով] Կը բողոքեմ այդ խօսքին դէմ , որովհետեւ ես ալ փորթիկ թաղի մը մէջ Թաղ. Խորհրդոց անդամակից ըլլալու պատիւն ունիմ , և իմ փորձառութեամբս էր որ առաջարկեցի Թաղ. Խորհրդոց անդամոց թիւը չը քիչցնել և իրենց վրայ շատ չձանրանալ , որպէս զի թաղականութիւն ընող մարդ գտնեմք :

Տ. Մ. ԵՊԻՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ. — [Ետեւանակելով] Ես ամենուն համար շքտի , ի հարկէ բացատրութիւններ կան : Միայն թէ՛ արդի Թաղական Խորհրդոց անդամներն ուրիշներէն աւելի պէտք էր գնահատելն այս ծրագրին առաւելութիւնները : Իսկ երբ կըսեն թէ ժողովն սկզբունքները որոշէ միայն և մանրամասնութիւնները վարչութեան թողու , որպէս զի անգործադրելի դատածները սրբագրէ , ևս այդպիսի բանի մը պէտք չեմ զգար : Օրէնքն այս ժողովէն կը բղխի և վարչութիւնը զայն գործադրելու պարտաւոր է : վարչութեան ընելիրը՝ ընդունուած օրէնքին չիմանց վրայ ընդհանուր կանոնադիր մը չիմեղ է , որպէս զի թէ ժողովուրդը և թէ թաղականները սովորին թէ ինչպէս պիտի վարուին ամեն պարագաներու մէջ , օրէնքին ուղւոյն համաձայն գործելու համար : Բայց միայն սկզբունքներն որոշելով , մընայեալը վարչութեան յանձնելը , Ատենապետաց Դիւանէն եկած ծրագրիքը ետ դարձնել կը նշանակէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ թէ նախընթաց նիստին մէջ՝ այս ծրագրին Թաղ. Խորհրդոց վերաբերեալ տրամադրութեանց մասին՝ Տեղեկարբեր էֆէնտինի տուած բացատրութիւնները թիւր մեկնութիւն մ'առած և Թաղ. Խորհրդականաց շատերուն դժգոհութիւն պատճառած են : Եւ ըստ որում վիճարմութեան ընթացքն այս կարծիքս կը զօրացնէ , հարկ կը տեսնեմ կարճ խօսքով պարզել Ձեզ այդ թիւրիմացումը :

Տեղեկարբեր էֆէնտին՝ Թաղային Ժողովոյ և Թաղական Խորհրդոց պաշտօններուն սահմանները բացատրելու միջոցին՝ ըսած էր թէ՛ Թաղ. Խորհրդականները պարզապէս պաշտօնեայներ են պատահեալ : Կերեւի թէ այս պաշտօնեայ բառը շատ հաճելի չէ թուեր Թաղ. Խորհրդոց անդամակից գտնուողներէն ոմանց , վասն զի կարծեր են թէ վճարեալ պաշտօնէի կարգը պիտի իջնեն Թաղ. Խորհրդականք առաջի Թաղային Ժողովոյ : Եւ այս պատճառաւ է թերեւս որ Թաղ. Խորհրդոց անդամոց թուոյն վրայ վիճարմանուած պահուն՝ երբ հինգ թիւը բաւական համարողներն իրենց կարծիքը պաշտպանելու համար Թաղ. Խորհրդոց գործերուն նոր դրութեամբ սահմանադրեալ լինելուն պատճառը յառաջ կը դնեն , իրենց խօսքը տարբեր տպագրութիւն կրնէ միւսներուն վրայ և համաձայնութիւնը կը դժուարացնէ : Բայց Տեղեկարբեր էֆէնտինն գործածած պաշտօնեայ բառն այն իմաստը չունէր , զոր վերընծայած են նմա : Երազիրը լաւ աչքէ անցնողը կը տեսնէ արդէն թէ սրչափ կարեւորութիւն տրուած է Թաղ. Խորհրդոց անդամոց խրաքանչխրոյն պաշտօններուն , և հետեւաբար ինչ ատիճանն ձեռնհասութիւն ունին նորա իրենց ճիւղին յատուկ գործանութեանց մէջ :

Այն դիրքը , զոր ծրագրին դրութիւնը կընծայէ Թաղ. Խորհրդականաց , անհամեմատ բարձր է սոցա արդի դիրքէն : Տեղեկարբեր էֆէնտինն այդ բացատրութեան ձեւն գործածած էր , որպէս զի բացայայտէ թէ՛ Թաղ. Խորհրդ-

զականներն այսուհետև խրաբայիւրն իւր ճիւղին մէջ պաշտօնէական դրութեամբ միայնակ գործելու իրաւասութիւն ունենալով, հարկ անհրաժեշտ էր որ թաղ. ժողովներն անոնց վրայ համարառութեան իրաւունք ունենային, և հետեւաբար թաղ. ժողովներն այդ համարառութիւնը կարենալ ի կիր առնելու պայմաններուն մէջ գտնուէին :

Այս թիւրիմացութիւնը պէտք էր պարզուիլ, վասն զի ներկայ ծրագիրը կրնայ շատ օգտակարութիւններ ունենալ, բայց այդ օգտակարութեան վրայ համադրման որչափ ընդհանրանայ, ծրագրին տրամադրութեանց կիրառութիւնն ալ նոյնչափ կը դիւրանայ, և համեմատաբար արդիւնաւոր կըլլայ :

Արիւշ կէտ մ'ալ կայ, որ նմանապէս պարզուելու պէտք ունի :

Վարչութեան Ատենապետ Եսաւոֆեան էֆէնտի մէկ խօսքը սխալ հասկացուցաւ, կարծեմ, Տ. Մատթէաս եպիսկոպոսի կողմանէ :

Վարչութիւնը պարտաւոր է գործադրել այն ամեն օրէնք, զոր այս ժողովը կը հաստատէ, և չէ կարող փոփոխել զանոնք : Բայց Վարչութիւնն իրաւունք մ'ունի, զոր միշտ կրնայ գործադրել : Երբ օրէնք մը տրուի իրեն գործադրելու համար, և ինքը անոր մէջ անգործադրելի կէտեր կամ բարեփոխման կարօտ տրամադրութիւններ նշմարէ, կուզայ ժողովին կրտսէ թէ՛ եթէ ինձ կը վերաբերի ասոր գործադրութեան հոգն ու պատասխանատուութիւնը, կառաջարկեմ որ այս ինչ կէտերը ստղէս բարեփոխէք : Վարչութիւնը միշտ կրնայ ըսել զայս, միայն թէ պարտաւոր է իւր ստաւարկած բարեփոխումը պատճառաբանելու : Ժողովն ալ կատարեալ ազատութիւն ունի՝ Վարչութեան պատճառաբանութիւնը լսելէ յետոյ՝ անոր ստաւարկութիւնն ընդունելու կամ մերժելու : Եսաւոֆեան էֆէնտի խօսքն այս իմաստով էր, և ուրիշ կերպ չէր կրնար լինել :

Այս բացատրութիւններէն յետոյ, որոց

հարկ տեսայ կարծեաց շփոթութիւնները պարզուելու համար, կը վերադառնամ 13րդ յօդուածին, որոց բուհարկութեան կրկին փորձերը թէպէտ ասորդիւն մնացին, և հետեւաբար Դիւանը զայն սա կախ թողլով յաջորդ յօդուածներուն անցնելու հարկ տեսաւ, սակայն ըստ որում շատեր կը պահանջէն որ միանգամ ևս փորձուի, և միարանելու տրամադրութիւն ցոյց կուտան, անգամ մ'ալ պիտի փորձեմ բուհարկութիւնը, յուսալով թէ այս անգամ ոչ որ ձեռնպահ պիտի մնայ և՛ թեր կամ դէմ՝ բուէին պիտի մասնակցի :

ՀԱՆԱՃԵԱՆ Բ. ԷՑ. — Ժամանակաւ ևս ալ թաղ. Խորհրդոյ անդամութիւն ըրած եմ և փորձով գիտեմ որ 5 թիւը շատ է, բիշ չէ : Մինչև ցարդ թէև թաղ. Խորհուրդը մինչև 12 անդամէ կը բաղկանային, բայց գործերը միշտ 3-4 անձանց ձեռք կը տեսնուէին. այս պատճառաւ Տեղեկարեր էֆէնտի բացատրութիւնները կընդունիմ և յօդուածը գործադրելի կը գտնեմ. ուստի կը խնդրեմ որ վերստին բուէի գրուի :

Հետեւաբար Ատենապետ էֆէնտին վերը ստին բուհարկութեան կենթարկէ 13րդ յօդուածը որ 2 ի դէմ 25 բուէով ԿԸՆԴՈՒՆՈՒԻ նոյնութեամբ :

Այս Ատենապետի էֆէնտին կը շարունակէ ընթեռնուլ յետագայ յօդուածներն .

Յօդ. 14. Թաղ. ժողովն՝ զաղանի բուէից բացարձակ առաւելութեամբ՝ մի պաշտօնեայ կընտրէ թաղ. Խորհրդոյ համար, և մնացեալ անդամոց ընտրութիւնն ու թաղ. Խորհրդոյ կազմութիւնն անոր կը յանձնէ :

Ընտրեալ պաշտօնեայն՝ իւր ձեռքն-

հաս ճիւղն ստանձնելով՝ միւս ճիւղերուն ձեռնհաս և յանձնառու անձինք կընտրէ, և թաղ. Խորհրդոյ անդամոց անուններն՝ խրաբանչիւրոյն պաշտօններովն հանդերձ՝ կը ծանուցանէ թաղ. ժողովին :

Դիտողութիւն չիկիր :

Յօդ. 15. Թաղ. ժողովոյ դիւանն՝ ընտրեալ թաղ. Խորհրդոյ անդամոց անուններն՝ իրենց պաշտօններով կը ծանուցանէ առ Վարչութիւնն :

Դիտողութիւն չիկիր :

Յօդ. 16. Թաղ. Խորհրդէն որ և է պատճառաւ պակասող պաշտօնէին տեղ մնացեալ անդամք ընտրութիւն կը կատարեն, և կը ծանուցանեն թաղ. ժողովին :

Դիտողութիւն չիկիր :

Յօդ. 17. Թաղ. Խորհրդոյ պաշտօնն երկու տարի կը տևէ, և իւր անդամները վերընտրելի են :

Դիտողութիւն չիկիր :

Յօդ. 18. Թաղ. ժողովը կարող է անվստահութեան բուէով՝ պաշտօնանկ ընել զթաղ. Խորհուրդն ամբողջ, կամ անոր որ և է անդամը :

Այս յօդուածին վրայ ալ դիտողութիւն չիկիր : Եւ ըստ որում յետագայ 19րդ յօդուածին վրայ խօսք կուզեն, Ատենապետ էֆէնտի բուէի կը դնէ 14, 15, 16, 17 և 18րդ յօդուածներն, զորս միաձայն ԿԸՆԴՈՒՆԻ ժողովն օրինական մեծամասնութեամբ :

Յետոյ Ատենապետի էֆէնտի կը շարունակէ ծրագրին ընթերցումը .

Յօդ. 19. Խրաբանչիւր պաշտօնեայ՝ գէթ երկու օրը միանգամ՝ իւր պաշտօնին գլուխը կը գտնուի, և իւր ճիւղին վերաբերեալ խնդիրները կը տնօրինէ :

Իսկ իւր ձեռնհասութենէն վեր դատած խնդրոց տնօրէնութիւնն ու պատասխանատուութիւնը՝ թաղ. Խորհրդոյ կը թողու :

Թաղ. Խորհուրդն ալ իւր ձեռնհասութենէն վեր դատած խնդրոց համար՝ կը դիմէ առ թաղ. ժողովն :

ԽՕՐԱՍՍԱՆՁԵԱՆ Ա. ԷՑ. — Եթէ խրաբանչիւր պաշտօնեայ՝ գէթ երկու օրն միանգամ՝ իւր պաշտօնին գլուխը գտնուելու ըստիպուի, գործը շատ կը դժուարանայ, ո՛վ կրնայ երկու օրն միանգամ անպատճառ թաղ. Խորհրդարան գտնուիլ. ասիկայ ամեն օրը սեղու պէս բան մ'է : Թերևս Հոգաբարձուն զպրօցին համար պէտք ունենայ ամեն օր գտնուելու, բայց զանձապետը և միւսները ի՞նչ պէտք ունին ամեն օր գալու : Մեր մեր թաղին մէջ սովորութիւն ըրած եմք իմուխապիլի, և այլ գործերը կիրակի օրերուն թողուլ, ամեն թաղ կրնայ այսպէս ընել : Ուստի եթէ կարելի է, չը կաշկանդեմք թաղ. Խորհրդոյ անդամները :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — [Տեղեկարեր] Իւրաքանչիւր պաշտօնեայ՝ գէթ երկու օրն մի անգամ իւր պաշտօնին գլուխը պիտի դանուի ըսելով՝ չը հասկցուիր թէ անպատճառ թաղ-խորհրդարանը պիտի գայ սարսէ սյդ պաշտօնեայն, այլ կը հանդիպի անգամ մը եկեղեցի, կամ հոն չգացած գործ ըլլալն ու չըլլալը կիմանայ, և ըստ այնմ եթէ գործ կայ կերթայ կը տեսնէ, եթէ ոչ՝ կանցնի իւր գործին կերթայ: Ուրիշ մտօք պէտք չէ հասկնալ սյդ յօդուածները:

ԻՕՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՖ. — Իրատ լաւ, ուրեմն չեմ սնդեր իմ դիտողութեանս վրայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ Խօրասանն էան էֆէնտի շոյնդեր իւր դիտողութեան վրայ, Ատենադպիր էֆէնտին կանցնի յաջորդ յօդուածին ընթերցման:

Ատենադպիր էֆէնտի կընթեանու:

Յօդ. 20. Այն խնդիրներն, որք մէկէն աւելի ճիւղերու միանգամայն կը վերաբերին, ձեռնհաս պաշտօնէից միաբան գործակցութեամբ կը տնօրինուին:

Գիտողութիւն չիմիր:

Յօդ. 21. Թաղ. Խորհուրդը գէթ շաքաթը միանգամ՝ նիստ կընէ և կը տնօրինէ օրակարգին խնդիրները. միանգամայն և կը տեղեկանայ իւրաքանչիւր պաշտօնէի առանձինն կատարած տնօրէնութեանց:

Գիտողութիւն չիմիր:

Յօդ. 22. Թաղական Խորհրդոյ անգամք պատասխանատու են առ թաղ. Ժողովն, մէն մի պաշտօնեայ՝ իւրեան յատուկ ճիւղին համար անհատաբար, իսկ հանրական խնդրոց համար՝ ամենքն հաւաքաբար:

Այս յօդուածին վրայ ալ ոչ որ դիտողութիւն կընէ: Բայց յետագայ 23րդ յօդուածին վրայ խօսք ուզուած ըլլալով, Ատենապետ էֆէնտի նախ Ժողովոյ բուէն կը խնդրէ նախընթաց 19, 20, 21 և սոյն 22րդ յօդուածներուն համար:

Ժողովն՝ օրինական մեծամասնութեամբ սոյն չորս յօդուածները կ'ընդունի միաձայն:

Ատենադպիր էֆէնտի կը շարունակէ:

Յօդ. 23. Թաղ. Խորհուրդն՝ ըստ կտակաց կանոնագրի՝ կտակարար թաղեցւոյն կամքը կիմանայ, ի ներկայութեան նորա խոստովանահօր և թաղին Գարողչին կամ գլխաւոր եկեղեցականին. և ըստ այնմ գէթ երեք օրինակ կտակագիր պատրաստել տալով, ստորագրել կուտայ զանոնք կտակարարին, նորա խոստովանահօր և ներկայ կղերակահանին, և ինքն հաստատելով՝ կը յղէ վարչութեան, ի վաւերացումն:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Այս 23րդ յօդուածին մէջ աւելորդ բառ մը կը տեսնեմ: Ա ի ներկայութեան Խոստովանահօր և Գարողչին կամ գլխաւոր եկեղեցականին ըսուած է: Մենք գլխաւոր եկեղեցական անունով պաշտօնեայ չունինք: Պէտք է ըսել՝ ի ներկայութեան Խոստովանահօր, Գարողչին կամ Աւագերէցին: Եւ արդէն այս բառերը գործածուած են ծրագրոյս 44րդ յօդուածին մէջ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — [Տեղեկարեր] Իւրաքանչիւր Մատթէոս Արքադանի դիտողութիւնը. Գարողչին կամ Աւագերէցուն պիտի ըլլայ, ինչպէս ըսուած է ծրագրին ուրիշ յօդուածներուն մէջ: Իսկ այս տեղ ընդօրինակութեան սխալ մ'եղած է, որ ուղղելի է:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտի բուէի կը զնէ 23րդ յօդուածն, անոր մէջ տեսնուած զլխաւոր եկեղեցականին բառերուն տեղ Աւագերէցուն բառը զնելու սրբազրութեամբ: Եւ Ժողովը 1 ի դէմ 24 բուէով զայն կ'ընդունի:

Ատենադպիր էֆէնտի կընթեանու:

Յօդ. 24. Թաղ. Խորհուրդն՝ որոնց կանոնագրին համաձայն պարտի իւր թաղին անչափահաս որոնց ստացուածքն ապահովել, մինչև նոցա յարբուեստ հասնելը:

ՀԱՒԱՃԵԱՆ Բ. ԷՖ. — Կը խնդրեմ Տեղերէր էֆէնտիին որ բացատրութիւն տայ թէ՛ այս 24րդ յօդուածին տրամադրութիւնը ամենուրեք համար պարտաւորիչ է, թէ՛ Թաղ. Խորհրդոյ դիմողներուն համար է միայն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — [Տեղեկարեր] Անչուշտ ամենքս ալ կը մտածեմք որ իբր շայ պարտաւոր եմք մեր թաղին որոնց պաշտպան կանգնել և նոցա դատարարակութեան հոգ տանել. ասիկայ ազգային կարեւոր խնդիր մ'է առ մենուս ուշադրութեան արժանի: Պէտք է յիշեմ հոս որ Մահմետ Նէտիմ բաշայի մեծ եւ պարբոսութեան օրով որոնց և կտակաց համար հրովարտակ մ'ելաւ և այս մասին Պատրիարքարանի կարծիքը խնդրուեցաւ. խնդիրն եկաւ Ազգ. Ժողովիս, որ Ապրօ և այլ էֆէնտիներէ յանձնարուեմք մը դրաւ և տեղեկագիր մը խոմբազրուելով մատուցուեցաւ կառավարութեան:

Այն ժամանակ ելած Ֆերմանին մէջ ընդունուած և ազգային իրաւունք մ'եղած է թէ՛ ուր որ Ազգ. որոնց վրայ ձեռք դնէ, հոն գասեմը մտնելու իրաւունք չունենար, բայց ուր որ Ազգ. անտարրեր կը գտնուի, հոն գասեմը կը մտնէ: Այս կէտին Ատենապետաց դիւանը ուշադրութիւն ըրած և ըստ այնմ յօդուած է սոյս յօդուածը: Բայց թէ Ազգ. ինչ կերպով որոնց իրաւանց պաշտպանութիւնն իր վրայ պիտի առնու. ասի պիտի որոնուի մասնաւոր կանոնագրի մը մէջ որ պիտի խմբագրուի Տէրութեան օրինաց համաձայն: Ուստի կրնաք այս յօդուածը նոյնութեամբ ընդունիլ:

ԻՕՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՖ. — Իրաւ է որ հոս այսպիսի յօդուած մը գտնուելէն փնաս մը չեկներ, բայց պիտի կրնան գտնուիլ որոնց այնպիսի պաշտպաններ, որ կասկածելի առնելիքներ ունենալով անոնց ծնողաց վրայ, այս յօդուածը իրենց զէնք պիտի ընեն և Թաղ. Խորհրդոյ դիմելով, խնդիր պիտի յարուցանեն, որովհետեւ անոնք աւելի իրենց շահերը պիտի սերտեն այս ծրագրին մէջ քան որրինը: Ուստի կըսեմ որ եթէ Թաղ. Խորհուրդք այս խնդրոյն պիտի միջամտեն, այդ մասին շինուելիք կանոնագրին մէջ պէտք եղած զօրութիւնը տալու է անոնց, որ կարող ըլլան որոնց իրաւունքը պաշտպանելու, ապա թէ ոչ, երբէք միջամտելու չեն: Որովհետեւ՝ օրինակներ պակաս չեն որ ըստ Մահմետ Նէտիմ փաշայի օրինաց՝ հիմայ շատերը ննջեցեալ պատահած ժամանակ խառնմի պէտք չունինք կըսեն, բայց Թաղ. Խորհրդոյ ալ չեն դիմեր, և այսպէս որրին իրաւունքն ալ կուտեն. եթէ այս յօդուածը տեսնելով՝ ասիէ կտքը պիտի դիմեն Թաղ. Խորհրդոյ, պէտք է որ Թաղ. Խորհուրդներն ամենայն զօրութեամբ գործադրեն այս յօդուածը, և կամ երբէք չը միջամտեն և Ազգին վրայ մեծ պատասխանատուութիւն մը չհրաւիրեն, վասն զի որոնց իրաւունքն ապահովելը շատ ծանր բան է:

ՊԵՏԻՐԵԱՆ Ա. ԷՖ. — Յօդուածին մէջ մինչև յարբուսն հասնելն ըստած է . մինչև բանի տարի հասնելու է ասիկայ, պէտք է որոշել զայս :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — [Տեղեկարար] Շատ իրաւացի է Պէշկերեան էֆէնտիի դիտողութիւնը . յարբուսն հասնելը Հայերէն ընդունի մէջ ուրիշ բան կը նշանակէ : Հաստատութիւնն ուրիշ բան . ուստի կրնանք զայս իբր խմբագրական սրբազրութիւն փոխել և ջախանասութիւն բառը գործածել : Բայց թէ ո՞ր տարիքը չափահասութեան տարիք պիտի նկատուի, անշուտ Տէրութեան օրինաց պիտի գիտնմք, և ի՞նչ տարիք որ Տէրութիւնն ընդունած է, մեր ալ այն տարիքը պիտի ընդունինք : Բայց Տէրութիւնը երկու օրէնք ունի, մին շէրիքն, միւսը ճիզամը . առաջինը իբր չափահասութեան տարիք՝ 15 ը կընդունի, իսկ երկրորդը 21 ը կընդունի . մեզ վերաբերածը այս վերջինն է, և մեք զայն պիտի ընդունինք : Ուստի յօդուածին խմբագրութեան համար, կառավարկեմ որ « մինչև նոցա օրինական չափահասութիւնն » ըսուի :

Գաղով Խորասանճեան էֆէնտիի յարուցած խնդրոյն, կրտսեմ թէ՛ երբ Թաղ. Խորհրդոյ այս օրինակ խնդիրներ ներկայանան, պէտք է ստանձնէ զանոնք, և ուշադրութիւն ըրէր որ յօդուածին մէջ Թաղ. Խորհուրդը պարտի ըստած է և ոչ թէ կրնայ : Փորձով կը տեսնէր որ երբ Թաղ. Խորհուրդը միջամտէ, զասեմը զորս կընէ : Իսկ թէ ի՞նչպէս ընելու է որ Թաղ. Խորհրդոյ վրայ անօգուտ գրաւուիներ շահերան, ասիկայ պիտի նշանակուի կանոնագրութեան մէջ զոր Վարչութիւնը պիտի խմբագրէ :

ՀԱՆԱՋԵԱՆ Բ. ԷՖ. — Թաղ. Խորհուրդը պարտաւոր պիտի լինի՞ որոյ ստացուածքն սպառնալիք թէ ո՛չ, այս միայն հարցուցի ևս : Հիմա կրնն թէ Թաղ. Խորհուրդը պարտաւոր

պիտի լինի, բայց ևս կրտսեմ թէ չը պիտի կըրնայ կատարել իբր այս սպարտաւորութիւնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Գաւառները զեռ շատ դատուորներ օրէնքը գիտնալով հանդերձ թէ Քրիստոնէից վրայ իրաւունք չունին, որոյ իրաւանց կը միջամտեն : Այս յօդուածը կրնայ այս անտեղութեանց առաջին տանուլ :

ՆՈՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՖ. — Տէրութիւնը Մահմուտ Նէտիմ վաչայի օրով հաստատած օրինոր՝ Քրիստոնէից մեծ արտօնութիւն մը տրւած եղաւ . սակայն ասիկայ անչափահաս որոշոյ համար աղէ՞կ եղաւ թէ ոչ, այս ալ ուրիշ խնդիր մ'է : Սա գիտեմ որ առ այժմ որքին վիճակն աւելի գէշ է, վասն զի այդ օրէնքը սափաւոր տուաւ որ շատեր որքին ստացուածքն ո՛չ զասեմին գրել կուտան այժմ և ո՛չ Աղգին, և ասով որքին իրաւունքը չսպառնալուի : Ուստի կաղաչեմ որ կանոնագիրը կարելի եղածին շտի շուտով խմբագրուի, և ամեն մանրամասնութիւն անոր մէջ նշանակուի, որպէս զի Թաղ. Խորհուրդը զայն իրենց ձեռքն ունենան և ըստ այնմ վարուին :

ՏՕԲԹ. ԵՒՇՄԱՆԵԱՆ ԷՖ. — Խորասանճեան էֆէնտի ըսաւ թէ Մահմուտ Նէտիմ վաչայի օրով հաստատուած օրէնքը աւելի վընասակար եղաւ մեզ բան թէ օգտակար : Այս խօսքին բացատրութիւնը կը խնդրեմ իրմէն :

ՆՈՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՖ. — Գիտէ՞ք, թէ ի՞նչ էր այս օրինաց չրատարակման սկզբնապատճառն : Ասից մէջ երբ մէկը վախճանէր, զատրն կերթար անոր տան մէջ եղած բոլոր ստացուածքը կը կնքէր : Եթէ տանը մէջ զըտնուածներն մեռնողինը չէին ամբողջ, տան մարդիկը սպարտաւոր էին սպառնացանել զայն, և շատ անգամ ալ կատարուէին երզում ընել սպառնացանելու համար : Եթէ ժառանգորդը 40—50 տարու ալ լինէր, զատրն զարձեալ

կուգար զալեմ հարձք առնելու համար : Մահմուտ վաչայի օրով զանգաւաներ եղան այս բաներուն համար . այն աստն հրովարտակ մ'եղաւ որ կըսէր թէ՛ մինչև որ մեռնողին ընտանեաց կողմէն չը կոչուի զատրն կամ զասեմը, նորս ստացուածքը չը պիտի գրուի : Բայց հետեւանքն ի՞նչ եղաւ . պէյրիւմայն այլ ևս չը կրցաւ ստիպել, վասն զի մեր զասեմին հետ գործ չունինք ըսին, բայց Աղգին ալ չը գիտնցին, և այսպէս երկու կողմէն ալ որբերուն գործը չը տեսնուեցաւ ու մեզք եղաւ իրենց :

ՊԵՏԻՐԵԱՆ Ա. ԷՖ. — Չափահասութեան տարիքը ըստ Շէրիի 21 և ըստ Նիգամի 15 է ստեցաւ . սակայն 10 տարի առաջ հրովարտակ մ'եղաւ որ կըսէր թէ մինչև որ որբը 21 տարեկան չը լինի, ստացուածքն անոր չը պիտի յանձնուին . ուստի ևս կրտսեմ թէ 21 ը ընդունուի իբր չափահասութեան տարիք :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Կարծեմ թէ Պէշկերեան էֆէնտի սա կերտով կրնայ իբր պատասխանն առնուլ . չափահասութեան համար շէրիին 21 տարիքը չը նշանակեր, մեր եթէ 21 ը ընդունինք իբր չափահասութեան տարիք, իրարու հակառակ խնդիրներ պիտի ծագին . ուստի ըստ կրտսեմ որ ջախանաս բառը գործածենք և մանրամասնութիւնները կանոնագրին թողունք : Երկու տեսակ չափահասութեան տարիք կոչ . տղայ մ'երբ յանցանք մը գործէ ուրիշ տարիք կը փնտուուի, երբ սակտարական խնդիր մ'ունենայ՝ ուրիշ տարիք . ուստի մեր սկզբունքը միայն ընդունինք օրինական ջախանասութիւն ըսելով, որպէս զի սպառնացին մէջ չփոթութիւնը չը ծագին . իսկ մանրամասնութիւնը կրնամք կանոնագրին թողուլ :

ԶԱՅՆԵՐ. — Քուէ՛, քուէ՛ .

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — 24օր յօդուածին վրայ եղած վիճարանութեանն այլ ևս համարայնու

թիւն գոյացած լինիլ կը Յուի, փոխանակ յարբուսն հասնիլ բառերուն օրինական ջախանասութիւն ըսելու և մնացեալ մանրամասնութիւնքը Վարչութեան բերելիք կանոնագրին թողելու համար : Ուստի այն բարեփոխմամբ քուէի կը զնեմ 24օր յօդուածն :

Ժողովն օրինական մեծամասնութեամբ ԿԸՆԴՈՒՆԻ 24օր յօդուածն վերայիլեալ բարեփոխմամբ :

Ատենագիր էֆէնտին կանցնի ընթեռնուլ յետագայ յօդուածներն :

Յօդ. 25. Թաղ. Խորհուրդը կը կատարէ իւր թաղին Եկեղեցւոյն և վարժարանին և այլ ազգային հաստատութեան վերաբերեալ էֆէնտիներու առուտուններն . և ըստ օրինի Եֆէնտի առնլով՝ կայուածագիրը կը պատրաստէ և զայն կնքելով կը մատուցանէ Վարչութեան ի վաւերացումն :

Դիտողութիւն չլինիր :

Յօդ. 26. Թաղ. Խորհրդոյ անդամք կրնան Թաղ. Ժողովոյ նիստերուն մասնակցիլ . յորում ձայն ունին, իսկ քուէ ոչ : Բայց եթէ Թաղ. Ժողովոյ ևս անդամ են, իրենց համարատուութեան վերաբերեալ խնդրոց մէջ միայն քուէ չունին :

Այս յօդուածին վրայ ալ դիտողութիւն չը լինիր : Բայց յաջորդ 27օր յօդուածին վրայ խօսք խնդրուած լինելով, Ատենագրեալ էֆէնտի ըրէի կը զնէ 25 և 26օր յօդուածներն, զորս

Ժողովը օրինական մեծամասնութեամբ և միաձայն հաւանութեամբ ԿԸՆԴՈՒՆԻՆ անփոփոխ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Թէև՝ հակառակ երեսփոխանաց բաղձանքին՝ չիրցանք Թաղային օրինաց ծրագրին ընդունելութիւնը աւարտել, բայց Ժողովոյս փակման ժամը մօտեցած և Ժողովին ներկայանալի թղթեր հասած լինելով յանկնկարս, հարկ կը լինի ընդհատել այժմ ծրագրին վիճարանութիւնն, և այն թղթերը ձեռք առնուլ :

ԶԱՅՆԵՐ. — Շարունակուի յողուածոց ընթերցումը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — [Տեղեկարեր] Շարունակեմք ծրագրին քննութիւնը, Ազգն ստիպողաբար պէտք ունի այս օրէնքին : Այսօր տարեշրջանին վերջին նիստն է, եթէ այժմ ընդհատեմք, 4-5 ամիս կը յետաձգուի խնդիրն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այդ քննութիւնն այսօր շարունակել անկարելի է. եթէ կուզէք, կրնաք Ժողովոյս ներկայ շրջանն այսօր չփակել, Բայց այժմ նիստին փակման ժամն հասած է, և երեսփոխանք իրաւունք ունին ձգել մեկնելու, մինչդեռ կարեւոր թղթեր կան Դիւանիս վրայ, զոր Ժողովին փակումէն առաջ հարկ է անսրտաճառ Ձեզ ներկայել :

Կը հասկնամ երեսփոխանաց բաղձանքը գործին շարունակութեան մասին, մանաւանդ Տեղեկարեր Էֆէնտիքի անհամբերութիւնը. բայց թերեւս ամենէզ աւելի Ձեր Դիւանը կը ցուի ներկայ շրջանին մէջ Թաղային օրինաց ընդունելութիւնը շարունակելու վրայ : Այս սրտաճառաւ էր որ վերջընթեր նիստին առաջարկեցի ութ օր միայն միջոց տալ, մինչև փակում երկու նիստ կարենալ ընելու համար : Դիւանը կը յուսար որ այս երկու նիստերուն մէջ գործն յաւարտ կրնար երանել, սակայն ինչ օգուտ որ հակառակ ամեն սրտարաստա-

կանութեան անկարելի եղաւ : Եւ ըստ որում հազիւ 26 յողուած բուէարկած եմք և դեռ 30 էն աւելի յողուածներ ունիմք քուէարկելի, եթէ չընդհատեմք ալ այժմ շարունակութիւնը՝ դարձեալ անկարելի է վերջացնել այսօր : Ուրիշ բան է որ անպատեհ չլինի շրջանը չփակել և նիստ մ'առնել, ինչպէս ըսի արդէն : Ուստի կը խնդրեմ որ հաւանիք դադարեցնել այժմ ծրագրին շարունակութիւնն և Ձեզ ներկայելիք թղթերուս վրայ ուշադրութիւն դարձնէք :

Չայս բերով Ատենապետ Էֆէնտի գաղթեցուց ծրագրին վիճարանութիւնն և անցաւ հետեւեալ խնդրոց :

Ա.

Գեր. Կրօնական Խորհրդականին պատասխանագիրն՝ ի մասին Կիլիկիոյ Կարողիկոսական խնդրոյն վերաբերեալ հարցման :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այսօրուան ատենին սկիզբը Տ. Մատթէոս Եպիսկոպոսի հարցման պատասխանին համար Դիւանս յայտարարեց թէ Գեր. Կրօնական Խորհրդականէն դեռ պատասխան կամ տեղեկութիւն մը չէր եկած, և հետեւաբար զանազան դիտողութիւններ տեղի ունեցան այս մասին : Բայց վերջէն հասկցուեցաւ որ Դիւանին յայտարարութիւնն՝ անակնունելի պատճառաւ մը՝ համաձայն չէր եղած իրողութեան : Վասն զի Կրօնական Խորհրդական Տ. Ամեն Եպիսկոպոս Մէֆէրեան իւր պատասխանագիրը ժամանակին յանձնեց է Ատենապետի Մէլիքեան Էֆէնտիին, բայց Մէլիքեան Էֆէնտին Ժողովի գալու համար ձամբայ ելած միջոցին, իւր բնական Գում-Գալուսի թաղին մէջ հրդեհ պատահած լինելն իմանալով՝ ստիպուեր է ետ դառնալ, և հետեւաբար Կրօնական Խորհրդա-

կանին պատասխանագիրն իւր քովը մնալով՝ չէ կրցեր Դիւանին վրայ դանուիլ Ատենապետ Բայուած պահուն : Եւ ասիայն այդ հրդեհը բարեբախտաբար շուտ մարելով, երբ Մէլիքեան Էֆէնտին պահ մ'առաջ հաս հասաւ, Դիւանիս յանձնեց Կրօնական Խորհրդականին գիրն, որ թէև օրինօք սահմանեալ ժամանակէն յետոյ եկած է, բայց զայն զրկողին ու բերողին կամբէն անկախ անդիմադրելի պատճառաւ մ'այս յարազումը տեղի ունեցած, նա մանաւանդ Ատենանին սկիզբն այդ խնդրին յուղուած լինելով, հարկ է որ ներկայեմ Ձեզ զայն :

«Կրօնային Ատենին մէջ մինչև ցարգպայմանագիր ջնջելու կամ փոփոխութիւն ընելու առաջարկ եկած չէ, ուզեցի այս հարցումը Կրօնային Ատենին ներկայացնել և աւելի տեղեկութիւն ստանալ և հաղորդել, սակայն երեկ Ատենան չգումարուեցաւ, զոր ի գիտութիւն Ժողովոյն կը հաղորդեմ Դիւանին » :

1881 Ապրիլ 1 Սիմօն Եպիսկ. Սեֆերեան

Բ.

Ազդագիր Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ի մասին իւր մօտալուտ հրաժարման :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Պահ մ'առաջ ստիպուեցան և կարեւոր գիր մ'ալ Ամեն. Արքայան Պատրիարք Հօրմէ ընկալայ, որ թէպէտ Ատենանին բացումէն յետոյ հասաւ ձեռքս, բայց սրտունակութիւնն արտասովոր ծանրակառութիւն մ'ունենալուն պատճառաւ՝ կը սրտաւորիմ Ժողովոյն ներկայել :

«Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ Հայոց Թուրքիոյ :

Ինչ որ պարտք համարած էի՝ յետ բազմիցս հրաժարելոյ ի պաշտօնէս՝ կատարել խղճի մտօք կատարելով իմովսանն զայնս, կուգամ իմաց տալ Ժողովոյդ թէ՛ այս 1881 ամի ապրիլ ամիսէն վերջ՝ ալ չպիտի վարեմ Պատրիարքութեան պաշտօն. ուստի այսօրուրնէ պէտք եղածը տնօրինել խնդրելով ի պատուական Ժողովոյդ :

Մնամ աղօթարար .»

1881 Ապրիլ 2 ՆԵՐՍԷՍ
Ի Պատրիարքարան Հայոց
Ի Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Թէև, ինչպէս ըսի, այս խնդրը կարի ծանրակշիռ է, սակայն միւս կողմանէ պէտք է նկատել որ Նորին Արքայանութիւնն ամեն անգամ որ հրաժարականի ձայն հանած է, Ժողովը չէ ընդունած և ինքն ալ երբէք Ազգին գործերն երեսփոխան թողած քաշուած չէ : Նորին Արքայանութիւնը գիտէ որ Ժողովս իւր հրաժարականը չընդունիր, և հաւանական ալ չէ որ զայս գիտնալով դարձեալ փորձել ուզած լինի Ժողովոյս վստահութիւնը : Բայց ըստ որում Նորին Արքայանութեան անձը տկար է, կերելի թէ ֆիզիկական աղքեցութեան մը ներքե այս անակնկալ գիրն ուղղած ըլլայ մեզ. վասն զի Վարչութիւնն ալ բնաւին տեղեկութիւն չունի այս գրէն կամ անոր շարժառիթէն, ինչպէս ըստ ինձ Վարչութեան Ատենապետ Երեսփոխան Էֆէնտին, երբ գիրը Ժողովոյն ներկայելէ առաջ տեղեկութիւն խնդրեցի իրմէ :

ԵՌԵՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Ատուգիւ Ս. Պատրիարք Հօր այս հրաժարման դիտաւորու-

թե՛նն անդեկութիւն չունիմ. տակոյն, ինչ-պէս գիտէք, Նա շատ անգամ հրաժարականներ տուած է իւր անձնական տկարութեանը, հիւանդութեանը պատճառաւ, բայց իւր հրաժարականն երբէք չէ բնդունուած. կերելի թէ դարձեալ հիւանդութեանն նեղուելով կիմացնէ որ յառաջիկայ մայիսէն անդին այլ ևս Պատրիարքութիւն չը պիտի ընէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ այս գիրը Պատրիարքական հրաժարագիր կը նկատէ ժողովն, ըստ օրինի Ատենապետաց Դիւանին յղել հարկ կը վնի. իսկ եթէ յառաջիկային վերաբերեալ ազգագիր մը նկատէ, զայն ի գիտութիւն իմանալով միայն՝ պիտի անցնիմք այժմ:

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Արքայան Պատրիարքը կուգէ գործէն քաշուիլ. ինք շատ անգամ ըսած է թէ իմ օմիքս թողէք. ուստի այդ թուղթն իբր հրաժարագիր նկատել հարկ է աւելի, և ըստ օրինի յղել զայն Ատենապետաց Դիւանին:

ՁԱՅՆԵՐ. — Կը կրկնեմք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Վարչութեան և Ատենապետաց Դիւանին միանգամայն յղել կուսաջարկեմ:

ՁԱՅՆ ՄԸ — Կը կրկնեմ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քանի որ ժողովոյ ներկայ շրջանը պիտի փակուի և բացումէն վերջ մի քանի նիստ ալ Դիւանաց ընտրութեամբ և նորընտիր երեսփոխանաց վաւերացման գործողութեամբ պիտի զբաղուին, ուր որ ալ յղեմք այդ հրաժարագիրը, մէկ երկու ամիս չը պիտի կրնամք զբաղիլ այս խնդրով. ուստի պէտք է Պատրիարքն իւր սրաշունք շարունակէ, և հրաժարեալ շնկատուի Ազգ. Ժողովոյս կողմէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովն այս գիրն ընդունելով, իւր Պատրիարքն հրաժարեալ չը կրնար նկատել: Արդէն ինքն կրնէ՛ մայիսէն անդին Պատրիարքութեան սրաշունք չը պիտի շարունակեմ: Արդ՝ ըստ որում այս գիրն հրաժարական կը նկատէ ժողովն, և օրէնքը կը սրամաղբէ Պատրիարքական հրաժարականն Ատենապետաց Դիւանին յղել, այժմ այդ յղուելը պիտի կատարեմք: Բայց առաջարկուեցաւ որ Վարչութիւնն ալ միանայ Ատենապետաց Դիւանին հետ, այս խնդրոյն համար. ուրեմն նախ այս կէտը սրարկելու է, խնդիրն յղելէ առաջ:

Ժողովոյ հաւանութեամբ Ատենապետ էֆէնտի կը ՅՂ. Ե խնդիրն Ատենապետաց Դիւանին ու Վարչութեան, ի նախաբնութիւն:

Գ.

Երկարումն կրրական օրինաց ծրագրի ևս խարնուարեան պայմանաժամուն:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Կը փոփոխիմ գիտնող թէ՛ ժողովոյ փակումէն յետոյ տակաւին Դիւանը պիտի շարունակէ՞ իւր գործողութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը փակուելէն յետոյ Մայր Դիւանն ու Ատենապետաց Դիւանը չպիտի կրնան դադար առնուլ, մինչև որ իրենց յանձնուած խնդիրները կարգադրեն փակման միջոցին: Արդէն կրթական օրինաց ծրագիրն յանձնուած է ժողովէզ Ատենապետաց Դիւանին 31 օր սրայմանաժամաւ, բայց Ատենապետաց Դիւանը թէև շարաթն երկու անգամէն նուազ նիստ չըբաւ անկից ի վեր:

բայց և այնպէս դեռ չկրցաւ աւարտել այդ ստուար գործն, զոր սահայն մեծապէս զիւրացուց. և եթէ ժողովը հաճի երկարել այս մանաժամը մինչև յառաջիկայ բացում, անտարակոյս սրատրաստ կունենայ զայն նկատութեան առնուլ համար:

Ժողովն ՀԱԻԱՆԵՏԱԻ Ատենապետ էֆէնտի սոյն յայտարարութեան:

Գ.

Բացակայութիւնը.

Ատենապետ էֆէնտի ծանոյց թէ՛ երբորդ բացակայութիւն ունէր այսօր,

Տ. Գարեգին Վարդապետ Թաթարեան, որոյ յատուկ ազգագիր պիտի ուղղուէր:

Նժանապէս ծանոյց թէ՛ Միգայէլ էֆէնտի Մօսճեան,

որ Գ. բացակայութեանը պատճառաւ ազգագիր ընդունած և ստորագրած էր այս նիստին համար, չորրորդ անգամ բացակայ էր այսօր:

Հետեւաբար Միգայէլ էֆէնտի Մօսճեանն ըստ օրինի հրաժարեցուցեալ հոշակուեցաւ Երեսփոխանական Ժողովէն:

Ե.

Փակումն Ազգային Ժողովոյ 1880 ի տարեշրջանին.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեսփոխան Տեառք Ազգային Ժողովոյ 1880 ամի բացման ներկայ տարեշրջանն այսօր կը բոլոս-

րի, և ես անոր փակումն արտասանելու առթիւ՝ հակիրճ նկարագիր մը կուղեմ՝ զնեյ Ձեր աչաց առջև ժողովոյն ընթացից և աշխատութեանց, որ ի սոյն շըրջանին:

Ժողովոյ բացումը՝ փոխանակ Մայիսի առաջին եօթնեկին՝ Յուլիս ամսոյ 11 ին տեղի ունենալով, ներկայ շրջանին տեւողութիւնը սովորականէն երկու ամիս պակաս եղած է: Ի վերայ այսր ամենայնի՛ նախորդ շրջաններէն ոչ նուազ նիստ ըրած է Ազգային Ժողովը այս տարեշրջանին մէջ, և իւր այսօրուան նիստը քսան և մէկերորդն է:

Սոյն շրջանին մէջ Երեսփոխանաց թիւն ալ կարի զգալապէս նուազած է, և սորա պատճառք են:

Ա.— 11 Երեսփոխանաց հրաժեշտն, զոր ժողովն յակամայս ընդունեց.

Բ.— 3 Երեսփոխանաց ցուայի մահն, զոր Երեսփոխանք լացին տխրագին.

և Գ.— Բացակայութեանց պատճառաւ 20 Երեսփոխանաց դադարումն, որոց թուաները թափուր կը մնան:

Եւ հետեւաբար՝ ի հաշիւ առեալ ի սկզբանէ չընտրուած Երեսփոխաններն ալ՝ Ժողովոյս անդամներն 140 էն մինչև 84 պակասեցան, որոց ութն ալ ճամբորդութեան պատճառաւ բացակայ կը գանուին: Վիճակ մը զոր Ազգային Ժողովն երբէք չէր ունեցած:

Եւ սակայն այս պարագայն կարծես աւելի մղում մ'առնեց մնացեալ երեսփոխանաց՝ իրենց պարտականութիւնն աւելի եռանդեամբ կատարելու. վասն զի Երեսփոխանք սկսան այնչափ լաւ սեր-

տել խնդիրներն, որ յիշեալ քսան և մի նիստերուն մէջ շատ քիչեր գտնուեցան առանց կարեւոր աշխատութեան անցած. միանգամայն և խորհրդարանական կենաց այնպիսի մի փորձառութիւն ցոյց տուին Երեսփոխանք, որ իրենց թուոյն մեծապէս նուազման պատճառաւ՝ իսկական մեծամասնութիւն չգտնուած ատեն, ստէպ որոշող ձայնից միաբանութիւն գոյացուցին և խնդիրներն անդոյժ չթողին: Թէև նիստեր ալ ունեցանք՝ որ 50-60 անգամ ներով գումարեցան:

Այս աշխատութեանց կարեւորագոյններն եղած են.

1. Վարչական կազմակերպութեան նոր օրէնքն, զոր ժողովդ հաստատելով պաշտօնէական գործօն գրութիւնն, և և գատարանը վարչութենէն զատելու ուղի սկզբունքն ընդունեց. սրով այսօր վարչութեան մէն մի ճիւղին համար պատասխանատու ձեռնհաս պաշտօնեայնք ունեցաւ Ազգն, և լաւ կազմակերպեալ ամեն կարգի գատարաններ:

2. Ս. Երուսաղիմայ Վանուց կանոնադիրն, զոր վաւերելով ժողովդ, ազգային այդ նուիրական հաստատութեան կարելի է ըսել՝ ապագայն ապահովեց.

3. Թագային օրինաց ծրագիրն, որոյ ամբողջութիւնն ընդունելով և 26 յօդուածներն արդէն քուէարկելով, թագային վարչութեանց կազմութեան ու համարատուութեան եղանակը բարւոքեց.

4. Կրթական օրինաց ծրագիրն, զոր իւր Ատենապետաց Դիւանին յղեց, ուր լուրջ քննութեան մ'ենթակայ եղած է, և որով Ազգին մտային մշակութեան

միջոցները պիտի զարգանան, երբ ժողովէդ քուէարկուելով գործադրութեան գրուի.

5. Ներքին կանոնադրին մի քանի տրամադրութեանց բարեփոխումն, որ պիտիք են՝ բացակայութեանց, ժողովոյ գումարման աւուրց և ներկայելի գրութեանց մասին, որք ժողովոյն աշխատութիւնները գիւրելու պիտի ծառայեն.

6. 57 անլոյժ խնդրոց մասին իւրաքանչիւր նիստի ի սկզբան կէս ժամ յատկացնելու վերջին կարգադրութիւնն, որով այդ հնացեալ խնդիրները մեր խնդրոց կարգին մէջէն այլ ևս պիտի կրնան վերնալ, օրինաւոր լուծումն ստանալով:

Աւելորդ է թուել մի առ մի միւս խնդիրներն. բայց պէտք է ըսել՝ որ անոնց մեծագոյն մասը համարառութեան իրաւանց կիրառութիւնն էր, զոր ժողովդ գիտցաւ ընել, որչափ չէր ըրած նախընթաց շրջաններու մէջ, և այն ի շնորհս հարցման և հարցապնդման իմաստուն գրութեան, որ հաստատուած է նախկին Ատենապետ Վսեմ Ասլանեան Ստեփան վաչայի պաշտօնավարութեան օրով, և նորին առաջարկութեամբ:

Հետեւաբար ժողովոյդ ներկայ շրջանին աշխատութիւններն արդիւնաւոր եղան և ընդհանուր տեսութեամբ յաջող ելից յանդեցան:

Եթէ անյաջող խնդիր մ'ունեցաւ ժողովդ, այն ալ Մայր Դիւանիս կազմութեան խնդիրն էր, որ շատ ատեն դրաւեց, և սակայն փախաբեպ արդիւնքը չարտադրեց. վասն զի այս պաշտօնները

մենէ աւելի ձեռնհասութիւն և ժամանակ ունեցող անձանց ձեռքն յանձնուիլ կարժէին, և այն ատեն անտարակոյս Ձեր աշխատութիւններն աւելի բեղմնաւոր պիտի լինէին:

Ուրեմն կը շնորհաւորեմ զհամայն Երեսփոխան Տեառնք՝ այս շրջանին մէջ Ձեր պաշտաման խղճի մտօր կատարմամբ առ Ազգն մատուցեալ ծառայութեանցն համար. կաղաչեմ որ ներողամիտ լինիք Ձեր Մայր Դիւանին՝ և մասնաւորաբար Ձեր Ատենապետին՝ ակամայ թերութեանց, վատահ լինելով թէ չլրացան երբէք ինչ որ իրենց կարողութեան սահմանին մէջ էր: Եւ ներկայ տարեշրջանը փակեալ յայտարարելով կը մաղթեմ որ յառաջիկայ շրջանին մէջ խոհական և գործունեայ երեսփոխաններով զարգարուին մեր թափուր աթոռներն, որոց թիւը 66 ի պիտի յանդի այս անգամ Դ. վիճակաւ դադարելի երեսփոխանաց աթոռներով: Յայնժամ ժողովդ նոր ոյժեր պիտի յաւելու իւր մէջ, և անոնցմով մեծագոյն գործեր պիտի տեսնէ անշուշտ ի շինութիւն Հայութեան:

Եւ կը վերջացնեմ խնդրելով Տ. Խորէն և Տ. Մատթէոս Սրբազաններէն որ օրհնեն զՁեզ և զմեզ, շնորհ երկնային հայցելով մեր վրայ ի Տեառնէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ատենապետ էֆէնաթի փակման ճառին պարունակութիւնն ամբողջովն ընդունելի է, բայց ի այն մասէն՝ որ Դիւանին ընտրութեան ու պաշտօնավարութեան կը վերաբերի: Ամենքս ալ շնորհակալ ենք մեր Դիւանէն: Մէրեէմ-Գուլի կ'ֆէնաթի

Ատենապետութեամբ սովորեցաւ Ազգն՝ որ այդ աթոռ ժողովրդեան զուկին իրաւունքն էր:

(Համամտութեան ցոյցեր)

S. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԵՍ. ՆԱՐ ՊԷՅ — Տեա՛րք Երեսփոխանք,

Ազգային պաշտօնով ի տար աշխարհքս նուիրակ՝ Աստուծոյ և Հայրենեաց սէրն հաւասարապէս կը քարոզէի մեր հայրենակարօտ եղբարց որ ի Պուլկարիա, ի Ռումանիա և յԱւստրո—Հունգարիա՝ երբ պատկառելի ժողովդ իւր ներկայ շրջանը կը բանայր լի եռանդեամբ զայն արգասաւոր ընելու:

Իսկող ինձ կը համարեմ որ նորա վերջին նիստին ոչ միայն ներկայ կը գըտնուիմ այսօր, այլ և պատիւ ինձ կը շնորհուի փակել զայն օրհնութեամբ:

Ձեր Մեծապատիւ Ատենապետը արդէն գեղեցիկ կերպով համառօտադրեց՝ իբրև ի պատկերի՝ ժողովոյդ միամեայ գործերը. գործեր՝ որ արդիւնք են ձեր նիստերուն անխնջ գործունէութեանը: Դոցա մէջ՝ բաց ի լուծմանէ բազմաթիւ խնդրոց՝ տեսաւ Ազգը նաև մի քանի այնպիսի գործեր՝ որք ինքնին գլխովին բաւական իսկ են ժողովոյդ ներկայ շրջանին պատիւ բերելու:

Այ՛, Տեառք, Ազգային կեդրոնական վարչութեան նոր կազմակերպութիւնը մասնաւորապէս — սոյն շրջանին հրաշակերտն — շատ իսկ է նորա անունը մշանջնաւորելու: Վարչական մեքենայն պարզել, նորա կազմութիւնը դիւրացընել, պաշտօնը որոշ գծերով սահմանել, և մանաւանդ՝ պաշտօնէից ան-

հաստական պատասխանատուութիւնն հաստատել առ Ազգային ժողովոյ, ասել է առ Ազգն, ահա այն մեծ խորհուրդը զոր եթէ ներկայ շրջանը չյղացաւ՝ բայց գիտցաւ գնահատել զայն և գործադրել լուրջ օրինադրութեամբ:

Սոյն դրութիւնը ոչ միայն գործադրելի կրնէ զԱզգային մերս Սահմանադրութիւն, այլ և անկէ կը բառնայ արամադրութիւն մի որ զՎարչական մեքենայն ամբողջ ժողովոց ձեռքն յանձնելով, և այն ևս՝ բազմանգամ և անպատասխանատու անդամներէ կազմեալ ժողովներու, որք մեծագոյն մասի հաւաքմանը դատապարտեալ էին որպէս զի կարենային գործել, այսպիսի անգործագրելի արամադրութեամբ յապիկարութիւն կը դատապարտէր զկեդրոնական Վարչութիւն: — Պատասխանատու Պաշտօնէութեան դրութիւնը՝ որ ամեն սահմանադրական ազգաց ընկալեալ դրութիւնն է, անշուշտ և մեր մէջ պիտի պտղաբերէ այն արգիւնքներ՝ զոր նորա կը վայելեն: Ուստի և չեմ տարակուսիր որ յաջող փորձը՝ զոր առջևն ունիմք պիտի քաջալերէ զԱզգային ժողովոյ նոյն բանտոր դրութեամբ օժտել և գաւառները, որք գուցէ առաւել քան զկեդրոնն պէտք ունին սոյն իմաստուն և ընթացիկ վարչական անօրինութեան:

Գանամեայ երկար փորձառութիւն մը ապացուցոյց ոչ միայն վարչական կազմակերպութեան թերութիւնը, այլ նորա հետ և ոչինչ ընդհատ նաև Թաղական Խորհրդոց ներկայ դրութեան անբաւականութիւնը: Առաջինը բարեկարգելնէդ յետոյ՝ հարկ էր տրամաբանական հետևանք՝ որ և երկրորդին վերայ դար-

ձնէիք ձեր ուշադրութիւնը: Պիտի փութայք անշուշտ կնքել և զայն օրինադրութիւն յառաջիկայ նոր շրջանիդ, որով թաղերու վերանորոգման արգիւնալից գործը կատարած պիտի լինիք:

Սակայն աւելի մեծ գործ մի, Տեա՛րք երեսփոխանք, աւելի վե՛մ օրէնք մի կա զոր Ազգը անհամբեր կրտսատէ ընդունի իւր գերագոյն ժողովէն: Դաստիարակութեան օրէնքն է այն, կանխրաւին նորա որք կը կարծեն թէ ժողովոյ իւր ուշադրութեանը առարկայ չարաւ զայն երբէք: Սակայն արդեօք բաւական լըրջութեամբ և արժանաւոր յարատեւութեամբ խորհեցա՞նք ի դոյն մինչև ցարդ-

թնդիր մի, Դաստիարակութեան վե՛հ խնդիրը՝ որ ազգի մի ստուգապէս կենաց և մահու խնդիրն է, ապաքէն պէտք էր որ ամեն բանէ առաջ և ամեն բանէ վեր դասուելով, Օրէնսդիր ժողովոյ ներհուն խորհրդածութեանց և ամենախնամ գործառնութեան գիտակէտն լինէր: Ո՛չ աղէ ցաւալի իմն է տեսնել որ սահմանադրական քսան երկար տարիներու մէջ՝ չունեցաւ բաւական ժամանակ ըստ արժանւոյն զայն իմաստասիրելու, թո՛ղ թէ գործադրել տալու:

Այո՛, շատ անգամ այդ մեծ խնդիրն եկաւ յատեան, և ամեն անգամ ճարտարախօս ակոյեանք չպակսեցան ի պաշտպանութիւն նորին: Սակայն երկրորդական խնդիրներ առաջնութիւն ստանալով, յաջողեցան ի ստուերի ձգել այն խորհրդալից խնդիրը՝ որ առաջնոց առաջինն է ազգի մը վերակենդանութեանն համար:

Եթէ կըթութիւնն է որ կը կատարելագործէ զմարդ, եթէ կըթութիւնն

է որ կը շնորհէ նմա լուսաւորութիւն, բարելուութիւն, բարգաւաճումն, անձնապատուութիւն, ակնածելի դիրք և անվեհերութիւն: միթէ առանց սորա կարելի է յուսալ որ ազգ մի այն ձիրքերն ստանայ, եւ ո՛վ քան զմեր Ազգն պէտս ունի սոյն վսեմացուցիչ ձիրքերու, մանաւանդ՝ այն նախախնամական պահուն՝ յորում արեւելեան ազգաց ժամածիրին վերայ մերձեցած է փրկութեան ժամն հնչելու:

Ազգի մը փրկութեան գործը՝ ոչ այնքան զինուց արդիւնք է, որքան Դաստիարակութեան: Նա՛ այն խաղաղարար և հաշտասփուռ հրաշագործն է, որ իւր հրովն և լուսով կեանք կը բաշխէ ազգաց, ինչպէս խամբեալ ծաղկանց արեգական կենսատու ճառագայթը:

Այսու համոզմամբ է, Տեա՛րք, որ վերջնական կերպով բուռն հարիւր այս անգամ զԴաստիարակութեան խնդրէն, և ժողովոյ մտտակայ շրջանին կը ժառանգեցնէք նորա օրէնսդրութիւնը: Չէիք կարող քան զայն արգիւնաբեր և կենսառիթ խնդիր մը յանձնել ի նորուն գործունէութիւն: Եթէ Սահմանադրութիւնը ուրիշ բարիք մ'ալ արտադրած չլինէր՝ բայց եթէ Դաստիարակութեան լուրջ, իմաստուն, գործադրելի և վերանորոգիչ մի օրէնքը պարգեւել Ազգին, բաւական էր այդ՝ Սահմանադրութիւնը պաշտելի ընծայացընելու և Չեր անուանքն անմահացընելու:

Տեա՛րք երեսփոխանք, իրարմէ բաժնուելէս առաջ՝ տխուր ակնարկ մի և կաթիլ ձգեմք այն աթոռներուն վերայ զոր մեր պատուական Պաշտօնակիցք կը գրաւէին երբեմն, և կաշխատակցէին

մեզ յօգուտ Ազգին: Մեզ հետ էին նորա շրջանիս բացման օրը, այլ աւա՛ղ, նորա մեր հետ չեն նորա փակման օրը: Յառաջելով քան զմեզ՝ հեռացան նորա ի ցաւոց հովտէս, որպէս զի թեւակոխեն երանութեան սահմանները, մեզ և Ազգին թողլով իւրեանց ցանկալի յիշատակը: Նոցա կորուստը՝ ազգային մի սուգ է, և նոցա անուանքը՝ անմոռանալիք են, ինչպէս յարձանագիրս ժողովոյդ, նոյնպէս և ի սիրտս մեր և համօրէն Ազգին:

Յախտենակա՛ն Օրհնութիւն նուիրական յիշատակի հայրենասէր մշակաց մայր Հայաստանի:

Կը մաղթեմ որ նոցա փոխանակ տացէ Աստուած հաւասար արժանաւոր երեսփոխաններ, որ յաջորդեն ինչպէս նոցա աթոռոյն՝ նոյնպէս և եռանդուն հայրենասիրութեանն:

Սոյն սրտագին մաղթանքները կը վերառաքեմ ես յանուն այն վե՛հ Ազգասիրին՝ որ ժողովոյս և ազգանուէր ամեն ժողովոց արժանաժառանգ նախագահն է: Նորա անակնունելի հրաժարականը՝ այսօր ամենուս սրտին ազդեց վիշա և տրտմութիւն: Մեր սոյն իրաւացի թախճանաց զգացումը՝ վաղը Ազգին զգացումը պիտի լինի, Ազգին՝ որ ի ներսէս Սրբազան կը սիրէ ոչ միայն իւր առաքելաշաւիղ Պատրիարքն, այլ միանգամայն Ազգին Հայրն և նորա շահերուն անձանձիր պաշտպանն և ախոյեանը:

Ո՛չ, նորուն Բարձրաշնորհ Սրբազնութիւնը չէ՛ կարող թափուր թողուլ այն Աթոռը՝ ուր հասարակաց սէրը, վստահութիւնն և յոյսերը՝ աշակիցք են իրեն: Նորա մեր մէջէն հեռանալը՝ հեռանալ

է այն փրկարար ձեռնարկութենէն՝ որ նորա մեծագոյն գործն է, և զոր պէտք է որ պսակէ օր մը, և ընդ հուպ:

Ազգային ժողովս՝ հաւատարիմ իւր նախորդ որոշմանցը, զոր տուած է նմանօրինակ ցաւալի միջագէտերու առջև, ակնածանօք՝ բայց և որտովին և համաձայնութեամբ պէտք է բացասէ այն Պատրիարքին հրատարականը՝ որ Պատրիարքական Աթոռոյն փայլն է և պատիւ:

Սոյն սրտայոյզ բարբառը, Տեա՛րք Երեւոփոխանք, ոչ միայն իմ համոզմանս ձայնն է, ոչ միայն Եպիսկոպոսակից եղբարցս և Եկեղեցական դասուն մրմունջն է, այլ և ձեր ամենեցուն սրտից արձագանգն և արտայայտութիւն:

Այս՝ զներսէս Սրբազան՝ Ազգը կը սիրէ տեսնել յարատե իւր Պատրիարքական Աթոռոյն վերայ. վասն զի նորա հովուական ցալոյն ներքե կը յուսայ առաջնորդուիլ յայն լուսաւէտ ապագայն՝ զոր կը պատրաստէ Հայրենեաց՝ մեր ազգային Պատրիարքը, և զոր պիտի յաջողէ մեզ անտարակոյս Աստուածայինն փրկարար նախախնամութիւն:

Կրնամ՝ վերջացնել, Տեա՛րք, առանց շնորհակալութիւն յայտնելու առ մերս Մեծապատիւ Ատենապետ Էփէնտի և առ Պատուականն Դիւան, որ զժողովս վարեցին այնքան անկողմնակալութեամբ և այնքան ազգասիրութեամբ, վերընտրելով իւր այսպիսի անձնանուէր Պաշտօնակալքը՝ ժողովք պիտի ապացուցանէ լիուրթի թէ գիտէ գնահատել նոցա աշխատութիւնն, ազգասիրութիւնն և արժանիքը:

Ժողովոյդ հաւատարիմ թարգմանն եմ, Տեա՛րք, երբ սոյն արդարացի խօս-

քերք կարասանեմ ի պատիւ Դիւանիդ՝ որ ձեր պատիւն է:

Արդ կը բաժնուիմք, Տեա՛րք Երեւոփոխանք, որպէս զի նոր աւիւնով դարձեալ սոյն նուիրական յարկին ներքե համախմբիմք: Մեր ձեռքերն՝ իրարմէ չը բաժնուին, մանաւանդ՝ մեր սրտերը: Անենամք տարբեր կարծիքներ ազգային խնդրոց վրայ, զանազան տեսութիւններ, բայց ամեն կարծիք և տեսութիւն՝ խոնարհին Հայրենեաց սիրոյն առջև. միանան՝ Հայութեան շահուն և օգտին առջև:

Ինքն Տէր՝ որ յերկնից բարձանց կը հսկէ Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգութեան վրայ, օրհնէ՛ մեր ջանքերը, արգիւնաւոր ընէ մեր գործերը, և պըսակէ՛ լիուրթ մեր հայրենասիրական եռանդուն իղձերն ու վեհ նպատակը:

Ատենապետ Էփէնտի շնորհակալ կը լինէ Տ. Խորէն Արքեպիսկոպոսին, և յայտարարելով թէ Դիւանին նկատմամբ արտասանուած խօսքերն ու եղած ցոյցերն ի խրախոյս և եթ կըրնայ ընդունիլ, կը փակէ դատեանն ի ժամ 33, Երեւոփոխանք կը մեկնին խնդալի, կրկնելով իրենց շնորհակալութեան ցոյցերն առ Դիւանն:

Ատենապետ
Մ. Յ. ՄԷԼԻԻՔԵԱՆ
Ատենապետ
Յ. ՄԷՐԵՏԷՄ-ԳՈՒԼԻ

ՅԱՆԿ ԽՆԴՐՈՑ

Ա Չ Ք Ս Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ

ՇՐՋԱՆԻ 1880 ԱՄԻ

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

ՎԻՃԱԿ ԽՆԴՐՈՑ

1. Բացում ժողովին ի Ս. Նախագ ահէն:

Ա. Նիստ, 11 Յուլիս 1880. Գեր. Տ. Մատթէոս Եպիսկոպոս բացաւ ժողովն, ընթեռնելով Ս. Պատրիարք Հօր պատգամագիրն, որ առ ինքն ուղղեալ էր:

ԱՒԱՐՏԵԱԼ

2. Կազմութիւն Մայր Դիւանի:

Ա. Նիստ, 11 Յուլիս 1880. Սոյն կազմութիւնն ամբողջացաւ:

ԱՒԱՐՏԵԱԼ

3. Խնդրագիր ի Պօլիս պանդխտոց վաստուրականցի ազգայնոց:

Ա. Նիստ, 11 Յուլիս 1880. Ժողովը ըստ առաջարկութեան Փափաղեան Ս. Էփէնտիի յղեց առ Ս. Պատրիարք Հայր ի պարտուպատ շան տնօրինութիւն:

ԱՒԱՐՏԵԱԼ

4. Խնդիր ժողովարանի տեղափոխութեան և բացակայութեան երեսփոխանաց [39, 71 և 74 խնդիրք չըջանի 1879 տմբ]:

Ա. Նիստ, 11 Յուլիս 1880, գնելից Յանձնախմբին պատրաստած տեղեկագիրն մատուցուեց Մայր Դիւանին:

Օրակարգ

Բ. Նիստ , 18 Յուլիս 1880 . Ժողովն որոշեց բացառաբար յաջորդ նիստն ի Ղալաթիոս գումարել :

Օրակարգ

ԺԱ. Նիստ , 24 Հոկտ. 1880 . Ժողովն անդեկազրին հինգ եղբայրացութեանց երեքին վերայ իր սրտումն առաւ , միւսներն թողուց յաջորդ նիստին :

Օրակարգ

ԺԲ. Նիստ , 31 Հոկտ. 1880 . Ժողովն անդեկազրին 4Ը7 և 5Ը8 եղբայրացութեանց վրայ փոփոխեան Ս. ԼՖէնտիի առաջարկած բարեփոխութիւնն ընդունեց :

ԱՒԱՐՏԵԱԼ

5. Հրաժարական հինգ անդամոց Մայր Դիւանի :

Բ. Նիստ , 18 Յուլիս 1880 . Ժողովն մերժեց սոյն հրաժարականներն :

ԱՒԱՐՏԵԱԼ

6. Խնդրազիր թաղեցոց Ղալաթիոյ ի մասին սրտման Ազգացին ժողովոյ վտան Կեզր. փարձարանին ելն :

Բ. Նիստ , 18 Յուլիս 1880 . Մայր Դիւանին մատուցեալ :

Օրանգեալ

Ժ. Նիստ , 10 Հոկտ. 1880 . Յարարերութեան դիւանին ի նախարանութիւն

Յղեալ

Ի. Նիստ , 26 Մարտ 1881 . Յարարերութեան դիւանն իւր անդեկազրին ժողովին մատուց :

Չատրաստ

7. Կազմութիւն Նախարանի դիւանաց :

Բ. Նիստ , 18 Յուլիս 1880 . Որոշուց ձայնից միարանութիւն շղոյանալով , մնաց յաջորդ նիստին :

Օրակարգ

Գ. Նիստ , 25 Յուլիս 1880 . սոյն կազմութիւնն ամբողջացա :

ԱՒԱՐՏԵԱԼ

8. Մրազիր օրինաց Վարչական կազմակերպութեան . — Տեղեկազիր Ատենայե-

Գ. Նիստ , 25 Յուլիս 1880 . ստիպուցութիւնն ընդունուելով անցա

Օրակարգ

տաց դիւանի : [42Ը7 խնդիր շրջանի 1879 ամի] :

Գ. Նիստ , 8 Օգոստոս 1880 . Ժողովն բըււէարկեց ծրագրին 1—18 յօդուածներն :

Օրակարգ

Ե. Նիստ , 15 Օգոստոս 1880 . Ժողովն բըււէարկեց ծրագրին 19—25 յօդուածներն :

Օրակարգ

Զ. Նիստ , 5 Սեպտ. 1880 . Ժողովն բուէարկեց ծրագրին մնացեալ 26—46 յօդուածներն , և սոյա ամբողջ ծրագրին , որ եղև « Օրէնք Վարչական կազմակերպութեան » :

ԱՒԱՐՏԵԱԼ

9. Առաջարկութիւն և ծրագրի փոփոխեան Ս. ԼՖէնտիի՝ վարչական կանոնադրի և պաշտօնէական դրութեան և Չատրիարբական իշխանութեան ժամանակաւոր լինելու մասին [77Ը7 խնդիր շրջանի 1879 ամի] :

Գ. Նիստ , 25 Յուլիս 1880 . Ատենայեւտաց դիւանն իւր անդեկազրով կը յայտնէր փոփոխեան Ս. ԼՖէնտիի ի մասին վարչական կանոնադրի և պաշտօնէական դրութեան առաջարկութիւնն և ծրագրին նկատառութեան առած լինելը , իրաց տակալ Չատրիարբական իշխանութեան ժամանակաւոր ըլլալու կէտը , զոր յետաձգել սրտած են :

Օրանգեալ

10. Ուղերձ ի պատասխանի Նախագահական պատգամազրին :

Ի. Նիստ , 19 Սեպտ. 1880 . Ատենայեւտաց դիւանին պատրաստած ծրագրին ընթերցու յատենի ժողովոյ :

Օրակարգ

Ը. Նիստ , 26 Սեպտ. 1880 . Դանիակ նիստի մէջ ժողովն յետ վիճարանութեան որոշեց Յանձնախումբ մ'ընտրել առաջարկութեանց հեղինակներէն , նոր ծրագրի մը պատրաստելու համար :

Յղեալ

Ք. Նիստ , 3 Հոկտ. 1880 . Ժողովն անփոփոխ ընդունեց Յանձնախումբին բերած ծրագրին , և բուէարկեց Ուղերձն :

ԱՒԱՐՏԵԱԼ

11. Երեսփոխանական հրաժարական և մահ :

Ը. Նիստ , 26 Սեպտ. 1880 . Եզոկիոյ նորընտիր առաջնորդ Տէր Վահան վարդապետի , Մայր Եկեղեցոյ երեսփոխաններէն՝ Պառնաս

եան Պօղոս և Պոյաճեան Յովհաննէս էֆէնտի-
ներուն, Պաշտաու Երեսօրհաններէն՝ Էսաեան
Մ. էֆէնտի, և Միջազգիցի Երեսօրհաններէն՝
Քաղաքեան Ա. էֆէնտի հրաժարականներն ըն-
դունուեցան :

Թ. նիստ, 3 Հոկտ 1880. Խաղաղի Ե-
րեսօրհաններէն Տօրթէօր Արծրունայ մահն ծա-
նուցուեցաւ :

Ժ. նիստ, 10 Հոկտ. 1880. Քէօթաշից
Երեսօրհան Տօրթէօր Փափաղեան Մ. էֆէն-
տի հրաժարականն ընդունուեցաւ :

Ժ. նիստ, 31 Հոկտ. 1880. Ժողովն
Ստեփան փաշային միահամուռ շնորհակալու-
թեան քուէ տալով նորա առ Ազգն և առ Ազ-
գային ժողովն մատուցած ծառայութեանցն
համար, ընդունեց նորա հրաժարականն :

Մայր Եկեղեցւոյ թաղի Երեսօրհաններէն՝
Տօրթէօր Ն. Մէլզարեանի մահն ծանուցուե-
ցաւ, և որչափեցաւ յատուկ պատգամաւորու-
թիւն մը յղել յազարկաւորութեան հանդիսին :

Ժ. նիստ, 14 Նոյեմ. 1880. Եկեղեցւո-
կան Երեսօրհաններէն՝ Տ. Վրդանէս քահանա-
յի, Բերայի Երեսօրհաններէն՝ Տօրթէօր Բա-
Քոյէլեան և Քաղաղեան Կարապետ էֆէնտի-
ներու, Մայր Եկեղեցւոյ թաղի Երեսօրհան-
ներէն՝ Ադրս Սահակ էֆէնտի և Եկեղեցւոյ
Երեսօրհաններէն՝ Մազաու Սեպուհ էֆէն-
տի հրաժարականներն ընդունուեցան :

Նոյն նիստ, 14 Նոյեմ. 1880. Ժողովն
ըստ օրինի հրաժարեալ նկատեց Տէր Ներսէս
Վ. Ազունեան Եկեղեցւոյ Երեսօրհանն,
Մայր Եկեղեցւոյ թաղին Երեսօրհաններէն՝
Խաչիկ էֆէնտի Մանկատարեան, Ատոլմ է-
ֆէնտի Տէրայեան և Աւետիս էֆէնտի Կիրառա-
եան. Պէշիքթաշի Երեսօրհաններէն՝ Անդրա-
նիկ օրէյ Կրճիկեան. Կարնոյ Երեսօրհան Սի-
մօն օրէյ Մազաուեան. Բերայի Երեսօրհան-
ներէն՝ Արփիշէն էֆէնտի. Գատրգիւղի Երես-
օրհաններէն՝ Կարապետ էֆէնտի Շահապ.
Սամ. Եկեղեցւոյ Երեսօրհան Պօղոս էֆէն-

տի Մկրտիչեան. Պաշտաու Երեսօրհաններէն՝
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան. Խաղաղի Ե-
րեսօրհաններէն՝ Սարգիս էֆէնտի Արրաշամ-
եան. Արնայ Երեսօրհան Աւետիս էֆէնտի
Պարսեան, և Տրապիզոնի Երեսօրհան Տիգ-
րան էֆէնտի Տէր Ներսէսեան :

Ժ. նիստ, 28 Նոյեմ. 1880. Ժողովն
ըստ օրինի հրաժարեալ համարեց Մայր Եկե-
ղեցւոյ թաղին Երեսօրհաններէն՝ Քէօթաշի
էֆէնտի Սահարանեան :

Ժ. նիստ, 19 Դեկտ. 1880 Ժողովն
օրինի հրաժարեալ համարեց Խաղաղի Երես-
օրհաններէն՝ Աթանազիէն էֆէնտի Արտաղեան :

Ժ. նիստ, 23 Յունւար 1881. Ժողովն
ընդունեց Գուղիունճուրի և Իճաթիլի Երես-
օրհաններէն՝ Էսաեան Յովհաննէս էֆէնտի
հրաժարականն :

Ժ. նիստ, 27 Փետր. 1881. Ժողովն
օրինի հրաժարեալ նկատեց Ազրիանուպոլսոյ
Երեսօրհան Վիշէն էֆէնտի Աղտուլլահ :

Իսպիտար Ս. Կարապետ թաղի Երեսօր-
հաններէն Ալմաճեան Նիկողոս էֆէնտի
մահն ծանուցուեցաւ :

ԱՒԱՐՏԵԱԼ

12. Հրաժարական Կրօնական և Քաղա-
քական Ժողովոց Ազգային Վարչութեան :

Ը. նիստ, 26 Սեպտ. 1880. Ժողովն ըն-
դունեց սոյն կանոնական հրաժարականներն :
ԱՒԱՐՏԵԱԼ

13. Առաջարկութիւն Փափաղեան Մ. է-
ֆէնտի՝ ի մասին հանգանակութեան փոսն
սովեւոց Արշիկերտի :

Ը. նիստ, 26 Սեպտ. 1880. Ազգային
Վարչութեան յանձնեալ ի գործադրութիւն :
Տղեայ

Ժ. նիստ, 27 Փետր. 1881. Վեհ. Կա-
թողիկոսի կանոնին ընթերցաւ յատենի ժող-
ովն : Ժողովն գահունակութիւն յայտնեց արը-
ուած տեղեկութեան վրայ, և որչափ պաշտօ-
նապէս յայտնել Ն. Վեհափառութեան :

ԱՒԱՐՏԵԱԼ

14. Առաջարկութիւն Փափաղեան Ս. է. ֆէնտի՛ սա Վեհ. Կաթողիկոս Ս. Էջմիածնի պատգամաւոր զրկելու մասին :

Ը. Նիստ , 26 Սեպտ. 1880 . Իրաւասութեան և Զեւոնհասութեան միացեալ զիւանաց ի նախաքննութիւն Յղեալ

15. Առաջարկութիւն Ղազարտեան Ք. Էֆէնտի՛ հրածարեալ և բացակայ երեսփոխանաց նկատմամբ :

Թ. Նիստ , 3 Հոկտ. 1880 . Բացակայութեան խնդրոյն հետ լծորդելով

16. Առաջարկութիւն Ղազարտեան Ք. Էֆէնտի՛ վասն ապաղքութեան ներքին Կանոնադրին :

Թ. Նիստ , 3 Հոկտ. 1880 . Ժողովն ընդունեց այն առաջարկութիւնն :

17. Առաջարկութիւն Ղազարտեան Ք. Էֆէնտի՛ ատենադրութեանց և ներքին բարեկարգութեան մասին :

Թ. Նիստ , 3 Հոկտ. 1880 . Ժողովն որոշեց ատենադրութեանց մասն յանձնել Վարչութեան ի գործադրութիւն և բարեկարգութեան մասն վերապահել կաղնիքի Ելեւմտից Յանձնախորհրդին :

18. Առաջարկութիւն Փափաղեան Ս. է. ֆէնտի՛ Վարչութեան և Կրթիկոյ Ս. Կաթողիկոսին մէջ մտանոտեալ թղթակցութեանց հրատարակութեան մասին :

Թ. Նիստ , 3 Հոկտ. 1880 . Ժողովն որոշեց այն թղթակցութիւնն պահանջել Ս. Պատրիարքէն :

Ժ. Նիստ , 28 Նոյեմբ. 1880 . Սոյն թղթակցութիւնը յանձնուեցան Մայր Դիւանին , բոյց ձեւական պակասի համար շնտաւուցուեցան ժողովին :

Ի. Նիստ , 26 Մարտ 1881 . Սոյն խորհրոյն վրոյց Փափաղեան Ս. Էֆէնտի՛ հարցմամբ Վարչութեան պատասխանն գահացուցիչ նկատուեցաւ ժողովէն :

Օրանգեալ

19. Առաջարկութիւն Հինգ երեսփոխանաց Քաղաքին օրինաց վերաքննութեան մասին :

Թ. Նիստ , 3 Հոկտ. 1880 . Ժողովն ի պատրաստութիւն յղեց սա Աաննաղեանց Դիւանն :

Ժ. Նիստ , 20 Մարտ 1881 . Աաննաղեանց Դիւանն տեղեկագրով մը ներկայեց Քաղաքին օրինաց ծրագիրն , զորոյ ախարդութիւնն ընդունելով ժողովն՝ նախ ամբողջութիւնն բուէարկեց և ապա սկսաւ յողուած սա յողուած բննել . ժողովն ընդունեց 1—7 յողուածներն :

Ի. Նիստ , 26 Մարտ 1881 . Ժողովն ընդունեց Տրտ յողուածն :

ԻԱ. Նիստ , 2 Ապրիլ 1881 . Ժողովն ընդունեց 9—26 յողուածներն :

20. Տեղեկագիր Ս. Պատրիարք Հօր ի դիմաց Յանձնաժողովոյ բարձման պարտուց Ս. Նրուսաղէմի. — Կանոնագիր Ս. Նրուսաղէմի :

Թ. Նիստ , 3 Հոկտ. 1880 . Ժողովն ըստ առաջարկութեան Փափաղեան Ս. Էֆէնտի՛ որոշեց Կանոնագրին բնութիւնն անցունել

Ժ. Նիստ , 10 Հոկտ. 1880 . Ժողովն ըստ ախարդութիւն ընծայելով Կանոնագրին , յետ ընդարձակ բացատրութեանց պատուիրակին Ս. Նրուսաղէմի , կ'ընդունի զայն միտմայն՝ հանդերձ առաջարկեալ կրկին բարեփոխումներով , և գործադրութիւնը կը հրամայէ :

Ժողովն միտմայն շնորհակալութեան բուէկուտայ , սա պատուիրակին Նրուսաղէմի , Ստեփան վաշա Ասրանեան :

21. Գաւառական տեղեկագիրը ազգային դատարարակութեան վիճակին վրոյց :

Ժ. Նիստ , 10 Հոկտ. 1880 . Եղեւոյց , Կարնոյ Ս. Խաչ վանուց , Այնթապի , Վանոյ Կարեկայ վանուց և Կարնոյ տեղեկագրերն սա Գաւառարակութեան զիւան ի նախաքննութիւն

Ի. Նիստ , 26 Մարտ 1881 . Մէլիտինէի տեղեկագիրն և սա Գաւառարակութեան Դիւանն

22. Քրիստոսի Գայրանեան Հայ օրհորդաց
ուսումնարանի տեսչութեան նամակը :

Ժ. նիստ , 10 Հոկտ. 1881 . Գաստիարա-
կութեան և Կալուածոց միացեալ զիւանաց ի
նախարհներութիւն
Յղեալ

23. Առաջարկութիւն Փափաղեան Ստե-
փան էֆէնտի' Հայաստանի սոխուն նկատմամբ

Ժ. նիստ , 10 Հոկտ. 1880 . Ըստ առա-
ջարկութեան Ստեփան փաշայի' Ատենապետաց
զիւանին ի նախարհներութիւն
Յղեալ

24. Առաջարկութիւն Տ. Վահան վար-
դապետի' գաւառական վարչութեանց բարե-
կարգութեան խնդրոյն վրայ :

Ժ. նիստ , 10 Հոկտ. 1880 . Մայր Գիւա-
նին աւանդեալ :
Անորոշ

25. Մասնակի ամբողջացում նախարհներէ
զիւանաց :

Ժ. նիստ , 10 Հոկտ. 1880 . Նախաձեռ-
նութեան և Համարակարգութեան զիւանաց հրա-
ժարեալ անդամաց տեղ նոր ընտրութիւն կա-
տարեցաւ :

Ժ. նիստ , 31 Հոկտ. 1880 . Չեռնհաստ-
թեան , Յարարեթեան և Նախաձեռնու-
թեան զիւանք ամբողջացան :

Ժ. նիստ , 14 Նոյեմբ. 1880 . Գաստիար-
կութեան և Կալուածոց զիւանք ամբողջա-
ցան :
ԱՒԱՐՏԵԱԼ

26. Առաջարկութիւն Ստեփան փաշայի'
Սահմանադրութեան մէջ Ս. Արաւստղէմի զԸԼ-
խոյն վերարեբեալ տրամադրութեանց վերա-
քննութեան մասին :

Ժ. նիստ , 10 Հոկտ. 1880 . Մայր զիւա-
նին աւանդեալ :
Անորոշ

27. Խնդրադիր Աերասիոյ Քուզլասար
զիւզի պանդուխտ ժողովրդեան :

Ժ. նիստ , 24 Հոկտ. 1880 . Ըստ առա-
ջարկութեան Գաստիարանեան Մ. էֆէնտի ,
Ժողովն միամայն կընդունի Վարչութեան յղել
խնդիրն յանմիջական անօրէնութիւն :

ԱՒԱՐՏԵԱԼ

28. Հրամարակներ անդամաց Մայր Գի-
ւանի և ընտրութիւն :

Ժ. նիստ , 24 Հոկտ. 1880 . Հրամարա-
կանք ընդունուեցան , և ընտրութիւնն թայ
յաջորդ նիստին :
Օրակարգ

29. Պաշտօնադիր Եղեղեցական վիճակա-
յին ժողովոյ' վան ընտրելեաց Կրօնային Ատ-
եանի :

Ժ. նիստ , 31 Հոկտ. 1880 . Ընտրու-
թիւնք կատարուեցան :
ԱՒԱՐՏԵԱԼ

30. Պաշտօնադիր Ս. Պատրիարք Հօր վա-
սըն ընտրութեան անդամաց Կեղր. Վարչու-
թեան :

Ժ. նիստ , 31 Հոկտ. 1880 . Յղեցաւ
Ատենապետաց զիւանին ,
ԱՒԱՐՏԵԱԼ

31. Առաջարկութիւն Տ. Մատթէոս Ե.
պիտակապոսի վան պատգամաւոր յղելոյ ի հան-
դէս յուղարկարութեան վախճանեալ Երես-
փոխանաց :

Ժ. նիստ , 31 Հոկտ. 1880 . Արձանագ-
րեցաւ յատենագրութեան :
ԱՒԱՐՏԵԱԼ

32. Առաջարկութիւն Փափաղեան Ս. է-
ֆէնտիի' դաստիարակութեան մասին չպատաս-
խանող գաւառներուն Բ. անդամ ազդարարու-
թիւն ընելու նկատմամբ :

Ժ. նիստ , 31 Հոկտ. 1880 . Ժողովն ըն-
դունեց սոյն առաջարկութիւնն :
ԱՒԱՐՏԵԱԼ

33. Հարցապնդում Փափաղեան Ս. էֆ. ի
առ Ս. Պատրիարք Հոյրն' դաստիարակութեան
պիտակայն յատկացեալ գումարին չվճարուելուն
նկատմամբ :

Ժ. նիստ . 14 Նոյեմբ. 1880 . Ժողովն
յղեց Վարչութեան ի դործադրութիւն :
Յղեալ

Ժ. նիստ , 14 Նոյեմբ. 1880 . Ժողովն
միամայն կընդունի և կորուչէ յղել զայն առ Ս.
Պատրիարքն :
Յղեալ

Ժ. նիստ , 28 Նոյեմբ. 1880 . Ս. Գաս-
րիարք Հօր պատասխանադիրն ընթերցաւ յա-
տենի , և ըստ առաջարկութեան Տ. Մատթէոս
Եպիտակապոս Եղևիլեանի' առաջին մասն արձա-
նադրել որոշուեցաւ :
Օրակարգ

Ժ. նիստ , 19 Դեկտ. 1880 . Վճարա-
նութիւնն չարունակեցաւ և մնաց յաջորդ
նիստին :
Օրակարգ

Ժ. նիստ , 27 Փետր. 1881 . Ժողովն
բողոք փակել խնդիրն , եղած վիճարանութիւն-
ներն բուական համարելով , և անոնց խնայան

Ատենապետ Էֆէնտիին ներկայած ամբաստան
յար և նման ըմբռնելով :

ԱՒԱՐՏԵԱԼ

34. Ընտրութիւն Ելեւոսից Յանձնախումբ
րին :

ԺԳ. Նիստ, 14 Նոյեմբ. 1880. Ժողովն ըն-
դունեց Դիւանին առաջարկած ընտրելիներն :

ԱՒԱՐՏԵԱԼ

35. Ընտրութիւն Կրօնային և Քաղաքա-
յին Ատենից :

ԺԳ. Նիստ, 14 Նոյեմբ. 1880. Ժողովն կա-
տարեց սոյն ընտրութիւններն :

ԱՒԱՐՏԵԱԼ

36. Խնդիր Հիւար և Պոյաճը գիւղ միաց-
եալ թողից երեսփոխանական ընտրութեան .
Տեղեկագիր Նախաձեռնութեան գիւանի :

[49դ խնդիր չըջանի 1879 ամի]

ԺԳ. Նիստ, 14 Նոյեմբ. 1880. Ժողովն
ընդունեց տեղեկագրին եզրակացութիւնն :

ԱՒԱՐՏԵԱԼ

37. Առաջարկութիւն Փափաղեան Ս. է-
ֆէնտիի ի մասին ազգային դատարանաց .—
Տեղեկագիր Նախաձեռնութեան գիւանի :

[45դ խնդիր չըջանի 1879 ամի]

ԺԳ. Նիստ, 14 Նոյեմբ. 1880. Ժողովն
ընդունեց տեղեկագրին 1 և 2-դ եզրակացու-
թիւններն ըստ : յայտարարութեան վարչու-
թեան Ատենապետ Եռասուֆեան Էֆէնտիի :

ԱՒԱՐՏԵԱԼ

38. Առաջարկութիւն Փափաղեան Ս. է-
ֆէնտիի Կեդր. անտուկի քանի մը հաշւաց մա-
տուցման մասին :

ԺԳ. Նիստ, 28 Նոյեմբ. 1880. Ժողովն
միաձայն կորչէ Ազգ. վարչութեան յղել ի
գործադրութիւն :

Յղեալ

39. Խնդիր Երեսփոխանական ընտրու-
թեան Խորհրդի . — Տեղեկագիր Նախաձեռ-
նութեան գիւանի :

[18դ և 72դ խնդիր չըջանի 1879 ամի]

ԺԳ. Նիստ, 28 Նոյեմբ. 1880. Ժողովն
միաձայն կընդունի տեղեկագրին կրկին եզրա-
կացութիւններն, ըստ բարեփոխութեան Մէր-
եկմ. Գուլի Էֆէնտիի :

ԱՒԱՐՏԵԱԼ

40. 57 անդր խնդիր . — Տեղեկագիր
Մայր գիւանի [56դ խնդիր չըջանի 1878 ամի] :

ԺԳ. Նիստ, 28 Նոյեմբ. 1880. Վիճարա-
նութեան շարունակութիւնն անցաւ

Օրակարգ

ԺԸ. Նիստ, 27 Փետր. 1884. Ա. Բ. և
Գ. խնդրոց վրայ տեղեկագրին եզրակացու-
թիւններն ընդունուեցան . Գ. խնդրոյն եզրա-
կացութեան հետ վերահաստատելով խոստա-
րարները պատժելու համար նախկին որոշումը,
Օրակարգ

ԺԳ. Նիստ, 28 Նոյեմբ. 1880. Ժողովն
հանութեամբ անցան

Օրակարգ

ԺԷ. Նիստ, 23 Յունվար 1884. Ատենա-
պետացիականին ի նախարհնութիւն Յղեալ

ԺԹ. Նիստ, 20 Մարտ 1884. Ըստ առա-
ջարկութեան Ատենապետացիականի՝ սոյն ա-
ռաջարկութիւնը ընդունուեցան :

ԱՒԱՐՏԵԱԼ

41. Առաջարկութիւն Մայր գիւանի՝
Ժողովոյ գումարման աւուրց փոփոխութեան և
Ժողովոյ ներկայելի գրութեանց մասին :

ԺԶ. Նիստ, 19 Դեկտ. 1880. Ժողովն մի-
աձայն ընդունեց զսոյն և յանձնարարեց Մայր
գիւանին ի գործադրութիւն :

Յղեալ

42. Առաջարկութիւն Փափաղեան Ս. է-
ֆէնտիի ի մասին Ս. Պատրիարք Հօր առան-
ձին պատասխանատուութեան ներքե եղած
գործոց համարառութեան :

ԺԶ. Նիստ, 19 Դեկտ. 1880. Ժողովն մի-
աձայն ընդունելով յանձնարարեց Դիւանին յը-
ղել առ որ անկ է :

Յղեալ

43. Առաջարկութիւն Փափաղեան Ս. է-
ֆէնտիի՝ Մշոյ Ս. Կարապետի վանոց անտու-
կին նկատմամբ Պատրիարքարանի տուած ո-
րոշման և ամբաստանեալ վանահօր և ամբաս-
տանալ միարանից ի Պոլիս ըրած ծախուց մա-
սին :

ԺԶ. Նիստ, 19 Դեկտ. 1880. Փափաղ-
եան Ս. էֆէնտիի ընդ շորս երեսփոխան ա-
ռաջարկած բարեփոխումն ընդունուեցաւ ժո-
ղովն :

ԱՒԱՐՏԵԱԼ

44. — Առաջարկութիւն Փափաղեան Ս. է-
ֆէնտիի ի մասին հաշուետուարաց Կեդր-
անտուկի . — Տեղեկագիր Նախաձեռնութեան
գիւանի : (45րդ խնդիր չըջանի 1879 ամի) :

ԺԷ. Նիստ, 23 Յունվար 1884. Ժողովն
մերժեց սոյն հրատարակման :

ԱՒԱՐՏԵԱԼ

45. Հրատարակման Տ. Մատթէոս եղիս-
կոպոսի յերեսփոխանութիւնն :

46. Մրազիր օրինաց կրթութեան . — Տեղեկագիր կրթական Խորհրդականի Ազգ. վարչութեան :

47. Առաջարկութիւն վարչութեան՝ ի մասին պաշտօնէութեան ծախսոց գլխոյն աւսական 3000 դրուշ յաւերման :

48. Հաշուեկէտք 77—78, 78—79, 79—80, աւանց . — Տեղեկագիր Տնտեսական Խորհրդական էֆէնտի :

49. Առաջարկութիւն Վարչարանի Գ. էֆէնտի՝ Եզրագրաստի խնդրոյն նկատմամբ :

50. Հինգ Հարցման քառասուն Մ. էֆէնտի առ Ազգ. վարչութիւնն :

ԺԷ. նիստ . 23 Յունվար 1884 . Ժողովն միաձայնութեամբ կը յղէ Ատենապետաց և Գառախարակութեան միացեալ գիւանաց ի նախարկներն :

ԺԷ. նիստ , 23 Յունվար 1884 . Որոշող ձայնից միարանութիւն չգոյանալով բուկարկութիւնը մնաց յաջորդ նիստին :

ԺԸ. նիստ . 27 Փետր . 1884 . Ժողովն 7 ի դէմ 26 բուկարկ ընդունեց վարչութեան առաջարկութիւնը :

ԺԸ. նիստ , 27 Փետր . 1884 . Համարակալութեան գիւանին ի նախարկներն

ԺԹ. նիստ , 20 Մարտ 1884 . Համարակալութեան գիւանին դրոյն վրայ ժողովն յանձնարարեց Ս. Գառախարք Հօր՝ որ հրաւիրէ նախարդ վարչութիւններն իրենց պաշտօնաւարութեան ժամանակին հաշիւներն ստորագրել :

ԺԸ. նիստ , 27 Փետր . 1884 . Առ վարչութիւնն ի տեղեկագրութիւն

Ի. նիստ , 26 Մարտ 1884 . Ժողովն ստացաւ Տ. Մկրեան հօր բացատրութեան գիրն և վարչութեան պատասխանը , և զս՝ եղաւ վարչութեան բացատրութեանն , սպասելով որ ամօր իւրաբանչիւր մասին վերաբերեալ տեղեկութիւններն պատրաստելով մատուցանէ ժողովին :

ԺԸ. նիստ , 27 Փետր . 1884 . Առ վարչութիւնն ի տեղեկագրութիւն

Յղեալ

Օրակարգ

ԱԻԱՐՏԵԱԼ

Յղեալ

Յղեալ

Յղեալ

Յղեալ

Յղեալ

Ի. նիստ , 26 Մարտ 1884 . Հարցմանց միայն այն է կիրկից խնդրոյն թ.թ.ակցութեանց մասին վարչութիւնն պատասխանեց և ժողովն դաճացուցիչ դատա դրոյն :

Ի. նիստ , 26 Մարտ 1884 . Ժողովն չընդունեց այն հրամարականն :

Ի. նիստ , 26 Մարտ 1884 . Առ Ներքին գործոց Խորհրդական էֆէնտին

Ի. նիստ , 26 Մարտ 1884 . Առ կրօնական գործոց Խորհրդական Սրբազանն

ԻԱ. նիստ , 2 Ապրիլ 1884 . կրօնական Խորհրդական Սիման Եպիսկոպոսին պատասխանը դաճացուցիչ նկատուեցաւ ժողովին :

Ի. նիստ , 26 Մարտ 1884 . Ըստ խնդրանաց վարչութեան Ատենապետ էֆէնտի առ վարչութիւնն

ԻԱ. նիստ , 2 Ապրիլ 1884 . Ժողովին հաւանութեամբն առ վարչութիւնն յղեալ :

ԻԱ. նիստ , 2 Ապրիլ 1884 . Ժողովն միաձայնութեամբ յղեց առ Ատենապետաց գիւանն .

ԻԱ. նիստ , 2 Ապրիլ 1884 . Ատենապետ էֆէնտի առ նախարկութեան ժողովին 1880 ամի շրջանը փակեցաւ :

51. Հրամարագիր Լ. Պարեօղեան էֆէնտի յՆերեպիսկոպոսութեանն :

52. Հարցում Գառախարքեան Մ. էֆէնտի՝ Ամասիոյ խնդրոյն նկատմամբ :

53. Հարցում Տ. Մատթէոս Եպիսկոպոսի վասն կրօնական պայմանագրին կաթողիկոսին կիրկից :

54. Չորս առաջարկութիւնք քառասուն Մ. էֆէնտի ի մասին բարեկարգութեան Պատրիարքարանի :

55. Առաջարկութիւն քառասուն Մ. էֆէնտի՝ ազգային պաշտօնաւարաց դէմ լրագրական հրատարակութիւններն Ազգ. գառախարանին յանձնելու մասին :

56. Մանուցագիր Ս. Գառախարք Հօր վասն հրամարան խրոյ :

57. Փակուան ժողովոյ :

Յղեալ

ԱԻԱՐՏԵԱԼ

Յղեալ

Յղեալ

ԱԻԱՐՏԵԱԼ

Յղեալ

ԱԻԱՐՏԵԱԼ

Յղեալ

ԱԻԱՐՏԵԱԼ

Ներկայ 1880 ամի շրջանին մէջ Ազգային Ժողովին ներկայացեալ են ընդ-ամենն 57 խնդիրք, որք հետեւեալ փեմակն ստացած են.

- 35 խնդիրք աւարտեալ
- 45 » յղեալ
- 1 » պատրաստ
- 2 » անորոշ
- 2 » օրածոցեալ
- 2 » օրակարգ

57

Ազգային Ժողովն սոյն շրջանին մէջ նկատողութեան առաւ նաև նախընթաց 1878 ամի շրջանին շաւարտեալ 8 խնդրոց մին և 1879 ամի շրջանին շաւարտեալ 19 խնդրոց 9 ը. որով այժմ 7 խնդիրք 1878 էն և 10 խնդիրք 1879 էն կը մնան Խնդրոց կարգի սուսմարին մէջ, զորս աստ կը նշանակենք իրենց կարգի թուա-համարաւ.

ՄՆԱՅՈՐԴ ԽՆԴԻՐԻՔ ՇՐՋԱՆԻ 1878 ԱՄԻ

12. Տեղեկագիր Բաղ. Ժողովոյ վասն կը-տակի և վազըֆի խնդրոցն Տիվրիկի [30րդ խնդիր շրջանի 1877 ամի]:

Բ. Նիստ, 9 Յունիս 1878. Պարուածոց ճղեալ

19. Առաջարկութիւնք 45 երեսօխանաց և Ազգ. Վարչութեան և Եկեղեցական Հարց' Պատրիարքական փոխանորդ Տ. Հօր նկատմամբ:

Գ. Նիստ, 23 Յունիս 1878. Իրաւասութեան ճղեալ

21. Տեղեկագիր Բասն Ժողովոյ' Բ. Գրան մէկ ծանուցողրին վրայ, որով Այլ Եէֆիլդ պէյին հետ Պատրիարքարանի կողմէն մէկը զնել կառաջարկէր:

Է. Նիստ, 25 Օգոստ. 1878. Իրաւասութեան ճղեալի տեղեկագիրն առանդեցաւ Մայր Դիւանին: Օրածոցեալ

26. Առաջարկութիւն երկոց երեսօխա-նաց' Առ. խորհրդոց երկամեայ համարատուութեան տեղեկագիրն նկատողութեան առնելու մասին:

Է. Նիստ, 25 Օգոստ. 1878. Մէրեհմ-Գուլի Էֆէնտիփ տառաջարկութիւնն ընդունուելով ի տեղեկագրութիւն առ Վարչութիւն ճղեալ

30. Տեղեկագիր հաւարատութեան կը-տակական Ժողովոյ 1876—77 ամի:

Է. Նիստ, 25 Օգոստ. 1878. Չեռնհասութեան ճղեալին ճղեալ

31. Առաջարկութիւն 9 երեսօխանաց' Վանէն գրուած և հարատուութեան վերաբերեալ նախակի մը նկատմամբ, որ Մասիս լրագրոց մէջ հրատարակուած էր:

Է. Նիստ, 25 Օգոստ. 1878. Չեռնհասութեան և Յարարեութեան միացեալ ճղեալին ճղեալ

33. Հարցում Պէհեան Թ. Էֆէնտիփ' Պատրիարքական նախկին փոխանորդին դատաստանին ելլոցը նկատմամբ:

Է. Նիստ, 25 Օգոստ. 1878. Առ Ս. Պատրիարք Հոյրն ի տեղեկագրութիւն ճղեալ

ՄՆԱՅՈՐԴ ԽՆԴԻՐԻՔ ՇՐՋԱՆԻ 1879 ԱՄԻ

14. Առաջարկութիւն երկոց երեսօխանաց վասն ընտրութեան Քեննիշ Եանձնախորհրի Քեննիշոցն ի Հոյսատան: [59րդ խնդիր շրջանի 1878 ամի]:

Բ. Նիստ, 18 Մայիս 1879. Խորհրդարանական Յանձնախորհրի և Մայր Դիւանին ի Քեննիշութիւն և ի տեղեկագրութիւն ճղեալ

26. Առաջարկութիւն Բաղ. Ժողովոյ Ազգ. Մահմանագրութեան Գաղղիերէն և Անգղիերէն լեզուաց թարգմանել տալու մասին:

Զ. Նիստ, 6 Յուլիս 1879. Նախածեռութեան ճղեալին ճղեալ

32. Աղերագիր Տ. Երեսիս քահանայի Խասգիւղի [22րդ խնդիր շրջանի 1878 ամի]:

Ը. Նիստ, 40 Օգոստ. 1879. Զարթանձ անօրինեւրու և իւր անօրէնութիւնն առ Ազգային Ժողով հարցողեւր սրայմանաւ Վարչութեան ճղեալ

43. Հարցում Պառնասեան Էֆէնտիփ' դատարարութեան յատկացեալ 50000 դրէի նկատմամբ:

Ժ. Նիստ, 24 Սեպտ. 1879. Ժողովին մատուցեալ. Անորոշ

48. Առաջարկութիւն Պէրայէրեան Ռ. Է. Քէնտիփ նախնական կրթութիւնն ձրի լինելու մասին:

ԺԳ. Նիստ, 2 Նոյեմբ. 1879. Դատարարութեան ճղեալին ճղեալ

55. Առաջարկութիւն Փափաղեան Ս. Է.

ԺԲ Նիստ, 49 Հոկտ 1870. Ժողովն որո.

Ֆէնտիի՝ Վանայ մէջ Արարտեան ընկերութեան բացած վարժարանացին նկատմամբ երած տարածայնութեան քննութեան մասին:

57. Հարցումն Տերեմար էֆէնտիի Քաղ-ժողովականաց հրատարակման մասին:

64. Առաջարկութիւն Փափազեան Ս. է-Ֆէնտիի՝ հիւպատոս հաստատուած Հայաստանի բաղարաց մէջ լեզուագէտ արատիրակներ կարգելու մասին:

66. Թիֆլիզի Գայիանեան Հայ օրհորդաց Ուսումնարանին նախնադու Պ. Խաչատուր Առուանեանցի մէկ առաջարկութիւնը:

68. Տեղեկագիր Երեսօրհանական ընտրութեան Եւզոկիոյ:

չեց սոյն առաջարկութիւնն յղել Վարչութեան առ ի անօրինել զարժանն և անզեկագրել: Յղեալ

Ժ. նիստ, 19 Հոկտ. 1879, Ժողովն որոշեց յղել առ Վարչութիւն. Յղեալ

Ժ. նիստ, 30 Նոյեմբ. 1879. Իրաւասութեան և Նախաձեռնութեան միացեալ դիւանաց Յղեալ

Ժ. նիստ, 14 Դեկտ. 1879. Կաշուածոց և Գաստիրակութեան միացեալ դիւանաց Յղեալ

Ժ. նիստ, 8 Փետր. 1880. Ժողովն ընտրեալ Երեսօրհանին հանութիւնն առնել յետոյ սոյն տեղեկագիրը նկատողութեան առնուլ որոշեց: Թրածգեալ

Ատեմաղայիք
Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ

Ծ Ր Ա Պ Ի Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

ՆԵՐԿԱՅՍԵԱԼ

Ի ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԷ

ԵՒ ԲԱՐԵՓՈՒԵԱԼ

Յ Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ Ա Յ Դ Ի Ի Ա Ն Է Ն Ա Ջ Դ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ

ՄԵՄՆ ԵՌԱԶԻՆ

ԲԱՂԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մ Ա Ղ Կ Ո Յ

30ԴՈՒԱՄ 1. Թաղ մը կամ թաղի մը մէկ մասը (307. 24 ա.) կրնայ ծաղկոց մ'ունենալ եթէ 3-6 տարեկան [307. 38 Բ. եւ Գ.] երկսեռ մանկանց թիւը առ նուազն քսանի հասնի:

2. Ծաղկոցը դպրոցին հետ մէկ յարկի տակ կրնայ ըլլալ, բայց պէտք է իր նպատակին յարմար զատ սրահ, զբօսափայր եւ ճեմիչներ ունենայ:

3. Ազգաստիկ մանկունք ձրի կընդունուին եւ անոնց դաստիարակման պիտոյրը ձրի կը հոգացուին. խի ունեւոր ծնողք ըստ կարողութեան

թոշակ կը վճարեն՝ զոր Հողաբարձուն կ'որոշէ [307. 48]:

4. Ծաղկոցի ծախքերը թաղային դպրոցի արկղէն կը հոգացուին եւ անոր հասոյթը նոյն արկղին կը պատկանին (307. 38):

5 ա. Ծաղկոց կ'ընդունուին 3 տարեկանէն (3ը լրացուցած) մինչեւ 6 տարեկան մանկունք:

Բ. Արտաքոյ կարգի բացառութիւնք կ'ըլլան այն մանկանց համար՝ որք թէ եւ արգէն դպրոցական տարիք ունին, բայց զեռ չեն կրնար դպրոց ընդունուիլ (307. 38 Բ.):

6 ա. Ծաղկոց ընդունուելու համար մանկունք պէտք է ունենան ծննդեան, մկրտութեան եւ պատուաստի վկայականք:

Բ. Տարախոսիկ հիւանդութիւն եւ մասնաւոր խնամքի կարօտ պակասութիւն ունեցող մանկունք չեն ընդունուիր:

7. Մանկանց ընդունելութիւնը որոշեալ ժամանակ չունի:

8. Մաղկոցի նպատակն է մանկանց մարմնական, բարոյական եւ մտաւոր ոյժերը զարգացնել եւ զանոնք կանոնաւոր աշխատութեան, ճշգրտութեան եւ կարգաւորութեան վարժեցնել:

9. Մաղկոցի զբաղմունքներն են՝

1. Մանկական աղօթքներ, վէպեր, ոտանաւորներ եւ երգեր, բերանայի աշխարհիկ պարզ լեզուաւ,
2. Մտաւոր հաշիւներ 1—10 թիւերու վրայ,
3. Յրէտպիւնան զրուիեամբ զանազան կրթութիւնք,
4. Մարմնամարզական խաղեր եւ շարժումներ,
5. Կարգաւ գրելու սկզբունք ձայնական ոճով եւ իրադրութեան հետ միացած, միայն բարձրագոյն խմբակին, եթէ մանկանց զարգացման աստիճանը կը ներէ:

10 ա. Մաղկոցաց ընդհանուր ծրագիրն ու կրթական միջոցները կեդրոնական կրթական Տեսչութիւնը կը գծէ:

բ. Մաղկոց մը կրնայ իր մասնաւոր ծրագիրն ունենալ, բայց պէտք է կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան վաւերացեալ ըլլայ:

11. Երկու ամիսն անգամ մը եւ ի պահանջել հարկին աւելի յաճախ՝ Գարոցի Տեսուչ-վարժապետն ու ծաղկոցի դաստիարակուհին խմբակներու զբաղմունք բաշխումը կ'ընեն եւ ժամանակացոյցը կը շինեն:

12 ա. Մաղկոցի մանկունք իրենց տարիքին եւ զարգացման համեմատ խումբերու կը բաժնուին:

բ. Եթէ մանկանց թիւը 30 էն աւելի ըլլայ՝ օգնական դաստիարակուհի մը [Յօդ. 48] կաւելնայ, իսկ եթէ 60ի հասնի՝ երկու սրահի կը բաժնուին եւ իւրաքանչիւր սրահի մանկանց թւոյն համեմատութեամբ պաշտօնեայ կը կարգուի:

13. Մաղկոցի զբաղմունքը կը տեւէ առ առաւելն օրը 4 ժամ, բայց զբառնաց ժամանակէն:

14. Մաղկոցը կուենան՝

1. Տուժար ընդունելութեան,
2. Յուցակ զբաղմունք կամ ժամանակացոյց,
3. Յուցակ բացակայութեանց,
4. Օրագրութիւն դաստիարակի կամ դաստիարակուհուց,
5. Տեսար զխտորութեանց,
6. Յուցակ գոյից եւ կրթական առարկայից

15. Մաղկոցի մանկանց կրթութիւնը զլիաւորապէս դաստիարակուհուց մը կը յանձնուի, իսկ երբ անկարելի ըլլայ ձեռնաս դաստիարակուհի գտնել՝ դաստիարակի մը:

16 ա. Մաղկոցաց դաստիարակները կամ դաստիարակուհիները Հոգաբարձուք կրնան Տեսուչ-վարժապետաց կամ վարժուհեաց եւ այցելու Տեսչաց կարծիքն առնելով (Յօդ. 486 Բ.):

բ. Նոյն եղանակաւ կը սահմանուի եւ անոնց ռոճիկը (Յօդ. 489):

17. Մաղկոցի դաստիարակուհի կրնան ըլլալ անոնք որ առ նուազն 17 տարեկան են եւ սահմանեալ Արտօնագիրն ունին. իսկ դաստիարակ կըլլան անոնք՝ որ նոյն Արտօնագիրն ունին եւ առնուազն 20 տարեկան են (Յօդ. 297 եւ 306 ա.):

18 ա. Մաղկոցի օգնական դաստիարակ կամ դաստիարակուհի կըլլան անոնք՝ որ ստորին գարոցի մը մէջ օգնական աշակերտի կամ աշակերտուհուց շրջանը լրացուցած եւ վկայական ստացած են (Յօդ. 238 եւ 256), բայց դեռ օրինաց պահանջած տարիքը չունենալուն համար [Յօդ. 17] սահմանեալ Արտօնագիրը չեն առած:

բ. Մաղկոցի օգնական-դաստիարակուհիք պէտք է առ նուազն 14 տարեկան, իսկ օգնական-դաստիարակը 17 տարեկան ըլլան:

գ. Օգնականաց ընտրութիւնը կ'ընեն եւ ռոճիկը կը սահմանեն Հոգաբարձուք՝ Տեսուչ-վարժապետին եւ Գաստիարակին կամ Գաստիարակուհուց կարծիքն առնելով (489 ա. եւ 490):

19. Մաղկոցը՝ Այցելու Տեսչին, Թաղային

գարոցի Հոգաբարձուին եւ իրմէ կարգեալ Ինձակալուհուցն եւ Տեսուչ-վարժապետին կամ վարժուհուցն հսկողութեանը ներքեւ կը գտնուի:

20. Օրինաց միւս յօդուածներ՝ որք ոչն Գլխոյ յօդուածոց մասնաւոր արամագրութիւններովը չեն բարեփոխած, Մաղկոցաց ալ կը վերաբերին:

ԳԼՈՐԾ ԵՐԿՐՈՐԸ

Թ Ա Ղ Ա Յ Ի Ն Դ Պ Ր Ա Յ Բ

Ա.

Կազմութիւնը դպրոցական բաղի

21. Թաղ մը իր ընդարձակութեանը կամ բազմամարդութեանը պատճառաւ կրնայ երկու կամ աւելի գարոց ունենալ Թաղային Ժողովոյ որոշմամբն ու ի օրինակ կեդրոնական եւ ի Գաւառս Գաւառական կրթական Տեսչութեան հաւանութեամբ:

22 ա. Մէկէ աւելի գարոց ունեցող Թաղ մը միայն մէկ կրթական Մտուկ կուենանայ, եւ Թաղային Ժողովը իւրաքանչիւր գարոցի պիտոյց համեմատ կորոչէ նորա ծախուց յատկանալիք գումարն:

բ. Նոյնպէս Թաղին կրթական հաստատուն եկամուտն անբաժան կը մնայ մինչեւ որ Թաղային օրինաց համաձայն Թաղին ուրոյն գարոց ունեցող մասերն առանձին Թաղ կազմելով ունենան առանձին մտուկ եւ հաստատուն եկամուտ, որոյ բաժանման եղանակն կորչէ կեդրոնական կամ Գաւառական Վարչութիւնն, Թաղային Ժողովոյ կարծիքն առնելով:

23. Եթէ փոքրիկ Թաղի մը երկուստ աշակերտաց թիւը 20էն նուազ ըլլայ եւ միջոց չունենայ գարոց հիմնելու, կրնայ մերձակայ Թաղի մը հետ մէկ գարոց ունենալ Թաղային Ժողովոց որոշմամբն եւ կեդրոնական կամ

Գաւառական կրթական Տեսչութեան հաւանութեամբն:

24. Միացեալ գարոց ունեցող Թաղերու Գարոցական Հաստատուն եկամուտներն ուրոյն, իսկ Արկղը միացեալ կըլլայ:

Բ.

ԳԱՐՏԻՔ ԵՒ ԵՐԱԿՈՒՆԻՔ ԹԱՂԻՆ

1. Գայմսեր հիմնարկութեան դպրոցի, դպրոցատեղիք եւ այլ պիտոյք

25 ա. Ամէն Թաղ նախ եւ առաջ պարտական է Ատորին գարոց մը հիմնելու (Յօդ. 67):

բ. Եթէ Թաղ մը պէտք եղածին չափ հասոյթ ունի՝ պարտաւոր է Բարձրագոյն գարոց հիմնելու (յօդ. 68):

գ. Թաղ մը այս պարտականութիւններէն ազատ է՝ եթէ բարեգործական վարժարանի մը միջոցաւ կը հոգացուի իր մանկուոյն կրթութիւնը՝ Օրինաց արամագրութեանց համաձայն:

26 ա. Իւրաքանչիւր Թաղի Թաղային Ժողովը կորոչէ Թաղին մէջ հիմնուելիք զըզրոյին աստիճանը եւ կեդրոնական կամ Գաւառական կրթական տեսչութիւնը կը վաւերացնէ:

բ. Թաղային Ժողով մը հիմնուելիք զըզրոցի մասին իր բրած որոշումը ներկայած առան պէտք է ներկայէ միանգամայն անոր Հաստատուն եկամտին եւ գարոցական Արկղին վիճակն ու գարոցին տարեկան պիւտճէն:

27 ա. Եթէ Գօլտոյ եւ իր արուարձաններուն մէջ Թաղ մը միջոց ունենայ, բայց Թաղ. Ժողովը անիոյթ ըլլայ իր մանկուոյն կրթութիւնը հոգալու Օրինաց արամագրութեանցը համաձայն՝ կեդրոնական կրթական Տեսչութիւնը տարուան մը մէջ երեք ազգաբարոթիւն ընելէ ետք՝ խնդիրը Վարչական Թորհրդին կը ներկայէ, որ յետ քննութեան Թաղային Ժողովը կըլուծէ եւ նոր Ժողովոյ ընտրութիւն կատարել կուտայ ըստ օրինի:

Եթէ այդ ժողովը ալ մինչեւ մէկ տարի Օրինաց սահմանած դպրոցը չի հիմնէ՝ Վարչական Խորհուրդը զայն ալ կը լուծէ եւ ըստ 54 Յօդուածոյ Քաղաքին Օրինաց անժամանակեայ Քաղաքին ժողով կազմէ կրթութեան բարեկամ անձերէ եւ հրահանգ կու տայ անոր թաղին միջոցներուն համեմատ դպրոց հիմնելու :

Բ. Եթէ նմանօրինակ դէպք մը տեղի ունենայ գաւառաց մէջ՝ Գաւառական կրթական Տեսչութիւնը խնդիրը կը ներկայէ Գաւառական Վարչութեան որ նախընթաց պարբերութեան տրամադրութեանց համաձայն կը վարուի պարտազանց Քաղաքին ժողովոյ հետ եւ կը տեղեկագրէ առ կեդր. Վարչութիւնն : Եւսկ եթէ Գաւառական ժողով մը միանգամայն Քաղաքին ժողովոյ պաշտօն վարելով՝ նայն պարտազանցութեան մէջ գտնուի, կեդր. Վարչութիւնն յետ երկոց ազդարարութեանց խնդիրն Ազգ. ժողովոյ կը ներկայէ :

28 ա. Այն թաղն որ Ստորին դպրոց չունի կամ թէ եւ ունի բայց Օրինաց պահանջած վիճակին մէջ չէ՝ իրաւունք չունի Բարձրագոյն դպրոց հիմնելու :

Բ. Եթէ Քաղաքին ժողով մը սոյն տրամադրութեան հակառակ վարուի՝ նախընթաց յօդուածի տրամադրութեանց ներքեւ կ'ընայ :

29. Եթէ թաղ մը անկարող է Ստորին կամ Բարձրագոյն դպրոց հիմնելու կամ անոր բոլոր ծախքն հոգալու՝ կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութիւնը զայդ քրննել եւ ստուգելէ ետք՝ փոյթ կը տանի կարելի եղած ձեւաւորութիւնն ընելու :

30 ա. Իւրաքանչիւր թաղ պարտաւոր է կեդրոնական կրթական Տեսչութեան հրատարակեալ հրահանգին համաձայն դպրոցի շէնք կառուցանել կամ դպրոցի համար յարմար տուն մը վարձել եւ անոր գրասեղաններն ու այլ կահերն հոգալ եւ կամ եղածները նոյն հրահանգաց համաձայն վիճակի մէջ դնել :

Բ. Իւրաքանչիւր թաղ պարտաւոր է ունենալ իր վարժարանին մէջ մատենադարան մը վարժապետաց եւ աշակերտաց համար եւ ուսմանց այն ընդհանուր դասական միջոցները :

զոր կեդրոնական կրթական Տեսչութիւնը կը սահմանէ (յօդ. 74) :

գ. Իւրաքանչիւր թաղ պարտաւոր է դպրոցի շէնքին քով աշակերտաց թուոյն համեմատ դրօսավայր, եւ հոգադորձական տեղերը միանգամայն պարտէզ կամ բանջարանոց մ'ուռննալ :

31 ա. Աշակերտուհիք կրնան աշակերտներէն զատուիլ՝ եթէ Ստորին դպրոցի աշակերտուհեաց զուտարն 30ն անցնի, եւ Բարձրագոյն Դպրոցի երկու բարձրագոյն կարգերն առնուազն 20 աշակերտուհի պարուհակեն :

Բ. Եթէ թաղային ժողով մը ազջկանց համար զատ դպրոց հիմնելու որոշում ընէ՝ պէտք է Օրինաց 26դ յօդուածին համաձայն վարուի :

32 ա. Թաղ մը կրնայ Քաղաքին ժողովոյ որոշմամբ եւ Գաւառական կամ կեդրոնական Տեսչութեան հաւանութեամբ իր մէջ գտնուած մասնաւոր անձի կամ ընկերութեան վարժարանին միջոցաւ հոգալ իր մանկատոյն կրթութիւնը՝ նպաստ մը տալով անոր :

Բ. Թաղին եւ մասնաւոր վարժարանին մէջ պէտք է այդ մասին յատուկ դաշնագիր կրքուի հետեւեալ սկզբանց համաձայն .

1. Յմանդակեալ վարժարանի կազմութիւնն ու պաշտօնէից հանգամանքները պէտք է Օրինաց տրամադրութեանց համաձայն ըլլան եւ անոր տեսչութիւնը Ազգ. կրթական իշխանութեան համարատու ըլլայ :

2. Թաղին բոլոր չքաւոր մանկուհիքը ձրկապէս ընդունուին :

3. Նպաստի եղանակը եւ թոշակաց ատիճաններն ու քանակութիւնը Քաղաքին ժողովը որոշէ (յօդ. 46) :

33. Դպրոցի մը շէնքը կամ անոր մէկ մասը ուրիշ ու եւ է բանի չի կրնար գործածուիլ առանց Գաւառական կամ կեդրոնական կրթական Տեսչութեան հաւանութեանը :

34 ա. Այցելու Տեսուչը եթէ դպրոցի (կամ ծաղ'ոցի) մը տեղն ու շէնքը կամ գրասեղանները աշակերտաց առողջութեանը վնասակար կամ անյարմար գտնեն՝ կազդարարեն Լոգարարձուին որ պէտք եղած դարձանք

տարուի : Եթէ մէկ ամիս միջոցաւ երեք ազդարարութեան ետք՝ իրենց զիտողութիւնը նկատողութեան առնուած չըլլայ՝ խնդիրը կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան կը ներկայեն :

Բ. կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութիւնը Լոգարարձուին բացատրութիւն պահանջելէ ետք՝ իր որոշումը կը ընէ եւ զայն տեղւոյն Քաղաքին ժողովին կը հաղորդէ :

գ. Գաւառական կրթական Տեսչութեան որոշմանը դէմ կարելի է բողոքել կեդրոնական կրթական Տեսչութեան, որուն վճիռը վերջնական է :

դ. Եթէ դպրոցի մը շէնքը խարխուլ ու վտանգաւոր վիճակի մէջ ըլլայ՝ Այցելու Տեսուչը կազդարարէ Լոգարարձուին որ աշակերտք անմիջապէս արձակուին, եւ խնդիրը տեղեկագրէ կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան :

ե. Եթէ Քաղաքին ժողովը անփոյթ զըստուի իրաց վիճակին դաշման տանելու՝ Գաւառական կամ կեդրոնական կրթական Տեսչութիւնը Օրինաց 2 դ յօդուածին համաձայն կը վարուի :

35. Վարժարանաց եւ գրասեղանաց շինութեան կամ կարելու նորոգութեան ձեռնարկելէ առաջ՝ պէտք է կեդրոնական կամ Գաւառական Տեսչութեան տեղեկագիր ներկայել եւ անոր հաւանութիւնն ստանալ :

2. Դրամական միջոցք

ՀԱՅ ՏԵՍՏՈՒՆ ԵՎ ԱԵՍՈՒՆ

36. Իւրաքանչիւր թաղի Դպրոցական Հաստատուն եկամուտ են՝

- 1. Յանուն վարժարանաց կալուած, շէնք կառուց եւ հաստատուն եկամտի սահմանեալ նուէրք :
- 2. Թաղին միւս կալուածոց եւ շէնքաց հաստիւն 2/3ը :
- 3. Քաղաքին մատուկի հաստիւն 5/10ը :
- 4. Վարժարանաց հաստիւն յաւելեալ մասն :

կրթական Խորհրդականութիւնը կը սինդէ իւր ծրագրին յօդուածին վրայ, որ էր :

Յօդ. 36. — Իւրաքանչիւր թաղ պէտք է յատուկ դպրոցական Հաստատուն եկամուտ ունենայ, որոյ աղբիւրներն են .

- 1. Քաղաքին եկեղեցւոյն պատկանեալ կալուածներուն երկու երրորդը :
- 2. Յանուն թաղային դպրոցին եղած նուէրներն ու կտակները :
- 3. Թաղին մէջ գտնուած հարիւր ոսկիէն վեր արժէք ունեցող անշարժ ստացուածոց արժէքին վրայ տարեկան տուրք երկու առ հազար :
- 5. Թաղին մէջ նոր բնակութիւն հաստատողը կը վճարէ մէկ մէճիա :
- 6. Հարսէ եւ փեսէ մէյմէկ մէճիա :
- 7. Նորածին մանկան համար մէկ մէճիա :
- 8. Դպրոցի եւ ուսումնարանի արկղաց հասոյթին յաւելեալ մասը :

Բ. Չունեւորները ազատ են 5-7 տուրքերէն :

37. Քաղաքին ժողովը եւ Լոգարարձուք պէտք է ամէն ջանք ի գործ դնեն որ հաստատուն եկամուտը որ մը այնպիսի վիճակի հասնի որ կարելի ըլլայ տարրական կրթութիւնը (յօդ. 25) ձրի մատակարարել թաղին բոլոր մանկատոյն :

Կրթական արկղ

38 ա. Իւրաքանչիւր թաղային մատուկ կրթութեան յատկացեալ հաստիւնց համար մասնաւոր ճիւղ մ'ունի, որ կրթական Արկղ կանուանի եւ Լոգարարձուին տրամադրութեան ներքեւ կը գտնուի : Այս հասոյթներն են՝

1. Հաստատուն եկամտի տարեկան հասոյթը (Յօդ. 36).

2. Ռազ. Ընտանի հասոյթից 40% ը.

3. Աշակերտաց թոշակները կամ դպրոցական տուրքը (Յօդ. 46) եւ մուտքի տուրքը (Յօդ. 47 Բ.)

4. Կրթութեան գանձանակներուն հասոյթը (յօդ. 41).

5. Մասնաւոր նպաստք եւ նուէրք.

6. Մեղաց եւ պաշտօնէից վճարած տուգանքը (Յօդ. 51, 222 Բ. եւ 223 Բ.).

7. Տարեկան հանդանակութիւն (Յօդ. 39 ա.) Բ. Երբ հաստատուն եկամտան օրինաց տրամադրած վիճակին հասնի (Յօդ. 37) 3 եւ 7 ազրիւրները կը ջնջուին եւ միւսներէն դոյացած հասոյթը հաստատուն եկամտին վրայ կը բարդուի:

Կրթական խորհրդականութիւնը կը սփռէ իւր Յօդուածն անփոփոխ պահել, որ էր.

38 ա. Դպրոցական արկղի աղբիւրներն են՝

1. Հաստատուն եկամտի տարեկան հասոյթը (Յօդ. 36).

2. Աշակերտաց թոշակները կամ դպրոցական տուրքը (Յօդ. 46) եւ մուտքի տուրքը (Յօդ. 47 Բ.).

3. Կրթութեան գանձանակներուն հասոյթը (Յօդ. 41).

4. Մասնաւոր նպաստք կամ նուէրք.

5. Մեղաց եւ պաշտօնէից վճարած տուգանքները (Յօդ. 51, 222 Բ. եւ 223 Բ.)

6. Դասական պիտոյից վաճառմանէ դոյացած հասոյթը (Յօդ. 57 Բ.).

7. Տարեկան հանդանակութիւն (Յօդ. 39 ա.):

Բ. Երբ հաստատուն եկամտար Որինաց տրամադրած վիճակին հասնի (Յօդ. 37) 2 եւ 7 ազրիւրները կը ջնջուին եւ միւսներէն դոյացած հասոյթը հաստատուն եկամտին վրայ կը բարդուի:

39. Եթէ Կրթական արկղի հասոյթները չը բուեն Դպրոցին ծախուց, Քաղային ժողովը կոնայ հանդանակութեան ձեռնարկել իւր թաղին մէջ Կեդրոնական կամ Գաւառական Վարչական Խորհրդին ծանուցանելով:

40. ա. Քաղք իրենց վարժարանաց եւ եկեղեցեաց մէջ կրթական գանձանակներ կը հաստատեն եւ դանձք ամիսն անգամ մը թաղին սէջ կը շրջեցնեն:

Բ. Դպրոցի բոլոր պաշտօնեայք բացատրելու են աշակերտաց Կրթական գանձանակի նպատակը եւ յորդորելու են դանձք որ մասնակցին անոր: Եկեղեցական Հարք ալ նոյն յորդորը ընելու են ժողովրդեան:

41. Կրթական հաստատուն եկամտար անհպելի է եւ անոր, ինչպէս եւ դպրոցական արկղի հասոյթը որ եւ է ուրիշ բանի շի գործածուի:

42. Հաստատուն եկամտից անօրինութիւնը Քաղական Խորհրդին կը պատկանի, իսկ Կրթական արկղինը՝ Կրթական Հոգաբարձութիւն:

43. Դպրոցական կալուածները պէտք է ապահովութեան դրուին, կալուածագրերը ինստօք պահպանուին եւ միանգամայն առանձին տուժարի մէջ արձանագրուին, զրամագլուխը ապահով կերպով շահեցուի եւ կալուածները օրինաւոր պայմանագրով վարձուտրուին: Այս մասին Քաղային Վարչութիւնը պատասխանատու են Քաղային ժողովոց եւ Քաղային ժողովք Գաւառական կամ Կեդրոնական Վարչութեան:

44. ԶՆՆ--՝

45. ԶՆՆ--՝

46. ա. Քաղային ժողովք պէտք է ջանան Կրթական տուրք հաստատելու, որուն բաշխման հիմը պէտք է ծնողաց կարողութիւնն ըլլայ:

Բ. Այն թաղերը ուր որ կարելի ըլլայ կրթական տուրք հաստատելու՝ թոշակ կառուուի ունեւոր ծնողներէ, եւ Քաղային ժո-

Գ.

ՊԱՐՏԻՔ ԵՒ ԻՐԱՆՈՒՆԵՔ ԾՆՈՂԱՅ ԵՒ ԱՇԱԿԵՐՔ

1. Պարտիք եւ իրաւունք ծնողաց

49 ա. Մեղքը պարտին իւրեանց զաւակներն 7էն մինչեւ 15 տարեկան, որ զըպրոցական տարիքն է, նախակրթարանէ կըրկիլ վարժարան կամ Բարձրագոյն նախակրթարան դրիւ, եթէ իրենց թաղին մէջ արդէն հաստատուած են այսպիսի դպրոցք:

Բ. Երբ աշակերտ մը՝ 15 տարեկան հասակէն առաջ իր թաղին մէջ գտնուած դըպրոցին շրջանն աւարտելով վրայագիր կատասայ, ծնողքին պարտականութիւնը կը զազրի:

Գ. Մեղքը պարտաւոր են հոգ տանել որ իրենց զաւակունք կանոնաւոր կերպով եւ մաքուր ու կոկիկ վիճակի մէջ դպրոց յաճախեն:

50 ա. Դպրոցի նոր շրջանը սկսելէ գէթ մէկ շաբաթ առաջ քահանայք կը ծանուցանեն եկեղեցեաց մէջ որ դպրոցական տարիք ունեցող մանկունք ժամանակին դպրոց խորհուին. նոյն ազգաբարութիւնը կընեն եւ Հոգաբարձուք՝ ծնողաց եւ աշակերտաց վերաբերեալ Օրինաց տրամադրութիւններն ալ յիշելով [Յօդ. 49, 52, 58, 60, 61]:

Բ. Նոր շրջանը՝ (Մայիս) սկսելէ շաբաթ մը ետք Հոգաբարձուք ազգաբարութիւն կընեն դպրոց յի զրկուած տղայոց ծնողաց եւ պատճառները կը հասկնան, եւ եթէ չբաւարութիւն է՝ պէտք եղած դարմանը կը տանին Ազգատախանայ Հոգաբարձութիւն օգնութեամբ (Յօդ. 391):

51 ա. Եթէ ծնողք կամ պաշտպան մը Օրինաց 49 ա. յօդուածին հակառակ վարուի եւ Հոգաբարձուէն երկիցս ազգաբարութիւն ընդունելէ յետոյ նոյն ընթացքը շարունակէ՝ Քաղային Դատարանին առջեւ կը կոչուի եւ կը խրատուի: Երկրորդ անգամ զատարանն 5էն 20 դուրուշի տուգանաց կը զատապարտէ պարտազանցն: Երրորդ անգամ տուգանքը կը

զողք կ'որոշեն անուելիք թոշակի քանակութիւնն ու աստիճանները, որուն հիմը դարձեալ ծնողաց կարողութիւնն պէտք է ըլլայ:

Գ. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը ընդհանուր կանոնագիր մը կը շինէ Կրթական տրոց եւ թոշակաց, ինչպէս եւ մուտքի տրոց եւ տուգանաց (Յօդ. 47 եւ 51 ա.) համար:

Դ. Քաղային ժողովոց այս մասին շինած մասնաւոր կանոնագրութիւնները պէտք է այդ ընդհանուր կանոնագրի սկզբանց համաձայն ըլլան եւ Կեդրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութեան վաւերանան:

47 ա. Կրթական տուրք հաստատուած թաղերու դպրոցները ձրի են բոլոր աշակերտաց համար. ի բաց առեալ կրթական տրոց չմասնակցող կարող ծնողաց զաւակներն, իսկ թոշակ հաստատուած թաղերու դպրոցները ձրի կընդունուին միայն չքաւոր ծնողաց զաւակունք:

Բ. Թոշակ հաստատուած թաղերու կարող աշակերտներէն մուտքի տուրք ալ կ'առնուի, որուն աստիճաններն ու քանակութիւնը Քաղային ժողովք կ'որոշեն:

Գ. Աշակերտաց դպրոցական պիտոյքը ձրի կը մատակարարուին:

Կրթական խորհրդականութիւնն համաձայն չէ սոյն Յօդուածի Գ. պարբերութեան, որ չկար իւր ծրագրին մէջ. և յորում՝ Ա. Պարբերութեան վերջը կցուած էր հետեւեալը. «որոց դպրոցական պէտքերն ալ ձրի կը հոգացուին ըստ վկայութեան Ազգատախանայ Հոգաբարձութիւն»:

48. Քաղային ժողովոց հաստատուած կանոնագրին համաձայն՝ Դպրոցաց Հոգաբարձուք կ'որոշեն իւրաքանչիւր ծնողքի վճարելիք թոշակն ու մուտքի տուրքը՝ անոնց վիճակին վրայ հիշող տեղեկութիւն ասնելէ յետոյ:

կրկնապատկուի եւ՝ եթէ չվճարուի՝ դատապարտութիւնը կը ծանուցուի Ժողովրդեան : Երբ այս ամեն միջոցը ապարդիւն մնան, խընդիրը Բաղ. Ժողովոյ կը ներկայի որ զայն քննելէ յետոյ պատուէր կու տայ Թագային Վարչութեան որ պարտազանցին գործերն, բայց ի կրօնական պէտքերէ, շահեսուին եւ միանգամայն խնդիրը կը ներկայէ Կեդր. կամ Գաւ. Վարչութեան՝ որ պարտազանցութեան աստիճանին համեմատ 6 ամիսէն մինչեւ 2 տարի ընտրական իրաւունքէ կը զրկէ պարտազանցը :

Բ. Նոյն ընթացքը կը բռնուի եւ անոնց զէմ՝ որք որոշուած թոշակը կամ գպրոցական տուրքը չեն վճարեր, տղայոց գպրոցական պէտքերը չեն հոգար եւ անոնց կանոնաւոր կերպով գպրոց յաճախելուն անխոյժ կըլլան :

52. Եթէ ծնողք իրենց զաւակները ուրիշ վարժարան կը խրկեն կամ տունը կը կրթեն՝ պէտք է տեղեկութիւն տան այդ մասին թագային գպրոցի Հոգաբարձուին :

53. Այցելու Տեսուչք պէտք է հսկեն որ մասնաւոր վարժարաններ յաճախող աշակերտք եւ աշակերտուհիք Սրինաց պահանջած տարրական կրթութիւնը ստանան (Յօդ. 67. 68 եւ 92) :

54. Ուրիշ թաղի գպրոց կրթութիւն առած աշակերտք պէտք է իրենց ուսմանց վկայականը ներկայեն իրենց թաղի Կրթական Հոգաբարձուին : Իսկ մասնաւոր վարժարանի մէջ կամ տունը կրթուած աշակերտք պէտք է թագային գպրոցին աւաչտական քննութեանը ենթարկուին [Յօդ. 87. ա.] :

55. Լոգաբարձուք ամեն շաբաթ եւ Այցելու Տեսուչք իրենց այցելութեանց միջոցին բացակայութեանց ցուցակները կը քննեն եւ պարտաւարտչան միջոցները ի գործ կը դնեն անոնց դարման տանելու համար :

Բ. Վարժարանը ամէն օր կամ զէթ շաբաթը երկու անգամ ծնողաց կիմացնէ աշակերտաց բացակայութիւնը եւ բացատրութիւն կուզէ :

Գ. Ներքին են միայն այն բացակայութիւնք, որոց պատճառն է անձնական հիւանդութիւն, հիւանդութիւն կամ մահ ընտանեաց մէջ եւ օդի չարականց զէշութիւն : Ասոնցմէ գուրս եղած բացակայութեանց ներքին կամ աննրերէի ըլլալը Այցելու տեսուչք կորոշեն Հոգաբարձուաց եւ Տեսուչ-վարժապետաց կամ վարժուհեաց կարծիքն առնելէ ետք :

56. Կ. Ծնողք իրաւունք ունին իրենց զաւակաց վիճակին վրայ տեղեկութիւն ուղեւոր, բայց իրաւունք չունին ուղղակի պաշտօնէից գործին միջամտելու եւ ոչ իսկ աշակերտաց ներկայութեանը գիտողութիւններ ընելու :

Բ. Ծնողք եթէ վարժապետին կամ վարժուհոյն զէմ բողոք ունին՝ Տեսուչ-վարժապետին կը դիմեն, եթէ սորա զէմ՝ Հոգաբարձուին եւ եթէ Հոգաբարձուին զէմ՝ Թագային Ժողովին կամ Դատարանին :

57. ԶԷ--

Բայց Կրթական Խորհրդականութիւնը կը սինդէ անոր վրայ, որ է՝

57. Կ. Ծնողք եթէ անկարող են տղայոց գպրոցական պիտոյքը հողալու՝ պէտք է Ժամանակին խմայնեն Կրթական կամ Աղքատախնամ Հոգաբարձուին :

Բ. Ծնողաց գիւրութեան համար ամէն գպրոց պէտք եղած դասագրքերն ու այլ դասական նիւթերն ունենալու եւ զանոնք շուկայի գնով տալու է աշակերտաց :

2. Աշակերտք

58. Կ. Աշակերտք գպրոց ընդունուելու համար պէտք է ծննդեան եւ պատուաստի վկայականք եւ Կրթական Հոգաբարձուէն ընդունելութեան արտօնագիր ունենան :

Բ. Ստորին գպրոցի Ա. կարգը կընդուն.

ուին վեց տարեկանը լրացուցած մանչ եւ աղջիկ տղայք, եթէ անոնց առողջութեան վիճակն ու կազմուածքը եւ մտքի զարգացումը կը ներեն :

Գ. Աւելի փոքր մանկուէք չեն ընդունիր : Դ. 26ն ընդունիր նաեւ տարափոխիկ հիւանդութիւն ունեցող, ինչպէս եւ պակասաւոր տղայք, որոց ներկայութիւնը կրնայ վնասակար ըլլալ միւսներուն :

Ե. Այդպիսի տղայոց կրթութեան հոգը եթէ ազգատ ծնողաց զաւակուէք են, աղքատախնամ Հոգաբարձուին կը պատկանի, որ կը ջանայ պատշաճաւոր միջոցներ գտնել այդ նպատակին համար :

59. Կ. Ուրիշ կրօնքէ եւ աղղէ աշակերտներ ալ կընդունուին, եթէ զաստիճանութեան լեզուն կը հասկնան :

Բ. Ստոր աշակերտաց թոշակը Հոգաբարձուք կորոշեն :

60. Կ. Աշակերտք կընդունուին տարին մէկ անգամ գպրոցական շրջանին (Մայիս) սկիզբը, բայց բնակութեան փոփոխութեան պատճառաւ աշակերտք միշտ կըրնան գպրոցէ գպրոց անցնել, միայն թէ քննուելով իրենց վիճակին համապատասխանող կարգը կը շարունակեն :

Բ. Աշակերտաց կարգը վերջնական կերպով կորոշուի զէթ մէկ շաբաթուան փորձէ ետք :

61. Կ. Ուրիշ թաղի գպրոց յաճախելու համար՝ աշակերտք պէտք է իրենց թաղի գպրոցէն ուսմանց եւ վարուց վկայական ունենան, եթէ արդէն հոն յաճախած են :

Բ. Աշակերտ մը ուղղակի ուրիշ թաղի գպրոց չի կրնար ընդունուիլ առանց իր թաղի Հոգաբարձուէն վկայագիր մը ներկայելու, որուն մէջ պէտք է բացատրուած ըլլայ իր թաղի գպրոցը չի յաճախելուն պատճառը : Առանց այդ վկայագրին Հոգաբարձուք ուրիշ թաղէ աշակերտ չեն ընդունիր :

62. Եթէ աշակերտի կամ աշակերտուհոյ մը ներկայութիւնը որ եւ է պատճառաւ

միւսներուն առողջութեան կամ վարուցը վնասակար եւ կամ անոնց յառաջադիմութեանը արգելք է՝ Հոգաբարձուէն ներքին եւ Այցելու Տեսչին կարծիքն առնելէ եւ անոր ծնողաց պարտաւարտչան ազգաբարութիւնն ընելէ ետք կը ճամբէ զանի (Յօդ. 58 Է.) :

63. Կ. Դպրոցական զրադմանց միջոցին ոչ ոք կրնայ աշակերտները տեղ մը խրկել կամ զանոնք Ժամանակացոյցէն գուրս ուրիշ բանի զրազեցնել :

Բ. Դպրոցէն գուրս ոչ ոք կրնայ աշակերտները այնպիսի բանի գործածել, որ անոնց վարուցը կամ առողջութեանը վնասակար ըլլայ :

64. Աշակերտք եւ աշակերտուհիք վարուց եւ ուսմանց համար վիճակացոյց տեսրակներ կուսենան, ուր կը նշանակուին ամէն ամիս անոնց վարուց եւ կրթութեան վիճակին նիշերն ու բացակայութիւնները եւ ծնողաց կը խրկուին, որք ստորագրելով կը վերագործաձենեն Տեսչին :

—
Գ.
ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑԱՅ

1. Աստիճանք եւ նպատակք, ուսմանց ծրագիրք եւ միջոցք

65. Թագային գպրոցները երկու աստիճանի կը բաժնուին, Ստորին գպրոց եւ Բարձրագոյն գպրոց :

66. Թագային գպրոցաց նպատակն է տարրական ընդհանուր կրթութիւն տալ մանչ եւ աղջիկ տղայոց, զանոնք Փիղիքասպէս, բարոյասպէս եւ մտաւորասպէս զարգացնել եւ գործունեայ ու օգտակար անգամը հասցնել :

(ՍՊՐԻՆ ԴՂԴՂ)

67. Ստորին գպրոցը 4 տարուան շրջան եւ կ'կարգ ունի եւ կուսանդէ՝
1. կրօնք. — Կարեւոր աղօթքներ, կա-

բեւոր գիտելիք Ս. Պատմութիւնէն, սկզբունք Քրիստոնէական վարդապետութեան եւ բարոյականի եւ եկեղեցական արարողութեանց եւ տօներու պարզ բացատրութիւնք .

2. Հայերէն . — Աշխարհիկ լեզու եւ սկզբունք գրոց լեզուի, վերջինը միայն Գ. կարգին .

3. Իրազխութիւն Ա. Բ. եւ Գ. կարգաց :

4. Տարրական թուարանութիւն . — հաշիւ գրաւոր եւ մտաւոր . գրամբ, չափք եւ կշիռք . հաշուազրութեան վարժութիւնք .

5. Աշխարհազրութիւն . — կարեւորագոյն գիտելիք եւ աշխարհագծութեան վարժութիւնք . Գ. կարգին .

6. Ազգային Պատմութիւն . — կարեւոր գիտելիք Գ. կարգին .

7. Գեղագրութիւն . — տարրական վարժութիւնք .

8. Սկզբունք զձագրութեան .

9. Մարմնամարզ . — տարրական վարժութիւնք .

10. Սկզբունք ձայնական երաժշտութեան, եկեղեցական երգեցողութիւն, վերջինը միայն Գ. կարգի յարմարագոյն աշակերտաց .

11. Չեռագործ . — պարզ եւ անհրաժեշտ գործեր, աղջկանց :

12. Տնտեսութիւն . — անհրաժեշտ գիտելիք, միայն Գ. կարգի աղջկանց .

13. Օտար լեզու մը միայն Գ. կարգին՝ եթէ տեղական հանդամանք պահանջեն :

(Բ-ը):-Է-Է-Է Գ-Գ-Գ)

68 ա. Բարձրագոյն դպրոցը 6 տարուան շրջան եւ 6 կարգ ունի, որոց կը Ստորին դպրոցին կը համապատասխանեն (Տե՛ս տարրերութիւն Բ. Դ. եւ ձգ. պրք.), եւ կաւանդէ

1. կրօնք . — Ս. Պատմութիւն համառօտ . Քրիստոնէական վարդապետութիւն համառօտ . բացատրութիւն եկեղեցական ծէսերու, արարողութեանց եւ տօներու . հիմնական սլըզբութիւնք բարոյագիտութեան .

2. Հայերէն աշխարհիկ եւ գրոց լեզու, վերջինը միայն Ե. եւ Զ. կարգաց .

3. Իրազխութիւն, Ա. Բ. եւ Գ. կարգաց .

4. Յրանսերեն, Գ. Ե. եւ Զ. կարգաց .

5. Տանկերէն, Ե. եւ Զ. կարգաց, ազալոց .

6. Պատմութիւն . — Ազգային պատմութիւն համառօտ հանդերձ աշխարհագրական կարեւորագոյն գիտելիք, Գ. եւ Ե. կարգաց . ընդհանուր պատմութիւնէն կարեւորագոյն գիտելիք, Զ. կարգին .

7. Աշխարհագրութիւն . — ընդհանուր եւ Տանկաստանի համառօտ եւ աշխարհագծութեան վարժութիւնք, Գ. Ե. եւ Զ. կարգաց .

8. Թուարանութիւն, կարեւորագոյն վարժութիւնք Տօմարակալութեան . Յրանսական 2ափական դրութիւն եւ բազդատութիւն Տանկական 2ափական դրութեան հետ, Ե. եւ Զ. կարգաց .

9. Տարրական երկրաչափութիւն եւ պարզ սփորական կիրառութիւնք, Ե. եւ Զ. կարգաց . վերջինը միայն աշակերտաց .

10. Բնական գիտութիւններէն կարեւորագոյն գիտելիք եւ գլխաւոր սփորական կիրառութիւնք երկրագործութեան, ճարտարութեանց եւ առողջարանութեան վերաբերեալ, Ե. եւ Զ. կարգաց .

11. Գեղագրութիւն Հայերէն, Յրանսերէն եւ Տանկերէն .

12. Սկզբունք զձագրութեան եւ զեղագծութեան .

13. Սկզբունք ձայնական երաժշտութեան, եկեղեցական երգեցողութիւն, վերջինը միայն Գ. Ե. եւ Զ. կարգի յարմարագոյն աշակերտաց .

14. Մարմնամարզ . — տարրական վարժութիւնք .

15. Չեռագործ . ամեն ընտանեաց կարեւոր եւ օգտակար գործեր, աղջկանց :

16. Սկզբունք տնտեսութեան, միայն Զ. կարգի աղջկանց .

Բ. Գաւառաց Բարձր . դպրոցներուն մէջ տեղական պահանջմանց համեմատ Յրանսերէնի անդ ուրիշ լեզու մը եւ գործնական երկրագործութեան սկզբունք կաւանդուին .

69. Գպրոցաց մէջ աւանդեալ բոլոր ուսումներ պարտաւորիչ են . բացառութիւնք

կրնան ըլլալ միայն այն աշակերտաց կամ աշակերտուհեաց համար, որոց առողջութիւնը չի ներէր այս կամ այն դասն անհելու .

70. Կեդրոնական կրթական Տեսչութեան արտօնութիւն կը սրուի Օրինաց 67 եւ 68 յօդուածոց սահմանած ուսմանց մէջ տեղական հանգամանաց պահանջած անհրաժեշտ փոխութիւնն ընելու .

71 ա. Կեդրոնական կրթական Տեսչութիւնը կը գծէ Ստորին եւ Բարձրագոյն դպրոցի ուսմանց ընդհանուր ծրագիրը եւ կորուչ գասագրքերն ու այլ դասական ընդհանուր եւ մասնաւոր միջոցները :

Բ. կրօնական ուսմանց ծրագիրն ու գասագրքերը կը սահմանէ կրօնական Խորհրդականը ըստ 19դ յօդուածոյ Օրինաց վարչական կազմակերպութեան .

72 ա. Կեդրոնական կրթական Տեսչութեան հրատարակած գասագրքերու եւ այլ դասական միջոցներու, ինչպէ՛ս եւ մատենագարանաց գրքերու ցուցակներէն դուրս ընտրութիւնք կրնան ըլլալ, բայց պէտք է անոր վաւերացմանը ենթարկուին .

Բ. Նմանապէ՛ս սահմանեալ ընդհանուր ծրագրին համաձայն՝ դպրոց մը կրնայ իր մասնաւոր ծրագիրն ունենալ, բայց պէտք է դայն Կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան քննութեանն ու վաւերացմանը ենթարկէ (Յօդ. 70) .

73. Խրաքանչիւր դպրոցի Տեսչութեան վարժապետը վարժապետաց հետ խորհրդակցութեամբ կը շինէ ամէն երեք ամիս դասերու բաշխման ցուցակը (ժամանակացոյցը), որ պէտք է ցոյց տայ խրաքանչիւր օրուան եւ ժամու դրադմանց կարգը .

74 ա. Աւուցման եղանակներն ու կերպերը պէտք է աշակերտաց զանազան տարիքին ու կրթութեան աստիճանին համաձայն ըլլան, որպէ՛ս զի աշակերտք թէ խրաքանչիւր ուսման մէջ հիմնաւոր յառաջագիտութիւն ընեն եւ թէ՛ միանգամայն մտաւորապէ՛ս զար-

գանան եւ ինքնակրթութեան փափաք ու կարողութիւն ստանան .

Բ. Այն դաւանները՝ ուր աշակերտք հայերէն չեն գիտեր՝ դասերը պէտք է աշակերտաց հասկցած լեզուովը բացատրուին մինչեւ որ կարող ըլլան հայերէն դասախօսութեանն օգուտ քաղելու .

2. Կազմութիւն կարգաց

75 ա. Ստորին դպրոցը միայն մէկ սրահ եւ մէկ ներքին վարժապետ կունենայ՝ եթէ երկու սեռէ՛ աղայոց թիւը 30 էն աւելի չէ . իսկ եթէ 30ը անցնի՝ օգնական-վարժապետ կամ վարժուհի մը կ'աւելնայ .

Բ. եթէ աշակերտաց եւ աշակերտուհեաց թիւը 60ի հասնի՝ դպրոցը երկու սրահի կը բաժնուի եւ խրաքանչիւր սրահ երկու կարգ կը պարունակէ եւ մէկ ներքին վարժապետ կամ վարժուհի կունենայ .

Գ. Նմանապէ՛ս եթէ խրաքանչիւր կարգի աշակերտաց եւ աշակերտուհեաց թիւը 30ի հասնի՝ խրաքանչիւր կարգ կրնայ զատ գասարան եւ խրաքանչիւր գասարան մէկ ներքին վարժապետ կամ վարժուհի ունենալ .

Դ. Այդ բաժանումները տեղի կունենան Գաւառական կամ Կեդրոնական Տեսչութեան վաւերացմամբ՝ եթէ բաժանմանց եղանակը Օրինաց արամազրութեանց բոլորովին չի համապատասխանէր .

76 ա. Բարձրագոյն դպրոցի 4 ստորին կարգերը Ստորին դպրոցի կարգաց պէս կը կազմուին (Յօդ. 75) . իսկ երկու բարձրագոյն կարգերը կրնան զատ զատ գասարան ունենալ՝ եթէ խրաքանչիւր կարգի համար առ նուազն 45 աշակերտ եւ աշակերտուհի զլուուի .

Բ. Այդ երկու բարձրագոյն կարգերը մէկ սրահի մէջ կ'ըլլան եւ մէկ ընդհանուր Արտօնողի ու եցող ներքին վարժապետի կամ վարժուհւոյ կը յանձնուին՝ եթէ երկու կարգի աշակերտաց եւ աշակերտուհեաց թիւը 30էն նուազ ըլլայ .

գ. Եթէ բարձր. կարգաց մէջ աւանդուելիք ուսմանց դասերը հարկ ըլլայ քանի մը վարժապետաց մէջ բաժնել՝ պէտք է՝ ըստ կարելոյն՝ նոյնատեսակ ուսմանց դասերը մէկ վարժապետի յանձնուին :

դ. Այդ պարագային մէջ ներքին վարժապետաց կը յանձնուի իւրաքանչիւր դասարանի բարեկարգութեան եւ միւս գասատուաց դասերու ընթացքին հսկելու պաշտօնը :

ե. Հոգաբարձուք եւ մանաւանդ Այցելու Տեսուչք մասնաւոր փոյթ տանելու են որ այցելու գասատուաց թիւը կարելի եղածին չափ քիչ ըլլայ եւ իւրաքանչիւր դպրոց բաւական թուով ներքին պաշտօնեայ ունենայ :

ՅՅ ա. Դպրոցաց Տեսուչ-վարժապետք կամ վարժուհիք աշակերտաց եւ աշակերտուհեաց կարողութեան համաձայն սահմանուել կարգերը (Յօդ. 67 եւ 68) կը կազմեն :

բ. Իւրաքանչիւր կարգ պէտք է գաս գաս առնու, միայն երգի, մարմնամարզի եւ ձեռագործի դասերու ատեն կրնան կարգերը միանալ՝ եթէ աշակերտաց թիւը 30ը չանցնի :

գ. Բարձրագոյն կարգաց աշակերտք կըրնան ստորին կարգաց դասերուն ունկնդիր ըլլալ :

ՅԵ. Ստորին դպրոցի Ա. կարգը պէտք է կազմեն 7-9 տարեկան եւ Դ. կարգը առ առաւելն 13 տարեկան, իսկ Բարձր. դպրոցի 2. կարգը առ առաւելն 13 տարեկան տղայք : Արտաքոյ կարգի բացառութիւնք կըլլան Հոգաբարձուին հաւանութեամբը. եթէ ընդունելի եւ հարկեցուցիչ պատճառներ կան եւ բացառութիւնք միւս աշակերտաց որ եւ է յնաս չի պատճառեր :

ՅԶ ա. Կեդրոնական Կրթական Տեսուչութիւնը կը հրատարակէ դպրոցաց ներքին կազմութեան եւ բարեկարգութեան ընդհանուր կանոնադիրը :

բ. Իւրաքանչիւր դպրոց կրնայ մասնաւոր կանոնադիր ունենալ, բայց պէտք է ընդհանուր կանոնադիրն սկզբանցը համաձայն ըլլայ եւ Գաւառական կամ Կեդրոնական Կրթական Տեսուչութեան վաւերացեալ :

3. Երկուս. դպրոցք

ՅԹ. Երկուս. դպրոցաց մէջ աշակերտուելիք աշակերտաց կարգերուն հետ գաս կ'առնուն. բայց աշակերտուհեաց համար գաս տեղ յատկացած կըլլայ գասարանին մէջ :

ՅԱ. Այդպիսի երկուս. դպրոցք պէտք է իրենց մէջ կամ իրենց մօտ աշակերտուհեաց համար ձեռագործի գաս սրահ մը, զբոսավայր եւ ճեմփոնք ունենան. նմանապէս աշակերտուհեաց հսկողութեան ու ձեռագործի գասերուն համար վարժուհի մը :

4. Ժամանակ ուսման եւ պարապոյ

ՅԲ. Դպրոցական տարին Մայիսին կ'ըսկըսի :

ՅԳ ա. Օրուան դասերը երկու մասի կը բաժնուին, ամէն օր կէս օրէն առաջ 3 ժամ եւ կէս օրէն յետոյ երկու ժամ. իսկ շաբաթ եւ՝ եթէ հարկը պահանջէ՝ եւ չորեքշաբթի օրերը միայն կէս օրէն առաջ 3 ժամ :

բ. Գարնան եւ ամառը կէս օրին 2 ժամ, իսկ աշնան եւ ձմեռը 1 1/2 ժամ, ինչպէս եւ իւրաքանչիւր գասէ ետք 10 վայրկեան հանգիստ կը տրուի :

ՅԴ. Ժամերու եւ դասերու բաշխուիլը կրնայ տեղւոյն եւ տարւոյ եղանակին պահանջմանց համեմատ ըլլալ (Յօդ. 79 Բ.) բայց պէտք չէ որ Ստորին դպրոցի Ա. Բ. եւ Գ. կարգերը օրը 4 ժամէն եւ նոյն դպրոցի Դ. կարգը, ինչպէս եւ Բարձր. դպրոցի Ե. եւ Զ. կարգերը օրը 5 ժամէն աւելի գասառութեան զբաղին :

ՅԵ. Տարուան այլ եւ այլ արձակուրդներու ամբողջ տեւողութիւնը պէտք է առ առաւելն ութը շաբաթ ըլլայ, բաց ի սոփորական տօնելի օրերէն :

ՅԶ ա. Սփորական արձակուրդներու բաշխումն ու տեւողութիւնը Հոգաբարձուք կ'որոշեն Տեսուչ-վարժապետաց եւ Այցելու Տեսուչաց կարծիքն առնելով :

բ. Երկրագործական զբաղմանց միջոցին կրնան արտաքոյ կարգի արձակուրդք տեղի ունենալ, որոց ժամանակն ու տեւողութիւնը կ'որոշեն Գաւառական Կրթական Տեսուչութիւնք Հոգաբարձուաց եւ Այցելու Տեսուչաց կարծիքն առնելով, եւ իրենց որոշումը Կեդրոնական Կրթական Տեսուչութեան կը հաղորդեն գէթ երկու ամիս յառաջ :

5. Քննութիւնք, Կարգափոխութիւնք, Վիճակացոյցք, Վկայագիրք եւ Հանդէսք

ՅԷ ա. Քննութիւնները քառամսեայ, տարեկան եւ աւարտական են, որք կը կատարուին Կեդրոնական Կրթական Տեսուչութեան հրատարակելիք կանոնաց համաձայն :

բ. Քառամսեայ քննութիւնք Տեսուչք եւ վարժապետք կը կատարեն ի ներկայութեան Հոգաբարձուին կամ անոր օգնականաց :

գ. Տարեկան եւ աւարտական քննութիւնք կը կատարեն Այցելու Տեսուչը եւ իրմէ կազմեալ քննիչ Մասնախումբը : Այդ քննութեանց ներկայ կըլլան Թաղային Իշխանութիւնք, ծնողք եւ այլ ազգայինք :

դ. Տարեկան քննութիւններէն ետք աշակերտաց ծնողքներուն զբաւոր տեղեկութիւն (վիճակացոյց) կը տրուի իրենց զաւակաց վարուց եւ կրթութեան վիճակին վրայ. իսկ սուսմասաւարտ աշակերտաց եւ աշակերտուհեաց վկայագիր կը տրուի Տեսուչ-վարժապետէն եւ Հոգաբարձուէն ստորագրեալ եւ Այցելու տեսչէն վաւերացեալ :

ՅԸ. Տարեկան քննութիւնները դպրոցական տարեգլխէն առաջ տեղի կուսնան, որոց օրը Հոգաբարձուք կ'որոշեն Տեսուչ-վարժապետաց կարծիքն առնելով, եւ գէթ 15 օր առաջ կը ծանուցանեն Այցելու Տեսուչաց :

ՅԹ. Աշակերտաց կարգափոխութիւնը տեղի կուսնայ աարին անգամ մը տարեկան քննութիւններէն ետք, բայց ի պահանջել հարկին արտաքոյ կարգի բացառութիւնք կըրնան ըլլալ :

ՅՐ. Տարեկան քննութիւններէն ետք բոլոր ազգային վարժարանաց մէջ տարեգործի հանգէս տեղի կուսնայ, որոյ նպատակն է դպրոցաց ընթացքին եւ վիճակին վրայ տեղեկութիւն տալ ժողովրդեան եւ անոր ու դպրոցաց մէջ համակրական սերտ յարաբերութիւնք հաստատել :

6. Օրագրութիւնք եւ Յուցակք

ՅԱ ա. Ամեն դպրոց պէտք է ունենայ

1. Տուժար աշակերտութեան
 2. Օրագրութիւնք ուսմանց
 3. Օրագրութիւն տեսչական
 4. Օրագրութիւն բացակայութեանց եւ վարուց
 5. Ժամանակացոյց եւ ցուցակ ուսմանց
 6. Յուցակ գասագրոց եւ այլ գասական նիւթոց
 7. Արձանագրութիւնք քննութեանց
 8. Տեսուչի ստորագրութեանց
 9. Յուցակ դրոյց եւ գրեանց
- բ. Իսկ մէկէն աւելի պաշտօնեայ դանդաւած դպրոցները պէտք է ունենան նաեւ
10. Յուցակ պաշտօնէից եւ անոնց իւրաքանչիւր կարգի աւանդած դասերուն եւ
 11. Յուցակ բացակայութեանց պաշտօնէից :
- գ. Այս բոլոր ցուցակներն ու օրագրութիւնները պէտք է բռնուին Կեդրոնական Կրթական Տեսուչութեան տուած մասնաւոր հրահանգներուն համաձայն (Յօդ. 325 գ.) :

ՅԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

Ա.

ԿՐԿՆԵՉ ԿՍՄ ԼԲԱՅՈՒՅԻՉ ՎԱՐՃԱՐԱՆՔ

ՅԲ. Կրկնիչ կամ լրացուցիչ վարժարաններ պէտք է հաստատուին միայն այն թաղերուն մէջ՝ ուր որ առ նուազն 10 աշակերտ կը գտնուի (Յօդ. 98) :

93. Կրկնիչ վարժարանաց դասախօսութիւնը թաղային դպրոցներու մէջ կը լայն:

94. Կրկնիչ վարժարանաց ծախքերը թաղային դպրոցաց արկղներէն կը հոգացուին եւ հասոյթները նոյն արկղներուն կը պատկանին:

95. Կրկնիչ վարժարանաց նպատակն է Ասորին դպրոցաց մէջ ուսում աւարտող աշակերտաց եւ աշակերտուհեաց կրթութիւնն աւելի հաստատել եւ զան զործնական կեանքի պահանջած կարեւոր գիտելիքը ըստ կարելոյն ընդարձակել:

96. Կրկնիչ վարժարաններու ուսմանը ընթացքը 2 տարի կը տեւէ եւ 2 կարգ ունին:

97 ա. Կրկնիչ վարժարանները ամէնօրեայ չեն, այլ շաբաթը միայն երկու կէս օր դաս ունին (2-3 ժամ): չորեքշաբթի եւ շաբաթ կէս օրէն ետք (Տես. 80դ. 83 ա.):

բ. Եթէ այս կարգադրութիւնը սեւ է անյարմարութիւն ունենայ՝ դասերը երեկոնները կը տրուին շաբաթը երեք անգամ երկերկու ժամ:

98. Կրկնիչ վարժարան կընդունուին միայն Ասորին դպրոցի ուսումնաւարտ աշակերտք եւ աշակերտուհիք եւ անոք որ նոյն դպրոցի ընթացքին քննութիւնը կու տան:

99. Եթէ Կրկնիչ վարժարանաց դասերը երեկոնները տրուին՝ դպրոցաց պաշտօնեայք պէտք է իրենց աշխատութեան համեմատ առանձին վարձատրութիւն ստանան:

100. Այցելու Տեսուչք, դպրոցաց Հոգաբարձուք եւ Տեսուչ—վարժապետք միանգամայն եւ կրկնիչ վարժարանաց հսկողութիւնը, հոգաբարձութիւնն ու տեսչութիւնը կը վարեն:

101. Օրինաց միւս յօդուածոց տրամադրութիւնները՝ որք սոյն Գլխոյ յօդուածոց մասնաւոր տրամադրութեամբք բարեփոխած չեն, Կրկնիչ վարժարանաց ալ կը վերաբերին:

բ.

ԵՐԵՎԱՆԵԱՆ ԵՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐՃԱՐԱՆՔ

102. Երեկոյեան եւ Կիրակնօրեայ վարժարաններ պէտք է հաստատուին բոլոր սոյն թաղերը՝ ուր որ անոնց պէտքը կը զգացուի ըստ վկայութեան Այցելու Տեսուչք:

103. Այս վարժարանաց դասերը թաղային դպրոցներու մէջ կը տրուին:

104. Երեկոյեան եւ Կիրակնօրեայ վարժարանաց ծախքերը թաղային դպրոցաց արկղներէն կը հոգացուին եւ հասոյթները նոյն արկղներուն կը պատկանին:

105. Երեկոյեան եւ Կիրակնօրեայ վարժարանաց նպատակն է դպրոցական տարիքն անցուցած երկու սեռէ անուս անհասօր արական անհրաժեշտ կրթութիւն տալ:

106. Երեկոյեան եւ Կիրակնօրեայ վարժարանք ուսմանը որոշեալ շրջան եւ կարգեր չունին, աշակերտք կամ աշակերտուհիք իրենց վիճակին համաձայն խումբերու կը բաժնուին:

107 ա. Երեկոյեան եւ Կիրակնօրեայ վարժարանաց անհրաժեշտ ուսմանը են՝

1. Կրօնք եւ սկզբունք բարոյականի:
2. Մայրենի լեզու եւ գիր:
3. Ազգային պատմութիւն:
4. Տարրական թուարանութիւն:
5. Սյղլուներ աշխարհագրութեան:

բ. Աւելի ուսմանը ալ կրնան ստանալ տեղական պիտոյից համեմատ եւ Կեդրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութեան վերացմամբ:

108. Կիրակնօրեայ վարժարանաց միայն կիւրակէ օրերը դասախօսութիւն կը լայն ստանալն երկու ժամ կէս օրէն ստալ կամ յետոյ: Իսկ Երեկոյեան վարժարանաց մէջ ստանալն շաբաթը երկու երեկոյ երկերկու ժամ:

109 ա. Կիրակնօրեայ եւ Երեկոյեան վարժարանաց

ժարանաց աշակերտք երկու տեսակ են՝ կամ նոստաւոր աշակերտք եւ ունեկիրք:

բ. Կանոնաւոր աշակերտք կընդունուին երկու տեսակ անգամ մը, ամսագլխուն, իսկ ունեկիրք միշտ եւ ձրի:

110. Ունեկիրք ստրատուար են իրրեւ աշակերտ Հաղարձուիլ բարեկարգութեան կանոնաց, բայց իրենց դաս չի հարցուիր եւ քննութիւն չըլլար:

111 Կանոնաւոր աշակերտք դպրոցի Հոգաբարձուէն ընդունելութեան արտօնագիր ունենալու եւ՝ եթէ կարող ըլլան՝ Հափաւոր թուակ վճարելու են:

112. Այցելու Տեսուչք, Հոգաբարձուք եւ դասատուք մոյթ տանելու են որ կանոնաւոր աշակերտք շարունակարար ներկայ գրուուին դասերուն:

113 ա. Կիրակնօրեայ եւ Երեկոյեան վարժարանաց մէջ դաս տալ կրնան Հոգաբարձուաց հաւանութեամբ ամեն անաւոր, որ բարի վարուց տէր են եւ իրենց տալիք դասին պահանջած հմտութիւնն ունին:

բ. Այցելու Տեսուչք եւ Հոգաբարձուք մէկ կողմէն մասնաւոր անձանց կամ ընկերութեանց յորդոր կը կարգան որ սոյն վարժարաններուն մէջ ձրի դասախօսութիւն ընել չանձն առնուն, միւս կողմէն դպրոցաց վարժապետները եւ վարժուհիները կը բաժնուին սոս սոյն ի հարկին մասնաւոր վարձատրութիւն տալով անոնց:

գ. Այդ վարձատրութիւնը պէտք է աշակերտաց թուոյն եւ անոնց յառաջադիմութեան տարժանին համեմատ ըլլայ:

114. Այցելու Տեսուչք, դպրոցաց Հոգաբարձուք եւ Տեսուչ—վարժապետք միանգամայն եւ Կիրակնօրեայ եւ Երեկոյեան վարժարանաց հսկողութիւնը, հոգաբարձութիւնը եւ տեսչութիւնը կը վարեն:

115. Օրինաց միւս Յօդուածոց տրամադրութիւնները, որք սոյն Գլխոյ յօդուածոց

տրամադրութեամբք չեն բարեփոխած, Երեկոյեան եւ Կիրակնօրեայ վարժարանաց ալ կը վերաբերին:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

ԲԱՂԱՅԻՆ ՈՒՍՈՒՄ ՆԱՐԱՆՔ

Ա.

Իրանուք եւ պարսիք քաղիք

1. ԳԱՏՄԱՆ ԵՄԵՐԱՆՕՐԵԱՆ, ԵՆԻՔ ԵՒ ՍՈՂ ՓՅՈՐ

116 ա. Իւրաքանչիւր թաղի Քաղաքին ժողովը կորսէ թաղին մէջ հիմնուելիք Ասումնարանին աստիճանը (Յօդ. 125 եւ 132) եւ Կեդրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութիւնը կը վտակայնէ:

բ. Քաղաքին ժողովը հիմնուելիք Ասումնարանի մասին բրած որոշմանը հետ պէտք է ներկայէ Գաւառական կամ Կեդրոնական Կրթութեան Տեսչութեան եւ անոր արկղի վիճակն ու տարեկան պիտանէն:

117 ա. Ասումնարան կրնան հիմնել երկու կամ ավելի թաղ միանալով:

բ. Այդ ստրագային մէջ Քաղաքին ժողովը պէտք է միացեալ նիստ ընելով իւրաքանչիւր թաղի Ասումնարանի արկղին վճարելիք գումարը որոշեն, Հոգաբարձուք ընտրութիւնն ընեն, Ասումնարանի համար յարմարագոյն թաղը որոշեն՝ չենքին յարմարութիւնն ու աշակերտաց երթ եւեկութեան գիւրութիւնն նկատի առնելով, եւ իրենց որոշումները Կեդրոնական կամ Գաւառական Տեսչութեան ներկայեն ի քննութիւն եւ ի վտակայում:

118 ա. Թաղ մը որ Բարձրագոյն դպրոց (Յօդ. 68) չունի կամ թէեւ ունի բայց Օրինաց պահանջաց վիճակին մէջ չէ՝ չի կրնար Ասորին Ասումնարան (Յօդ. 125) հիմնել, եւ թաղ մը որ Ասորին Ասումնարան չունի կամ ունեցածը Օրինաց պահանջած վիճակին մէջ չէ՝ չի կրն.

Բ. Նմանապէս եթէ բոլոր աշակերտաց թիւը 15 էն նուազ ըլլայ՝ Գործնական Գասարան չի բացուիր :

(Մէջէն Ո-----Տ-----)

131 ա. Միջին Ուսումնարանի նպատակն է 1. ընդհանուր կրթութիւն տալ, 2. վաճառականութեան և ճարտարութեանց վերաբերեալ միջին աստիճանի հմտութիւնը հաղորդել 3. բարձրագոյն մասնագիտական վարժարանաց համար պատրաստել :

Բ. Միջին Ուսումնարանը գլխաւորապէս աշակերտաց համար է :

132 ա. Միջին ուսումնարանը 6 տարուան շրջան և 6 դասարան ունի, յորոց 3ը Ստորին Ուսումնարանի կարգաց կը համապատասխանեն [Յօդ. 125] :

Բ. Միջին Ուսումնարանը հինգերորդ կարգէն սկսեալ երկու ճիւղի կը բաժնուի—Վաճառականական և ճարտարական, և այս վերջինը երկու ստորաբաժանում կունենայ՝ Քանակագիտական և Տարրարանական :

Գ. Արտոնութիւն կը արուի կեդրոնական կրթական Տեսչութեան ճարտարական ճիւղի վերջին դասարանին ընթացքը մէկ ու կէս տարի ընել՝ եթէ հարկը պահանջէ :

133. Միջին Ուսումնարանի մէջ կաւանդուին

1. Կրօնագիտութիւն. — Համառոտ պատմութիւն Հայաստանեաց եկեղեցւոյ և ընդհանուր եկեղեցական պատմութեան կարեւորագոյն գիտելիք :

2. Հայերէն. — Աշխարհիկ և գրոց լեզու և պատմութիւն գրականութեան :

3. Տաճկերէն, Զրանսերէն, Անգղերէն և Գերմաներէն լեզուք և գլխաւոր ծանօթութիւնը նոյն լեզուաց գրականութեան պատմութեանն :

4. Ընդհանուր և Ազգային պատմութիւն :

5. Ընդհանուր աշխարհագրութիւն իր ճիւղերովը. — Վարչական և Առևտրական աշխարհագրութիւն Տաճկաստանի. — Տիեզերագրութիւն :

6. Քանակագիտութիւն. — Ընդհանուր թուաբանութիւն և գրահաշիւ. — Սրկիւրաչափութիւն իր ճիւղերովը. — Գործնական երկրաչափութիւն. — Սկզբուր տեսական և գործնական մեքենարանութեան :

7. Սկզբուր բնագիտութեան, տարրարանութեան, երկրաբանութեան, հանգարանութեան, բուսաբանութեան, կենդանաբանութեան և կիրառութիւնը երկրագործութեան, ճարտարութեանց և ասղջարանութեան մէջ. — Տարրարանական արուեստարանութիւն :

8. Համարակալութիւն և գործնական կրթութիւնը. — Վաճառագիտութիւն և գիտութիւն վաճառականութեան. — Համառոտ պատմութիւն վաճառականութեան :

9. Սկզբուր անտեսագիտութեան [երկրագործական, ճարտարական, առևտրական] և վիճակագրութեան :

10. Սկզբուր իրաւագիտութեան [քաղաքային, ճարտարական, առևտրական և վարչական]. — Օսմանեան և Ազգային վարչութիւն :

11. Գծագրութիւն երկրաչափական և ճարտարական. — Գեղագծութիւն. — Գեղագրութիւն :

12. Ձայնական երաժշտութիւն. — Մարմնամարզ :

134 ա. Իւրաքանչիւր ճիւղի աշակերտք պարտաւոր են իրենց ճիւղին բոլոր ուսմանը ուսանելու : Արտաքոյ կարգի բացառութիւնը կըլլան վատապաշտութեան պատճառաւ :

Բ. Յոտար լեզուներէն միայն երեքը պարտաւորիչ են :

135 ա. Եթէ ճիւղի մը հետեւող աշակերտաց թիւը 15էն նուազ ըլլայ՝ նոյն ճիւղին յատկացեալ դասերը չեն ուսանուիր :

Բ. Նմանապէս եթէ ճիւղի մը ստորաբաժանման հետեւող աշակերտաց թիւը 10 էն նուազ ըլլայ՝ նոյն ստորաբաժանման յատկացեալ դասերը չեն աւանդուիր :

136 ա. Կեդրոնական կրթական Տեսչութիւնը կը դժէ Ուսումնարանաց մէջ աւանդուելիք ուսմանց ընդհանուր ծրագրիները և

կորոչէ դասադրերն ու այլ դասական ընդհանուր և մասնաւոր միջոցները [Տես 72 ա.] :

Բ. Կրօնական ուսմանց ծրագրին ու միջոցները կրօնական Խորհրդականը կը սահմանէ :

Գ. Կեդրոնական կրթական Տեսչութեան արտոնութիւն կը արուի ի պահանջել հարկին ուսմանը աւելցնել կամ արտաքինից, ինչպէս և ճիւղերու կազմութեան մէջ փոփոխութիւն ընել [Տես 72 Բ.] :

137 ա. Տեսուչը ուսուցչաց խորհրդին [Յօդ. 213] գործակցութեամբ կը շինէ ամեն երեք ամիս իր ուսումնարանի ուսմանց դասերու բաշխման ցուցակը, որ պէտք է ցոյց տայ ուսումնարանի խորարանչութիւնը և ժամու գրադմանց կարգը :

Բ. Երկուսն ուսումնարանաց դասերու բաշխումը այնպէս պէտք է ըլլայ որ աղջկանց համար պարտաւորիչ չեղող կամ անկարեւոր դասերը անոնց ձեռագործի, անտեսութեան և մարմնամարզի գրադած միջոցին տեղի ունենան :

138. Օրինաց 80 և 84 յօդուածոց արբանագրութիւնները երկուսն ուսումնարանաց ալ կը վերաբերին :

139. Ուսումնարանաց դասախօսութեան ընդհանուր լեզուն Հայերէն է, բայց Ստորին ուսումնարանի Գ. և Գործնական դասարանին և Միջին ուսումնարանի բոլոր կարգաց մէջ բանի մը դաս կրնայ օտար լեզուաւ աւանդուիլ հաւանութեամբ Կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան :

2. Կազմութիւն կարգաց

140 ա. Եթէ Ստորին ուսումնարանի դասարանի մը աշակերտաց թիւը 30ը անցնի և հաւանական ըլլայ թէ երթալով աւելի պիտի շատանայ՝ աշակերտք զուգընթաց դասարաններու կը բաժնուին : Այդ բաժանումը պէտք է տեղի ունենայ մանաւանդ Գործնական դասարանին համար :

Բ. Միջին ուսումնարանաց մէջ այդ բաժանումը աւելի կունենայ երբ դասարանի մը օ-

տար լեզուաց հետեւող աշակերտաց թիւը 25ը և երկրաչափական, տարրարանական և այլ գործնական կրթութեանց հետեւողներունը 15ը անցնի :

3. Աշակերտք և աշակերտանիք

141 ա. Ստորին ուսումնարան կընդունուին Բարձրագոյն դպրոցի ուսումնաւարտ աշակերտք և աշակերտուհիք և անոնք որ նոյն դպրոցի ուսմանց ընթացքին քննութիւնը կուտան :

Բ. Ստորին ուսումնարանի Գործնական դասարանը կընդունուին նոյն ուսումնարանի ուսումնաւարտ աշակերտք և անոնք որ նոյն ուսումնարանի ուսմանց ընթացքին քննութիւնը կուտան :

Գ. Միջին ուսումնարան կընդունուին Ստորին ուսումնարանի Գ. կարգի ուսումնաւարտ աշակերտք և անոնք որ նոյն ուսումնարանի ուսմանց ընթացքին քննութիւնը կուտան :

142. Բացի Օրինաց 58րդ յօդուածի պահանջած վրայականներէն և արտօնագրէն՝ աշակերտք և աշակերտուհիք պէտք է ներկայեն վարուց և ուսմանց վրայական :

143. Ստորին ուսումնարանի Ա. կարգը կընդունուին 12 տարեկան լրացուցած, իսկ Միջին ուսումնարանի Ա. կարգը կընդունուին 15 տարեկանը լրացուցած աշակերտք և աշակերտուհիք :

144. Աշակերտաց ընդունելութիւնը տեղի կունենայ դպրոցական տարեգլխոյն սկիզբը, Արտաքոյ կարգի բացառութիւնը կըլլան՝ եթէ դասարանաց կանոնաւոր ընթացքին խանգարում չի պատճառեն :

145. Եթէ աշակերտ կամ աշակերտուհի մը երկու տարի կարգ փոխել չի կրնայ առանց հիւանդութեան պատճառի՝ կարճատեւի :

146. Աշակերտք բացի թոշակէ՝ մուտքի և տարրարանական գործարանի գրադմանց համար զատ տուրք կը վճարեն :

147. Քոչակաց և տրոց աստիճաններն ու քանակութիւնը թաղային ժողովք, իսկ խրաքանչիւր աշակերտէ առնուելիք թոշակն ու տարրը Հոգարարձուք կորուչեն [Յօդ. 46 և 48]:

148 ա. Ազրատ աշակերտք և աշակերտուհիք ձրի կընդունուին:

Բ. Արտաքոյ կարգի ընդունակութիւն և քանասիրութիւն ունեցող ձրիափարձ աշակերտաց և աշակերտուհեաց բոլոր պէտքերը ձրի կը հոգայտին և՛ եթէ հարկը պահանջէ՝ դրամական նպաստ ալ կը տրուի:

Գ. Հոգարարձուք և Այցելու Տեսուչք մասնաւոր խնամք կը տանին պաշտօրանեալ աշակերտաց:

149 ա. Ստորին ուսումնարանի Գործնական դասարանին և Միջին ուսումնարանի բոլոր կարգաց մէջ երկու տեղէ ունկնդիրք ալ կընդունուին, որք ազատ են միայն իրենց ընտրած մէկ դասին կամ դասերուն հետեւելու, բայց պէտք է նոյն դասին կամ դասերուն պահանջած հմտութիւնն ունենան և բարեկարգութեան բոլոր կանոնաց հնազանդին իրրև աշակերտ:

Բ. Անկնդիրք պէտք է բարի վարուց վրայական ունենան իրենց բնական թաղին Վարչութենէն:

150. Անկնդիրք թոշակ կը վճարեն իրենց հետեւած դասերու թուոյն համեմատ:

151 ա. Կեդրոնական Կրթական Տեսչութեան հրատարակելիք բարեկարգութեան կանոնադիրք կորուչէ յանցաւոր աշակերտաց տրքուելիք պատիժներն:

Բ. Հոգարարձուք և Տեսուչք Ուսուցչաց ժողովին կարծիքն առնելով կրնան ճամբել աշակերտ կամ ունկնդիր մը՝ եթէ անոր ներկայութիւնը աշակերտաց չար օրինակ և անոնց դասարանի կանոնաւոր յաւաքողութեան տրգեւք է:

4. Քճուարիւնք և ժամանակ ուսման և պարապոյ

152 ա. Ուսումնարանաց մէջ քառամս-

եաց, տարեկան և աւարտական քննութիւնք տեղի կունենան: Քառամսեաց քննութիւններն Տեսուչն ու Ուսուցիչք կը կատարեն ՚ի ներկայութեան Հոգարարձուք կամ անոնց օգնականաց: իսկ տարեկան և աւարտական քննութիւնները կը կատարեն Գաւառական կամ Կեդրոնական Կրթական Տեսչութենէն կարգեալ ֆենիչ Մասնախումբք՝ ՚ի ներկայութեան Ազգային իշխանութեանց, ծնողաց և այլ ազգացնոց:

Բ. Տարեկան քննութիւններն ու կարգափոխութիւնը տեղի կունենան զսրոցական տարեգլխին [Մայիս] աստիջ:

Գ. Քառամսեաց և տարեկան քննութիւններէ ետք վիճակացոյցներ կը տրուին աշակերտաց, իսկ ուսումնաւոր աշակերտաց վրկայադիրներ, որոց մէջ նշանակուած կըլլայ և ուսմանց համտուութիւնը:

153 ա. Ստորին ուսումնարանի Ա. Բ. և Գ. կարգաց օրը 5 ժամ դաս կը տրուի, իսկ նոյն ուսումնարանի Գործնական դասարանին և Միջին ուսումնարանի բոլոր կարգաց տաւաւերն 6 ժամ:

Բ. Գարնան և ամառը կէս օրին 2 ժամ և աշնան ու ձմեռը 1 1/2 ժամ, ինչպէս և դասերու մէջ ժամը անգամ մը 10 վայրկեան, կամ երկու ժամը անգամ մը 15 վայրկեան հանգիստ կը տրուի:

154 ա. Ուսումնարանաց բոլոր տարուան պարապոյ օրերը, բացի սոխորական տօնելի օրերէն, կրնան մինչև 10 շաբաթ տեւել, որք տեղական հանգամանաց համեմատ տարուան զանազան եղանակներուն վրայ կը բաժնուին Գաւառական կամ Կեդրոնական Կրթական Տեսչութեան վաւերացմամբք:

Բ. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կրնայ ՚ի պահանջել հարկին պարապոյ ժամանակը աւելցնել կամ պակսեցնել:

155. Օրինաց միւս յօդուածները, որք սոյն Գլխոյ մասնաւոր արամադրութեամբք չեն բարեփոխուած՝ ուսումնարանաց ալ կը վերաբերին:

ՄԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԳ

Կ Ե Դ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Ե Ի Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ի Ս Ո Ի Մ Ն Ա Ր Ա Ն Բ

—

Ա.

Կեդրոնական ուսումնարան

156. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը իր անմիջական տնօրէնութեանը ներքև Մայրաքաղաքիս մէջ առ այժմ գէթ Միջին ուսումնարան մը կունենայ, որոց տեղն ու հասցի թի ազրիւրները Ազգ. ժողովը կորուչէ:

157. Կեդրոնական Ուսումնարանի Հոգարարձուք, Տեսուչն ու Ուսուցիչները Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կ'ընտրէ:

158. Օրինաց միւս յօդուածները, որք նախընթաց 436 և 437 յօդուածոց արամադրութեամբք չեն բարեփոխուած՝ Կեդրոնական Ուսումնարանին ալ կը վերաբերին:

—

Բ.

Գաւառական ուսումնարան

159. Իւրաքանչիւր Գաւառապետիս կունենայ Ստորին կամ Միջին ուսումնարան մը, որ Գաւառական Կրթական Տեսչութեան անմիջական տնօրինութեանը ներքև կը գտնուի:

160 ա. Գաւառական ժողովը Գաւառական Վարչութեան և Գաւառական Կրթական Տեսչութեան կարծիքն առնելով կ'որոշէ Ուսումնարանի տեղն ու հասցի թի ազրիւրները և իր որոշումը Կեդրոնական Կրթական Տեսչութեան քննութեանն ու վաւերացմանը կը ներկայէ:

Բ. Ուսումնարանի տեղն ու շէնքը պէտք է իր նպատակին յարմար ըլլայ և աշակերտաց երթեւեկութեան գիւրութիւն ընծայէ:

161. Աշակերտաց ընդունելութեան պայ-

մաններուն, մասերի տրոց և թոշակաց վերաբերեալ մասնաւոր կանոնադիրք պէտք է Կեդրոնական Կրթական Տեսչութենէն վաւերանայ:

162. Ուսումնարանի Տեսուչն ու ուսուցիչները Գաւառական Կրթական Տեսուչը կ'ընտրէ, իսկ Հոգարարձուք Գաւառական ժողովը:

163. Օրինաց միւս յօդուածները, որք սոյն Մասին մասնաւոր արամադրութեամբք չեն բարեփոխուած, Գաւառական ուսումնարանաց ալ կը վերաբերին:

ՄԱՍԻՆ ԵՐՐՈՐԳ

—

Ա.

Վանական միաբանութեանց վարժարանք

164. Վանական Միաբանութեանց վարժարանաց Կրօնական ուսմանց ծրագիրն ու միջոցները պէտք է Կրօնական Խորհրդականին, իսկ միւս ուսմանցը, ինչպէս և վարժարանաց կազմութեան և բարեկարգութեան կանոնագիրը՝ Կեդրոնական Կրթական Տեսչութեան վաւերացմանը ենթարկուին:

165. Վանական Միաբանութեանց վարժարանները Կեդրոնական և Գաւառական Կրթական և Կրօնական Տեսչութեանց հսկողութեանը ներքև են, ըստ արամադրութեան 19դ և 26դ Յօդուածոց վարչական օրինաց:

166. Սոյն վարժարանաց վարժապետք պէտք է Օրինաց սահմանած Արտօնադիրն ունենան [Յօդ 297, 298, 300, 301, 306 Ա—Ե]:

167. Վանական Միաբանութիւնը պէտք է ամեն տարի իրենց վարժարանաց հաշիւները Կեդրոնական Կրթական Տեսչութեան վաւերացնել տան և միանգամայն անոնց վիճակին վրայ տեղեկագիր ներկայեն անոր համաձայն Օրինաց [Տես Յօդ. 349]:

168. Եթէ վանական Մխարանուխան մը նախընթաց 164-167 Յօդուածոց տրամադրութիւններուն հակառակ վարուի՝ Կեղրոնական Կրթական Տեսչութիւնը մէկ տարուան մէջ երեք ազգարարութիւն ընելէ ետք՝ խընդիրը կը յանձնէ վարչական Խորհրդոց որ վանորէից համար հաստատուելիք օրինաց համեմատ կը սնորհին :

Բ.

Բարեգործական Կրթական Հաստատութիւնը

169. Բարեգործական են ամեն այն կրթական հաստատութիւնք՝ որոց ծախքը ամբողջ կամ մասամբ կտակաց եկամուտով, բարերար անձանց գրամսջը, հանգանակութեամբ, նուէրներով կամ այլ հասարակաց հասոյթներով կը հոգացուին :

170. Օրինաց 164-167 Յօդուածները Բարեգործական վարժարանաց ալ կը վերաբերին :

171. Այն բարերար անձինք՝ որք իրենց հիմնած կրօնական հաստատութեանց բոլոր ծախքերը իրենց սեփական գրամսջը կը հոգան՝ պարտական չեն հաշիւ ներկայելու :

172. Եթէ Բարեգործական հաստատութեանց վարչութիւնը Օրինաց 164-167 Յօդուածոց հակառակ վարուին կամ նոյն հաստատութիւնները բարեկարգ վիճակի մէջ պահելու անօրոյթ ըլլան՝ Կեղրոնական կամ Գուսական Կրթական Տեսչութեան կողմէն մէկ տարուան մէջ երեք ազգարարութիւն ընդունելէ ետք՝ անվստահելի կը հրատարակուին և Օրինաց 319դ Յօդուածին տրամադրութեան ներքեւ կ'ըլնան :

173. Նախընթաց յօդուածի տրամադրութիւններէն զերծ են 171 յօդուածին մէջ նշանակուած բարերար անձինք :

Գ.

Մասնաւոր վարժարանք

174. ա. Մասնաւոր են այն վարժարանները որոս մասնաւոր անձինք կամ ընկերութիւնք կը հաստատեն իրենց սեփական հաշուոյն :
բ. Մասնաւոր վարժարանաց Ազգային միւս վարժարաններէն ունեցած տարբերութիւնն այն է որ մատակարարութեան մասին Ազգային իշխանութեանց պատասխանատու չեն ընաւ և ձրի աշակերտ ընդունելու պարտակաւորութիւն չունին :

175. Ամեն մասնաւոր անձ՝ որ իր ընկած թաղէն կամ թաղերէն բարի վարուց վիտայական և Օրինաց պահանջած Արտօնագիրն ունի և ամէն մասնաւոր ընկերութիւն որ Կեղրոնական Կրթական Տեսչութեան վստայած է՝ կրնայ վարժարան հիմնել, բայց պէտք է անոր ուսմանց ծրագիրն Գուսական կամ Կեղրոնական Կրթական Տեսչութեան վստայանել տայ, անոնց հսկողութիւնն ընդունի և տարին անգամ մը ակտիկազիր ներկայէ ըստ սահմանեալ կանոնաց :

176. Մասնաւոր վարժարանաց վարժապետք և վարժուհիք պէտք է Օրինաց սահմանած Արտօնագիրն ունենան [Յօդ. 297, 298, 300, 301, 306 Ա-Ե] :

177. Այն մասնաւոր անձինք և ընկերութիւնք՝ որ նախընթաց 175 և 176 յօդուածոց հակառակ կը վարուին կամ իրենց վարժարանը բարեկարգ վիճակի մէջ չեն պահեր՝ Գուսական կամ Կեղրոնական Կրթական Տեսչութեան մէկ տարուան մէջ երեք ազգարարութիւն ընդունելէ ետք՝ անվստահելի կը հրատարակուին : Ընկերութիւնք կը հրատարակուին :

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

ԿՐԹԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՅԲ

ԳԼՈՐԻՍ ԱՌԱՋՅՆ

Ա.

ԴՊՐՈՑԱՅ ՊԱՇՏՕՆԵԱՅԲ

1. Տեսուչ-վարժապետք կամ վարժուհիք

178. Միայն մէկ վարժապետ կամ վարժուհի գտնուած դպրոցներուն մէջ նոյն վարժապետք կամ վարժուհիք կը վարեն միանգամայն անոնց ներքին տեսչութեան պաշտօնը : Իսկ մէկէն աւելի պաշտօնեայ գտնուած դպրոցներուն մէջ նոյն պաշտօնը անոնցմէ մէկուն կը յանձնուի :

բ. Տեսուչ-վարժապետք կամ վարժուհիք բաց ի տեսչութեան պաշտօնէն միանգամայն իրենց յանձնուած կարգին կամ կարգերուն գասերը կուտան :

գ. Տեսչութեան պաշտօնին յատկանայիք ժամանակը Հագարարձուր կորստեն՝ Այցելու Տեսչաց կարծիքն առնելով :

179. ա. Տեսուչ-վարժապետին ստորագրեալ և պատասխանատու են վարժարանի բոլոր միւս պաշտօնեայք :

բ. Վարժապետք և վարժուհիք պարտաւոր են ամէն բանի մէջ Տեսուչ-վարժապետին կամ վարժուհեոյն օգնելու :

180. ա. Տեսուչ-վարժապետը պէտք է վարժապետաց կամ վարժուհեաց կարծիքն առնու Գոյրոցի բարեկարգութեան վերաբերեալ խնդրոց մասին և դանոնք զէթ ամբար անգամ մը ի խորհուրդ գումարի :

բ. Վարժապետք կամ վարժուհիք թէև համամիտ ըլլան Տեսուչ-վարժապետին՝ պարտաւոր են ճշգիւ գործադրել անոր հրահանգները :

գ. Սոցա և Տեսուչ-վարժապետին, ինչ-

պէս և սոցա և Հագարարձուրն մէջ ծագած անհամաձայնութիւնները Այցելու Տեսուչը կը բնէ : Բայց վերջնական վճիռը Կեղրոնական կամ Գուսական Կրթական Տեսչութեան կը պատկանի :

181. Տեսուչ-վարժապետաց պաշտօնն է վարժարանաց բարեկարգութեան և ընթացիկ անմիջական հսկողութիւնը և հաստատեալ Օրինաց, ծրագրոց և կանոնաց և բարձրագոյն իշխանութեանց տաւած հրահանգաց անթերի գործադրութիւնը : Իրենց գլխաւոր պարտականութիւնքն են ամէն ջանք ի գործ դնել որ աշակերտք կանոնաւոր կերպով զընդրոց յանձնին, ըստ վարք ունենան և ուսմանց մէջ յառաջադիմեն, հսկել որ վարժապետք իրենց պաշտօնը խղճի մտքը կատարեն, հոգ տանի որ դպրոցին և աշակերտաց օրոտայրը ժամանակին հոգացուին. դպրոցատեղիքը և բոլոր գոյքը, ինչպէս և աշակերտք և անոնց դասական տաւարիները միշտ պատշաճաւոր և մաքուր վիճակի մէջ ըլլան :

182. Տեսուչ-վարժապետք երեք ամիս անգամ մը ցուցակաձև ակտիկազիր կը ներկայեն Այցելու Տեսչաց, որուն պարտականելիք ակտիկազիրն ու մեր Կեղրոնական Կրթական Տեսչութիւնը կը սահմանէ :

183. ա. Ստորին դպրոցի Տեսուչ-վարժապետ կրնան ըլլալ անոնք որ առ նուազն 21 տարեկան են և զէթ Ստորին դպրոցի վերջնական ընդհանուր արտօնագիր ունին [Յօդ. 297, 300, 306 Բ.] : Ստորին դպրոցի Տեսուչ-վարժուհի կրնան ըլլալ նոյն պայմաններով անոնք որ առ նուազն 18 տարեկան են :

բ. Բացառութիւն. — Ստորին վարժարանի 25էն նուազ աշակերտ ունեցող դպրոցաց Տեսուչ-վարժապետ կամ վարժուհի կրնան ըլլալ անոնք որ Ստորին դպրոցի տոժամանակեայ ընդհանուր Արտօնագիրն ունին [Յօդ. 304 և 306 Բ.) :

184. Բարձրագոյն դպրոցի Տեսուչ-վարժապետ կրնան ըլլալ անոնք որ 23 տարեկան են և զէթ Բարձրագոյն դպրոցի վերջնական

ընդհանուր Արտոնագիր ունին (Յօդ. 297, 300 306 Գ.) Բարձ. գայրոցի Տեսուչ վարժուչի կրնան ըլլալ նոյն պայմաններով անոնք որ 20 տարեկան են :

185. Տեսուչ—վարժապետաց կամ վարժուչեաց ընտրութիւնը գայրոցի Հոգարարձուք կրնեն Այցելու Տեսչաց կործիրն առնելով :

Կրթական Խորհրդականութիւնը կը պնդէ այս Յօդուածին Բ. պարբերութեան վրայ, զոր դրած էր իւր ծրագրոյն մէջ, և որ է :

Բ. Թաղային ժողովք կրնան Վարժապետաց կամ վարժուչեաց, ինչպէս և վարժապետաց և վարժուչեաց ընտրութիւնն կամ անոր վաւերացումը իրենց վերապահել :

2. Վարժապետ կամ վարժուչիք

186. Ստորին գայրոցի վարժապետ կըրնան ըլլալ անոնք որ առ նուազն 18 տարեկան են և Ստորին գայրոցի առժամանակեաց ընդհանուր Արտոնագիր ունին. (Յօդ. 297, 301 և 306 Բ.) իսկ վարժուչի կրնան ըլլալ նոյն պայմանով անոնք որ առնուազն 16 տարեկան են :

187. Բարձրագոյն գայրոցի վարժապետ կրնան ըլլալ անոնք որ առնուազն 20 տարեկան են և Բարձրագոյն գայրոցի առժամանակեաց ընդհանուր Արտոնագիր [Յօդ. 297, 301 և 306 Գ.] ունին. իսկ վարժուչի կրնան ըլլալ նոյն պայմանով անոնք որ առնուազն 18 տարեկան են :

188. Վարժապետաց և վարժուչեաց ընտրութիւնը Հոգարարձուք կրնեն Տեսուչ վարժապետին կամ վարժուչեոյն ու Այցելու Տեսչին կործիրն առնելով : [Յօդ. 183 Բ.]

189. Վարժապետաց և վարժուչեաց ոսկիքը Հոգարարձուք կորոշեն տեղական կեանքի պայմաններուն և իւրաքանչիւրին Արտոնագրի աստիճանին համեմատ : Հոգարարձուք պարտաւոր են աշխատանքը ըստ արժանւոյն և արդարութեամբ վարձատրելու սկզբունքին չի շեղել :

Կրթական Խորհրդականութիւնը կը պնդէ այս Յօդուածին Բ. պարբերութեան վրայ, զոր դրած էր իւր ծրագրոյն մէջ, և որ է :

Բ. Թաղային ժողովք կրնան վարժապետաց և վարժուչեաց, ինչպէս և Տեսուչ-վարժապետաց կամ վարժուչեաց ոսկիքի որոշումը կամ անոր վաւերացումը իրենց վերապահել :

190. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը ոսկիք մասին հիմնական կանոնագիր մը կը հրատարակէ և անոր սկզբունքը հակառակ կերպով պայմանք առ ոչինչ կը համարուին :

191. Վարժապետ և վարժուչիք օգնական—աշակերտաց կամ աշակերտուչեաց (Յօդ. 238) տուած առանձին դասերուն համար մասնաւոր վարձատրութիւն պէտք է ստանան :

192 ա. Վարժապետ և վարժուչիք իրենց ոսկիքին զստ կատանան սնտուկին զըսուրոցի աշակերտ զլուխ ի գաւառոս ամիսը 2 զուրուչ և ի Պօլիս 3 զրչ : Մէկէն աւելի վարժապետ եզած տեղերը այդ հասցիքը կը բաժնուի մէջերն իւրաքանչիւրին աշխատութեան ժամերուն համեմատութեամբ :

Բ. Այս մասին վարժապետաց մէջ ծագած անհամաձայնութիւնը Հոգարարձուք կը լուծէ, որոց վճարն դէմ կրնայ դժգոս կողմը բողբել Կեդրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութեան :

3. Յգնական—վարժապետ կամ վարժուչիք

193 ա. Ստորին գայրոցի օգնական—վարժապետ կամ վարժուչի կըլլան անոնք որ Բարձրագոյն գայրոցի և Մանկավարժական դասարանաց ուսմանց ընթացքը աւարտած կամ նոյն գայրոցի և դասարանաց ընթացքին բընութիւնը տուած և վիսյագիր տուած են, բայց զեւ Սրինաց պահանջած տարիքը (Յօդ. 186) չունենալուն՝ սահմանաւ արտօնագիրը չեն ստացած (Յօդ. 306 Բ.) :

Բ. Ստորին գայրոցի օգնական—վարժապետ պէտք է առ նուազն 16 տարեկան, իսկ օգնական—վարժուչիք 14 տարեկան ըլլան :

194 ա. Բարձրագոյն գայրոցի օգնական—վարժապետ կամ վարժուչի կրնան ըլլալ անոնք որ ստորին ուսումնարանի և Մանկավարժական դասարանի ուսմանց ընթացքը աւարտած կամ նոյն ընթացքի բնութիւնը տուած և վիսյագիր տուած են, բայց զեւ Սրինաց պահանջած տարիքը [Յօդ. 187] չունենալուն՝ սահմանաւ Արտոնագիրը չեն ստացած (Յօդ. 306 Գ.) :

Բ. Բարձրագոյն գայրոցի օգնական—վարժապետ պէտք է [առնուազն 18 տարեկան, իսկ օգնական—վարժուչիք 16 տարեկան ըլլան] :

195. Օղնական—վարժապետաց կամ վարժուչեաց ընտրութիւնը կրնեն և ոսկիքը կը նշանակեն Հոգարարձուք (Յօդ. 189 ա. և 190) Տեսուչ—վարժապետաց կամ վարժուչեաց կործիրն առնելով :

196. Օղնական—վարժապետ կամ վարժուչիք միայն մէկ տարուան համար կընտրուին :

197. Օղնական—վարժապետ կամ վարժուչիք ստորագրեալ և պատասխանատու են այն վարժապետաց կամ վարժուչեաց, որոց անմիջական հսկողութեանն ու առաջնորդութեանը ներքե օգնական դասատուութիւն կրնեն :

4. Յգնական—աշակերտ կամ աշակերտուչիք

198. Ստորին գայրոցաց մէջ ծաղկոցի

դաստիարակուչ կամ դաստիարակի պաշտօնին պատրաստուող և Բարձրագոյն գայրոցաց մէջ Ստորին գայրոցի վարժապետ կամ վարժուչեաց պաշտօնին պատրաստուող աշակերտ կամ աշակերտուչիք միանգամայն իբրև օգնական—աշակերտ կամ աշակերտուչիք կը գործածուին նոյն գայրոցաց մէջ (Յօդ. 238) :

199 ա. Միայն մէկ վարժապետ կամ վարժուչի գտնուած Ստորին գայրոցաց մէջ Գ. կարգի աշակերտներէն կամ աշակերտուչիներէն յարմարագոյնները կրնան իբրև օգնական գործածուիլ :

Բ. Այցելու Տեսուչք և Հոգարարձուք հսկելու են որ նոյն աշակերտք իրենց կարգի դասերէն չի դրուին և վարժապետ կամ վարժուչիք անոնց մատուցած ծառայութեանը փոխարէն տուածին դասեր տան անոնց (Յօդ. 191 և 240 Գ.) :

Բ.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՊԸՏՕՆԵԱՅԲ

1. Տեսուչ և Փոխ—Տեսուչ

200 ա. Իւրաքանչիւր ուսումնարան ներքին Տեսուչ մը կունենայ՝ որ կրնայ միանգամայն ուսուցչութեան պաշտօն վարել :

Բ. Աղջկանց ուսումնարաններու մէջ տեսչութեան պաշտօնը կրնայ ուսուցչուչուց մը յանձնուիլ :

201 ա. Տեսուչը ստորագրեալ և պատասխանատու է Հոգարարձուքին և իրեն ստորագրեալ և պատասխանատու են բոլոր միւս պաշտօնեաց :

Բ. Տեսչաց և Հոգարարձուք յարաբերութեանց կանոնագիրը Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կը գծէ և անոնց մէջ ծագած անհամաձայնութիւնները նոյն Տեսչութիւնը կը լուծէ վերջնական կերպով. իսկ Գաւառական Կրթական Տեսուչք այս մասին իրենց որոշումը կուտան վերապահմամբ Կեդրոնական Կրթական Տեսչութեան վճարն :

202. Տեսուչը Օրինաց 181դ յօդուածի համաձայն կը վարէ իր պաշտօնը :

203. Տեսուչը երեք ամիս անգամ մը ցուցակաձև և ամեն դպրոցական տարեգրութեան ընդհանուր տեղեկագիր կը ներկայէ ուսումնարանի վիճակին վրայ կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան հանգերձ իր զիտուութիւններովն ու առաջարկութիւններովը : և սրտովն Այցելու Տեսչին կը հաշորդէ :

204. Տեսուչը իր պաշտօնին , ինչպէս և Ուսուցչաց Խորհրդին (Յօդ . 213) վերաբերեալ բոլոր թղթաց սահմանափակման հօդ կը տանի առ իրն ուղղեալ թղթոց կանոնաւոր ցուցակը կը բանէ , իր յղածներուն սրտովնները կը սրահէ և իր հրատարակման միջոցին թէ տեսչական Գրաստի բոլոր թղթերը և թէ ուսումնարանին վերաբերեալները կը յանձնէ ցուցակաւ իր յաջորդին :

205. Միջին ուսումնարանը կրնան ի սահմանը չհարկին Փոխ-տեսուչ մ'ունենալ , զոր ուսուցչաց մէջէն կրնարեն համաձայնութեամբ Հոգարարուն և Տեսուչը :

206. Ստորին ուսումնարանի Տեսուչ կրնան ըլլալ անոնք որ անուազն 23 տարեկան են և գէթ նոյն ուսումնարանի ուսուցչութեան վերջնական ընդհանուր Արտօնագիր (Յօդ . 297, 300 և 306 Գ) ունին : Տեսչուհի կրնան ըլլալ նոյն սրտմաններով անոնք որ անուազն 21 տարեկան են :

207. Միջին ուսումնարանի Տեսուչ կըրնան ըլլալ անոնք որ 23 տարեկան են և նոյն ուսումնարանի ուսուցչութեան վերջնական ընդհանուր Արտօնագիր (Յօդ . 297, 300 և 306 Ե) ունին :

208. Տեսչաց ընտրութիւնը Հոգարար, ձուք կրնեն և կեդրոնական կամ Գաւառական կրթական կենտրոններ կը վաւերացնէ :

209. Տեսչին և Փոխ-Տեսչին պաշտօնը :

երկու տարի կը տեւէ , իրենց ուսուցչութեան պաշտօնը տեսչութեան պաշտօնին հետ չի գողորի , այլ Օրինաց տրամադրած պայմանաժամին համաձայն կը շարունակուի (Յօդ . 221 Բ) :

2. Ուսուցիչք և Ուսուցչուհիք

210. Ստորին և Միջին ուսումնարանաց ուսուցիչ կամ ուսուցչուհի կրնան ըլլալ անոնք որ անուազն 20 տարեկան են և նոյն ուսումնարանաց ուսուցչութեան Արտօնագիր ունին (Յօդ . 306 Գ. և Ե) :

211. Ուսումնարանաց ուսուցիչները Հոգարարուն կրնարեն Տեսչաց հետ համաձայնութեամբ և կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութիւնը կը հաստատէ :

212 ա. Ուսուցչաց ինչպէս և Տեսչաց և Փոխ-Տեսչաց ստիկը Հոգարարուն կորուզեն (Յօդ . 489) :

Բ. Ուսուցիչք իրենց ստիկէն զատ կատանան աշակերտաց թոշակներէն զոչոցած հասոյթին հինգերորդ մասը , որ իրենց մէջ կը բաժնուի իւրաքանչիւրին տանողած զատերութույն և կարեորութեանը համեմատ :

3. Ուսուցչաց Խորհուրդ

213 ա. Ուսուցիչք խորհուրդ կը կազմեն Տեսչին նախագահութեանը տակ :

Բ. Խորհուրդը գէթ ամիս անգամ մը նիստ կրնէ ուսումնարանի բարեկարգութեան և աշակերտաց յառաջողութեան վերաբերեալ միջոցներուն վրայ խորհրդակցելու և կարծիք տալու համար :

214. Ուսուցչական խորհուրդն ու ուսուցիչք միայն խորհրդատու ձայն ունին և պարտաւոր են Հոգարարութեան և Տեսչութեան սրտմանը զործադրել ' թէ և իրենք անոնց համախա շըլան . իրենք իրատեւք ունին միայն իրենց կարծիքը Այցելու Տեսչին և Գաւառական կամ կեդրոնական կրթական Տեսչութեան ներկայելու :

215. Ուսուցչական Խորհրդոյ ընդհանուր կանոնագիրը կեդրոնական կրթական Տեսչութիւնը կը գծէ : Խորհրան իւր խորհուրդ կրնայ իր մասնաւոր կանոնագիրն ունենալ , բայց պէտք է ընդհանուր կանոնագրին սկզբանց համաձայն ըլլայ և նոյն կամ Գաւառական Տեսչութենէն վաւերանայ :

4. Օգնական Ուսուցիչք և Ուսուցչուհիք

216. Ստորին և Միջին ուսումնարանաց մէջ հաստատուած Մանկավարժական Գաւառանաց ուսումնարան աշակերտք և աշակերտուհիք եթէ գեա Օրինաց սահմանջած տարիքը չունին (Յօդ . 187 և 214) սահմանաւոր արտօնագիրը (Յօդ . 307. Գ. և Գ.) տանալու համար կրնան նոյն կամ այլ ուսումնարանաց մէջ իրրե օգնական—ուսուցիչք կամ ուսուցչուհիք զործածուիլ :

217. Օրինաց 189 ա. 190 և 195—197 յօդուածոց արտօնագրութիւնները օգնական—ուսուցչաց և ուսուցչուհեաց ալ կը վերաբերին :

Գ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՐՏԷ ԵՒ ԻՐԱՅՈՒՆՔ

218 ա. Աղային վարժարանաց մէջ պաշտօն վարելու ուղղ անձինք պէտք է ներկայեն ' 1. իրենց Արտօնագիրը , 2. վարուց վկայական կամ վկայականներ այն թայի կամ թաղերու խորհուրդներէն ուր որ բնակած կամ ձանչուած են և 3. Պաշտօնավարութեան վկայական կամ վկայականներ ' եթէ արդէն պաշտօն վարած են :

Բ. Վարուց և պաշտօնավարութեան վկայականները կրնան անընդունելի դատուիլ ' եթէ ներկայուած օրէն երկու տարի առաջ արուած ըլլան , և զպրոցական լիցանութիւնը կրնան վարուց համար նոր վկայական մը սահմանել :

219. կրթական պաշտօնէից ընտրու-

թիւնը երկու կերպով կը կատարուի , ուղղակի որոշեալ անձ մը պաշտօնի կոչելով կամ մրցմամբ [բաղդատական բնութեամբ] յարմարագոյնը ընտրելով : Այս վերջին կերպը զործադրելու համար պաշտօնական ազգ կը հրատարակուի հանգերձ պաշտօնին վերաբերեալ սրտմաններովը և հրատէր կը կարգադրուի Արտօնագիր ունեցող վարժապետաց կամ վարժուհեաց մրցման մասնակցելու :

220 ա. Այցելու Տեսուչք իրենց նախագահութեանը տակ Բնիչ Մասնախումբ մը կը կազմեն , որ կը կատարէ բաղդատական բնութիւնը և իր որոշումը կուտայ :

Բ. Այցելու Տեսչաց բաղդատական քննութիւնը կը կատարեն նոյն եղանակաւ կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութիւնը :

221 ա. Արժամանակեաց Արտօնագիր (Յօդ . 306 Ա—Ե) ունեցող պաշտօնեայք նախ մէկ տարուան համար պաշտօնի կը կոչուին և յետոյ երեք տարուան համար կը հաստատուին իրենց պաշտօնին մէջ ' եթէ իրենց Արտօնագրի սրտմանաժամը անկէ առաջ չի լրանար (Յօդ . 302) :

Բ. Վերջնական Արտօնագիր ունեցողները նախ երկու տարուան համար կը նշանակուին և յետոյ վեց տարուան համար կը հաստատուին :

Գ. կրթական պաշտօնեայք եթէ զպրոցական տարեգրութը [Մայիս] 5-6 ամիս անցած պաշտօնի կոչուին ' իրենց պաշտօնավարութեան շրջանը յաջորդ զպրոցական տարեգրութէն կը հաշուուի :

222 ա. կրթական պաշտօնէից պաշտօնավարութեան շրջանը լրանալէ գէթ երկու ամիս առաջ պէտք է գեկուցուի իրենց թէ պաշտօնին սխտի շարունակե՞ն թէ ոչ . եթէ այս գեկուցումը տեղի չունենայ ' պաշտօնեայք իրատեւք ունին երկու ամսականին սահմանը չելու :

Բ. Նոյնպէս և պաշտօնեայք իրենց սրտ-

տանի շրջանը լրանալէն երկու ամիս առաջ
սկսեալ է յայտնեն Գոյրոցական իշխանութեան
թէ պաշտօններն պիտի շարունակեն թէ ոչ
եթէ ատար հակառակ վարուին՝ մէկ ամսա-
կաններն կը տուածեն :

223 ա. Պաշտօնէից ամասկանները
սկսեալ է կանոնաւորութեամբ և ճշգրտութեամբ
վճարուին և արձակուրդի պատճառաւ ընտ-
ղեղը չըլլայ :

Բ. Նմանապէս և պաշտօնեայր սկսեալ է
իրենց պայմաններն համաձայն ճշգրտութեամբ կա-
տարեն իրենց պաշտօնը . առանց ընդունելի
պատճառի բացակայ եղողները բացակայու-
թեան ժամերու արժէքին կրկինը կը տուածեն :

224 ա. Եթէ պաշտօնէի մը հիւանդու-
թեան պատճառաւ իր պաշտօնը ուրիշի յանձ-
նուի՝ փոխանորդին ամասկանը անտուկէն կը
վճարուի , պաշտօնեան ալ իր ամասկանը կ'ըս-
տանայ մինչև երկու ամիս , անկէ աւելին ձե-
ռընհաս իշխանութեան օրոշումէն կախում
ունի :

Բ. Նմանապէս եթէ պաշտօնեայ մը մեռ-
նի՝ իր մէկ ամասկանը ընտանիքին կը վճար-
ուի , աւելին զարձեւալ ձեռնհաս իշխանու-
թիւնը կորսէ :

225 ա. Արտեւալ պայմանաւոր լրա-
նալէ առաջ կարելի չէ պաշտօնեայ հրաժարե-
ցնել առանց կեղրոնական կամ Գաւառական
Արթական Տեսչութեան քննութեանն ու օրոշ-
մանը , որ ամբաստանեալն ալ լսելէ ետք
կու տայ իր վճիռը :

Բ. Արտաքոյ կարգի դիպաց մէջ յանցաւոր
պաշտօնեայ մը կրնայ դատարան ենթարկուիլ ,
բայց սկսեալ է անմիջապէս տեղեկութիւն տրու-
ուի կեղրոնական կամ Գաւառական Արթա-
կան Տեսչութեան :

Գ. Գաւառական Արթական Տեսչութեան
վճարն զէ՛մ կարելի է բողոքել կեղրոնական
Արթական Տեսչութեան :

Դ. Գաղարեւալ պաշտօնեայն կը շարունա-
կէ իւր ունիին ընդունելու մինչ ցփերջական

կարգադրութիւն խնդրոյն՝ եթէ ստացուցեալ
յանցանքի աէր չէ :

226. Պաշտօնէից և իշխանութեանց մէջ
ծագած գրամական վէճերը կեղրոնական Արթ-
ական Տեսչութիւնը կը վճուէ վերջնական կեր-
պով և Գաւառական Արթական Տեսչութիւնը
վերապահմամբ կեղրոնական Արթական Տես-
չութեան , եթէ երկու կողմն ալ կանխաւ ըն-
դունին անոնց վճիռը , իսկ եթէ ոչ՝ սկսեալ է
ազգային Գատարանաց դիմեն :

227 ա. Պաշտօնեայ մը չկրնար պայ-
մանաւորուիլ առաջ հրաժարիլ առանց արտա-
քոյ կարգի ստիպողական պատճառի : Եթէ իշ-
խանութիւնը պատճառին ստիպողականութիւ-
նը չընդունի՝ պաշտօնավարութեան վկայական
չի տար և կը բողոքէ կեղրոնական կամ Գա-
ւառական Արթական Տեսչութեան , որ ամբաս-
տանելոյն բացաւարութիւնը լսելէ ետք կու տայ
իր վճիռը :

Բ. Եթէ պաշտօնեայն պարտադրանց դատ-
ուի՝ դատավճիռը կարճամազրուի անոր վկա-
յականին մէջ , և եթէ յանախ նոյն պարտա-
դրանցութեան մէջ իցնայ՝ պարտադրանցութեան
ստիճանին և յանախութեան համեմատ մէկ
ամիսէն մինչև մէկ տարի դադարման և վեր-
ջապէս խորաւ արգիլման կը դատարարուի :

228 ա. Ամեն Արթական պաշտօնեայ
որ միանդամայն ուրիշ պաշտօն կրնոյն ըստ
երեւոյթանութեան , գաւառական և թաղա-
յին ժողովականութեան , վարչական խորհրդ-
դականութեան և հոգարարութեան պաշտօնէ-
սկսեալ է Արթական իշխանութեան հաւանու-
թիւնն ստանայ :

Բ. Այդ հաւանութիւնը կրնայ միշտ ետ
առնուիլ՝ եթէ անկէ վնաս մը կը ծագի Արթ-
ական պաշտօնին :

Գ. Վարժապետ կամ վարժուհի մը չկըր-
նար այն վարժարանին Հոգարարութեան կամ
Խնամակալութեան ըլլալ՝ ուր որ դասատուութեան
կամ տեսչութեան պաշտօն կը վարէ ամսա-
կանով :

229 ա. Ամեն որ առանց օրինաց պա-
հանջած Արտօնագիրն [Յօդ . 296 և 299] ու-
նենալու պաշտօն կը վարեն ազգային վարժա-
րանաց մէջ՝ Օ.ինաց 227 յօդուածին բ. պար-
բերութեան արտօնագրութեանց ներքեւ կիցնուն
Բ. Բացառիկ պարագաներու մէջ կրնան
առանց արտօնագրի Արթական պաշտօնեայր
գործածուիլ առժամանակեայ կերպով Գաւա-
ռական կամ կեղրոնական Տեսչութեան հա-
ւանութեամբ՝ մինչև որ արտօնեալ պաշտօն-
եայ մը գտնուի :

Բ. Բացառիկ պարագաներու մէջ կրնան
առանց արտօնագրի Արթական պաշտօնեայր
գործածուիլ առժամանակեայ կերպով Գաւա-
ռական կամ կեղրոնական Տեսչութեան հա-
ւանութեամբ՝ մինչև որ արտօնեալ պաշտօն-
եայ մը գտնուի :

230 ա. Եթէ կեղրոնական Արթական
Տեսչութիւնը ստաղէ որ Արթական պաշտօն-
եայ մը պարտադրանցութեան և յանցանաց
մէջ կը գտնուի և կամ անկարող է իւր պաշ-
տօնը արդիւնաւոր կերպով վարելու անոր
հրաժարումը կը պահանջէ : Եթէ մինչև երեք
ամիս և արտաքոյ կարգի պարտադրանց մէջ ան-
միջապէս նկատողութեան չառնուի իր պա-
հանջումը՝ ինք կը հրաժարեցնէ խնդրոյ տակ
եղող պաշտօնեայն և անոր տեղ ուրիշ մը կը
կարգէ՝ առժամանակեայ կերպով մինչև որ
ձեռնհաս իշխանութիւնը նոր պաշտօնէի մը
ընտրութիւնն ընէ կամ առժամանակեայ պաշ-
տօնեայն հաստատէ :

Բ. կեղր. Արթական Տեսչութիւնը ի հար-
կին կրնայ յանցաւոր կամ սպիկար պաշտօն-
եայ մը բոլորովին հեռացնել Ազգային վար-
ժարաններէն :

231. Արթական պաշտօնէից հասարա-
կաց իրաւանց զէ՛մ գործած յանցանքներու
գատերը Ազգային գատարաններուն կը վերա-
բերին :

232. Եթէ պաշտօնեայ մը անուանար-
կիչ դատի մը ենթարկուած ըլլայ՝ Արթական
իշխանութիւնը կրնան զանի առժամանակեայ
կերպով պաշտօնէ գաղթեցնել մինչև որ ձե-
ռընհաս գատարանը իր վճիռը տայ :

233. Արթական պաշտօնեայ մը եթէ
տառը տարի Ազգին ծառայելէ ետք՝ օ եւ է
ընդունելի պատճառով անկարող ըլլայ առժա-

մանակեայ կերպով կամ բոլորովին իր պաշ-
տօնը շարունակելու եւ որ եւ է ուրիշ գոր-
ծով իր սպորուստը ճարելու՝ առժամանակե-
այ նպաստ կամ ցկեանս թոշակ կնդուի ,
առանձին օրինօք սահմանուելիք հանգստեան
թոշակի անտուկէն :

234 ա. Եթէ առժամանակեայ նպաստ
ընդունող պաշտօնեայ մը իր սպորուստը ճա-
րելու կարող վիճակին հասնի՝ նպաստը կը
զազրի . իսկ եթէ մեռնի՝ նոյնը իր ընտանի-
քին կը վճարուի մինչև վեց ամիս :

Բ. Նմանապէս եթէ ցկեանս թոշակ ըն-
դունող պաշտօնեայ մը մեռնի՝ օրոշեալ թո-
շակը իր ընտանիքը կը ստանայ մինչև մէկ
տարի :

235. Եթէ պաշտօնեայ մը անարատ
պաշտօնավարութեան վկայագիր կամ վկայա-
գրեր չունենայ՝ նպաստի եւ հանգստեան թո-
շակի իրաւունքէն կը զրկուի :

236. Առժամանակեայ արտօնագիր ու-
նեցող պաշտօնեայր օրինաց 233 եւ 234րդ
յօդուածոց տուած իրաւունքները չեն վայելեր
եթէ օրինաց 302րդ յօդուածին արտօնագրած
վկայութիւնները չեն ստացած :

237. Արտաքոյ կարգի արդիւնաւոր պաշ-
տօնեաները կրնան մասնաւոր վարձատրութիւն
ստանալ կեղրոնական կամ Գաւառական քնն-
տուկէն , ըստ օրոշման կեղր. կամ Գաւառ .
Արթական Տեսչութեան :

ԳԼՈՒԹ ԵՐԿՐՈՐԳ

ՊԵՏԱՊՈԼԻՍԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՊԵՏՏՈՆԵԻՑ

Ա.

Պատրաստութիւն դպրոցաց մեջ

238. Ծաղկոցաց Գատարանուհի եւ
Գատարանի պատրաստուելու համար ընտրելա-

գոյն Ստորին գայրոցաց մէջ եւ Ստորին գըպ-
րոցաց վարժապետ եւ վարժուչի պատրաստե-
լու համար ընտրելագոյն բարձրագոյն գայրո-
ցաց մէջ աշակերտներ եւ աշակերտուչիներ
կընդունուին, որք թէ իրենց կրթութեան
աստիճանին համապատասխանող կարգաց ուս-
մանց ընթացքին կը հետեւին եւ թէ առանձին
գասեր կառնուին: Այդ աշակերտք եւ աշա-
կերտուչիք միանգամայն օգնականութիւն կը-
նեն և Օգնական-աշակերտ » կամ « Օգնական
—աշակերտուչի » անուամբ [Յօդ. 198]:

239. Օգնական-աշակերտք կամ աշա-
կերտուչիք պէտք է առ նուազն շարաթը 6
ժամ առանձին գաս առնուին, եւ իրենք առ
տաւելին շարաթը 12 ժամ գաս տան վար-
ժապետաց կամ վարժուչեաց առաջնորդու-
թեամբը:

240 ա. Օգնական-աշակերտք կամ աշա-
կերտուչիք կը յանձնուին միայն վերջնական
Արտօնագիր ունեցող վարժապետաց կամ վար-
ժուչեաց [Յօդ. 300]:

բ. Մէկ վարժապետի կամ վարժուչույ ե-
րեք օգնական աշակերտէ կամ աշակերտուչիէ
աւելի չի յանձնուիր:

գ. Վարժապետ մը կրնայ օգնական-աշա-
կերտուչի ունենալ, բայց առանձին առում
գասերու առնն պէտք է վարժուչին ներկայ
ըլլայ:

241 ա. Իրրեւ օգնական-աշակերտք եւ
աշակերտուչիք կընդունուին անոնք որ, 1.
Բարի վարք ունին, ընդունակ եւ ջանասէր
են. 2. Առողջ եւ կատարեալ կազմուածք եւ
մանկավարժութեան յարմարութիւն ունին:

բ. Օգնական-աշակերտք եւ աշակերտու-
չիք նախ մէկ տնտեսան փորձոյ կ'ենթարկուին
եւ ապա վերջնական կերպով կընդունուին:

գ. Օգնական-աշակերտաց եւ աշակեր-
տուչեաց ընտրութիւնը Տեսուչ-վարժապետք
կամ վարժուչիք կընեն Հոգաբարձուաց համա-
ձայնութեամբ եւ Այցելու-Տեսչաց խորհրդով:

242. Ստորին գայրոց ընդունուող օգ-

նական-աշակերտք եւ աշակերտուչիք պէտք է
նոյն գայրոցի Գ. կարգի ընթացքին եւ բարձ-
րագոյն գայրոց ընդունուողները Ստորին գըպ-
րոցի Գ. կարգի ընթացքին քննութիւնը տան:

243. Օգնական-աշակերտք եւ աշակեր-
տուչիք կ'արձակուին անընդունակութեան եւ
ծուլութեան պատճառաւ իրենց վերջնական
ընդունելութենէն առ նուազն չորս եւ առ
առաւելին վեց ամիս յետոյ:

244. Զրիավարժ օգնական-աշակերտաց
եւ աշակերտուչեաց ի հարկին դրամական նը-
պաստ ալ կը տրուի, եւ Հոգաբարձուք ամեն
կերպ պաշտպանութիւն կընեն անոնց որ կա-
րենան յաջողութեամբ լրացնել իրենց ուսմանց
չրջանը:

245 ա. Այցելու-Տեսուչք պէտք է տա-
րին գէթ չորս անգամ քննեն օգնական աշա-
կերտներն ու աշակերտուչիները եւ պէտք ե-
ղած ուղղութիւնը տան անոնց զբաղմանցը,
որպէս զի երբ օրինաց պահանջած տարիքն
ուսնեան (Յօդ. 17 եւ 186) կարող ըլլան սահ-
մանեալ քննութիւնն տալ եւ Արտօնագիր
ստանալ (Յօդ. 306 Ա. եւ Բ.):

բ. Եթէ օգնական-աշակերտ կամ աշա-
կերտուչի մը օրինաց պահանջած տարիքը լրա-
ւընէ, բայց որ եւ է պատճառաւ կարող չըլլայ
լննութիւն տալու՝ կրնայ տարի մ'եւս շարու-
նակել իւր պաշտօնը՝ Այցելու-Տեսչին հաւա-
նութեամբը:

գ. Օգնական-աշակերտք եւ աշակերտու-
չիք կրնան իրենց պայմանաժամը լրանալէ
առաջ հրաժարիլ հաւանութեամբ Հոգաբար-
ձուաց եւ Այցելու Տեսչաց՝ եթէ ուզեն ման-
կավարժական դասարան մը մտնել [Յօդ. 247]:

246. Երբ Այցելու Տեսուչք ստուգեն
թէ օգնական-աշակերտք եւ աշակերտուչիք
սահմանեալ քննութիւնը (Յօդ. 231) տալու
փճակին հասած են, բայց զեւ օրինաց պա-
հանջած տարիքը չունին՝ (Յօդ. 17 եւ 186)
օգնական-դաստիարակի կամ դաստիարակուչ-
ույ եւ օգնական-վարժապետի կամ վարժուչ-

ւոյ վկայագիր կու տան անոնց [Յօդ. 18 եւ
193]:

—
Բ.

Պատրաստութիւն

Մանկավարժական դասարանաց մէջ

247 ա. Յարմարագոյն Ուսումնարանաց
եւ բարձրագոյն գայրոցաց մէջ պէտք է Ման-
կավարժական դասարանք հաստատուին Կ. գ.
րոնական կամ Գաւառական կրթական Տես-
չութեան որոշմամբը:

բ. Մանկավարժական դասարանաց նպա-
տակն է վարժապետութեան ասպարէզն ընտ-
րելու փափաք ունեցող պատանեաց Մանկա-
վարժական տեսական եւ գործնական անհրա-
ժեշտ հմտութիւնը տալ:

248. Բարձրագոյն գայրոցաց մէջ հաս-
տատուած Մանկավարժական դասարանները
երկու տարուան շրջան եւ երկու կարգ կու-
նենան եւ կ'աւանդեն՝ 1. Գլխաւոր սկզբունք
մանկավարժութեան, 2. Ընդհանուր եւ մաս-
նաւոր եղանակք ուսուցման եւ 3. Կրկնու-
թիւն բարձրագոյն գայրոցի Ե. եւ Զ. կարգաց
ուսմանց ընթացքին:

249. Ստորին ուսումնարանաց մէջ հաս-
տատուած Մանկավարժական դասարանները
մէկ տարուան շրջան կուսնենան եւ կ'աւան-
դեն, 1. Գլխաւոր սկզբունք մանկավարժու-
թեան, 2. Ընդհանուր եղանակք ուսուցման
եւ 3. Կրկնութիւն Ստորին ուսումնարանի Գ.
կարգի ուսմանց ընթացքին:

250. Միջին Ուսումնարանաց մէջ հաս-
տատուած Մանկավարժական դասարանները
մէկ տարուան շրջան կուսնենան եւ կ'աւանդեն,
1. Սկզբունք մանկավարժութեան, 2. Ընդ-
հանուր եւ մասնաւոր եղանակք ուսուցման
եւ 3. Կրկնութիւն Միջին ուսումնարանի Գ.
կարգի մէջ աւանդուած ընդհանուր ուսմանց:

251. Աշակերտք եւ աշակերտուչիք

միանգամայն դասատուութեան գործնական
կրթութիւնք կընեն Ստորին եւ Բարձրագոյն
գայրոցաց մէջ նոյն գայրոցաց կամ Մանկավար-
ժական դասարանի վարժապետաց առաջնոր-
դութեամբը:

252. Մանկավարժական դասարանաց
ուսմանց ծրագիրը, ներքին կազմութեան եւ
բարեկարգութեան կանոնագիրը եւ ուսմանց
միջոցները Կեդրոնական կրթական Տեսչու-
թիւնը կը սահմանէ:

253 ա. Բարձրագոյն գայրոցի մէջ հաս-
տատուած մանկավարժական դասարանք կըն-
դունուին: Բարձրագոյն գայրոցի ուսումնա-
ւարտ աշակերտ եւ աշակերտուչիք եւ անոնց
որ նոյն գայրոցի ուսմանց ընթացքին քննու-
թիւնը կու տան:

բ. Աշակերտք պէտք է առ նուազն 15 եւ
աշակերտուչիք 13 տարեկան ըլլան:

254. Ստորին ուսումնարանի մէջ հաս-
տատուած մանկավարժական դասարանք կըն-
դունուին, Ստորին ուսումնարանի ուսումնա-
ւարտ աշակերտք եւ աշակերտուչիք եւ ա-
նոնք որ նոյն ուսումնարանի ուսմանց ընթաց-
քին քննութիւնը կու տան:

255. Միջին ուսումնարանի մէջ հաս-
տատուած մանկավարժական դասարանք կըն-
դունուին՝ Միջին ուսումնարանի ճիւղերէն
միոյն ուսմանց ընթացքն աւարտող աշակերտք
կամ աշակերտուչիք եւ անոնք որ նոյն ըն-
թացքին քննութիւնը կու տան:

256. Մանկավարժական դասարանաց ա-
շակերտք եւ աշակերտուչիք պէտք է առողջ
եւ կատարեալ կազմուածք եւ վարժապետու-
թեան պաշտօնին յարմարութիւն ունենան եւ
բարի վարուց տէր, ընդունակ եւ աշխատա-
սէր ըլլան:

257. Զեչ---

258. Օրինաց 241, 243 եւ 244 յօդ-
ուածոց տրամադրութիւնները մանկավարժա-

կան դասարանի աշակերտաց ալ կը վերաբե-
րին :

259. Եթէ մանկավարժական վարժարա-
նաց ուսումնաւարտ աշակերտք եւ աշակեր-
տուհիք զեռ օրինաց պահանջած տարիքը չու-
նենան (3օդ. 186 եւ 187) օգնական վարժա-
պետի կամ վարժուհւոյ եւ օգնական ուսուցչի
կամ ուսուցչուհւոյ վկայագիր կատանան (3օդ.
193, 194 եւ 216) :

260 ա. Եթէ ձրիավարժ աշակերտք ա-
նանց օրինաւոր պատճառի ուսմանց ընթացքը
չաւարտած հրաժարին, կամ աւարտելէն յե-
տոյ առ նուազն 2 տարի պաշտօն չվարեն թա-
ղային վարժարանաց մէջ, իրենց համար եղած
ծախուց փոխարէն պարտին զբամական հա-
տուցում ընել :

Բ. Հրաժարման պատճառին օրինաւորու-
թիւնն եւ հատուցանելի գումարին քանակու-
թիւնը Գաւառական կամ Կեդրոնական Կրթ-
թական Տեսչութիւնը կորոշէ Հոգաբարձուին
եւ Այցելու տեսչին կարծիքն առնելով :

261. Հոգաբարձուք եւ Այցելու տե-
սուչք պարտաւոր են ամեն կերպ պաշտպա-
նութիւն եւ քաջալերութիւն ընել ձրիավարժ
աշակերտաց եւ աշակերտուհեաց, որպէս զի
ուսման ընթացքը չաւարտած չի հրաժարին
կամ յետ աւարտման մանկավարժական աւ-
զարէզէն չի հեռանան :

262. Բարձրագոյն դպրոցի Մանկավար-
ժական Գասարանները նոյն դպրոցի Ե. եւ Զ.
կարգաց պէս կը կազմուին օրինաց 76րդ
յօդուածի ա. եւ բ. պարբերութեանց տրա-
մադրութիւններուն համաձայն :

263. Մանկավարժական դասարանաց
դասերը դպրոցաց եւ ուսումնարանաց վար-
ժապետաց եւ ուսուցչաց կը յանձնուին, բայց
ի պահանջել հարկին ուրիշ դասատուներ ալ
կրնան հրաւիրուիլ :

264. Բարձրագոյն դպրոցաց եւ ուսում-
նարանաց Այցելու տեսուչք, Հոգաբարձուք

եւ ներքին տեսուչք միանգամայն Մանկավար-
ժական դասարանաց հսկողութիւնը, Հոգա-
բարձութիւնը եւ տեսչութիւնը կը կատարեն :

265. Մանկավարժական դասարանաց
ծախքերը այն դպրոցաց եւ ուսումնարանաց
արկղներէն կը հոգացուին՝ ուր որ հաստատ-
ուած են, եւ հասոյթները նոյն արկղներուն
կը պատկանին :

266. Օրինաց միւս յօդուածները, որք
նախընթաց 247-263 յօդուածոց մասնաւոր
տրամադրութեամբք չեն բարեփոխուած, Ման-
կավարժական դասարանաց ալ կը վերաբերին :

—
Գ.

Գատրաստութիւն
Բարձրագոյն Ուսումնարանաց մէջ

267. Միջին ուսումնարանաց եւ Վար-
ժապետանոցի երկու սեռի ուսուցիչներ պատ-
րաստելու համար Կեդրոնական Կրթական
Տեսչութիւնը Բարձրագոյն ուսումնարաններու
կամ վարժապետանոցներու մէջ աշակերտներ
կը զնէ :

268. Այդ աշակերտաց ծախքերը Կեդ-
րոնական կամ Գաւառական Կրթական արկղէն
եւ կամ այլ միջոցաւ կը հոգացուին եւ անոնց
ընտրութիւնը Կեդրոնական Կրթական Տեսչու-
թիւնը կընէ Միջին ուսումնարանաց ուսում-
նաւարտ աշակերտաց կամ նոյն ուսումնարա-
նաց ընթացքին քննութիւնը տուողներուն մէ-
ջէն : Եթէ ներկայացողներուն թիւը մէկէն
աւելի ըլլայ՝ ընտրութիւնը մրցմամբ կը կա-
տարուի :

269. Ընտրուելիք աշակերտք պէտք է՝
1. առողջ եւ կատարեալ կազմուածք եւ դա-
սատուութեան փափաք եւ յարմարութիւն ու-
նենան . 2. չունենոր ընտանիքէ, բարի վա-
րուց աէր, ընդունակ եւ ջանասէր ըլլան եւ
3. յանձն առնուն 4-5 տարի ազգային վար-

ժարանաց մէջ պաշտօն վարելու կամ իրենց
համար եղած ծախքերը հատուցանելու :

270. Ընտրուած աշակերտք նախ երեք
ամիս փորձոյ կենթարկուին ազգային վարժա-
րաններէն միոյն մէջ եւ ապա Բարձրագոյն
ուսումնարան մը կը դրուին՝ եթէ փորձը ընտ-
րութեան պատշաճաւորութիւնը հաստատէ :

ԳԼՈՒԿ ԵՐԲՈՐԳ

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒ-
ԹԻՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵՒՑ

—
Ա.

Մրցում

271. Վարժապետաց եւ վարժուհեաց
ինքնակրթութեան եւ կատարելագործութեան
մղում մը տալու նպատակաւ ամէն տարի մրց-
ման համար գրաւոր նիւթեր կառաջարկուին
անոնց եւ ներկայուած գործոց արժանեաց
համեմատ գրաւոր եւ զբամական մրցանակներ
կը տրուին :

272. Այս մրցմանց համար պէտք եղած
ծախքը Կեդրոնական Կրթական արկղէն կամ
մասնաւոր նուէրներով կը հոգացուին :

—
Բ.

Մանկավարժական դասախօսութիւնը

273 ա. Ի գաւառս Գաւառական եւ Այ-
ցելու Տեսուչք եւ Ի Պոլիս Կեդրոնական Կրթ-
թական Տեսչութիւնը ամէն ջանք ի գործ կը
զննեն Մանկավարժական դասախօսութիւնը
հաստատելու յարմարագոյն տեղեր եւ ժամա-
նակներ :

Բ. Այդ դասախօսութեանց նպատակն է
պաշտօնի մէջ գտնուող վարժապետաց եւ վար-
ժուհեաց մանկավարժական անհրաժեշտ զխտե-

լիք հաղորդել եւ անոնց ինքնակրթութեանը
օգնել :

274. Թաղային դպրոցաց եւ ծաղկոցաց
վարժապետք եւ վարժուհիք պարտաւոր են
կանոնաւոր կերպով ներկայ լինել Մանկավար-
ժական դասախօսութեանց :

275. Մանկավարժական դասախօսու-
թեանց ծրագիրն ու կանոնագիրը կը հրատա-
րակէ Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը :

276. Գաւառական եւ Այցելու Տեսուչք
եւ Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը ձե-
ռնհաս անձանց գործակցութեանը կը զիմեն,
որպէս զի ըստ կարելոյն շատ թաղերու մէջ
կարենան հաստատուիլ Մանկավարժական դա-
սախօսութիւնք :

—
Գ.

ՎԱՐՉԱԳԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ

1. Կրթական շրջանակաց Վարժապետական
ժողովք

277. Եւրաքանչիւր Կրթական կամ Դըպ-
րոցական շրջանակի (3օդ. 358 ա.) արտօն-
եալ վարժապետք եւ վարժուհիք տարին զէթ
3 անգամ ի ժողով կը գումարին :

278. Վարժապետական ժողովոց զըլ-
խաւոր նպատակն է իրենց անդամոց ինք-
նակրթութիւնն ու յառաջադիմութիւնը : Ժո-
ղովոց զբաղմանց գլխաւոր առարկաներն են՝
1. Մանկավարժական եւ դպրոցական խնդրոց
վրայ գրաւոր գործեր ներկայել ժողովին քնն-
նութեանը, 2. Ընդհանրապէս վարժարանաց
յառաջադիմութեան եւ մասնաւորապէս գաս-
տիարակութեան եւ դաստուութեան եղա-
նակաց, դասադրոց եւ այլ դասական միջո-
ցաց վրայ խորհրդակցիլ եւ առաջարկութիւն-
ներ ընել Կրթական իշխանութեանց, 3. Դըպ-
րոցական պաշտօնէից վիճակի բարւոքման եւ

ընկերական զրից բարձրացման միջոցներ խորհիլ, առաջարկել եւ հրատարակել եւ և. կրթական իշխանութեանց առաջարկած խնդրոց վրայ կարծիք տալ :

279. Իւրաքանչիւր ժողովոյ նիստերը պէտք է կանոնաւոր արձանագրութիւնք ունենան եւ անոնց համառօտ բովանդակութիւնք թէ կեդրոնական կամ Գաւառական Տեսչութեան եւ թէ՛ Դաւառաց վարժապետական ժողովներուն :

280. Կրթական իշխանութիւնք կրնան ներկայ ըլլալ վարժապետական ժողովոց նիստերուն, բայց եթէ ժողովոյ անդամ չեն միայն ձայն կուսենան :

281. Վարժապետական ժողովոց ընդհանուր կանոնադիրը կեդրոնական կրթական Տեսչութիւնը կը գծէ, իսկ իւրաքանչիւր շքրջանակի ժողով իր մասնաւոր ներքին կանոնադիրը կուսենայ կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան վաւերացած :

282 ա. Գաւառաց մէջ Գաւառական կրթական Տեսչութիւնք պէտք է ամեն ջանք ի զործ դնեն վարժապետաց ճանապարհի ծախքերն հոգալու իրենց կրթական արկղէն կամ այլ միջոցաւ :

Բ. Նոյն կերպով հոգացուելու են եւ ժողովոց հրատարակութեանց ծախքերը :

2. Գաւառական վարժապետական ժողովք

283. Իւրաքանչիւր գաւառի շքանակներու ժողովները իրենցմէ ընտրեալ պատուիրակներու միջոցաւ կրնան Գաւառական վարժապետական ժողով կազմել իրենց գաւառագլուխը :

284. Գաւառական վարժապետական ժողովները կեդրոնական կրթական Տեսչութեան վաւերացեալ ներքին կանոնադիր կուսենան :

285. Իւրաքանչիւր գաւառական վարժապետական ժողով պէտք է իւր նիստերու արձանագրութեանց համառօտ բովանդակութիւնք հաղորդէ թէ՛ կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան եւ թէ՛ Դաւառաց վարժապետական ժողովներուն :

286 Օրինաց 278, 280 եւ 282 յօդուածները գաւառական վարժապետական ժողովոց ալ կը վերաբերին :

3. Ընդհանուր վարժապետական ժողով

287. Գաւառական վարժապետական ժողովները կրնան իրենցմէ ընտրեալ պատուիրակներու միջոցաւ Ընդհանուր վարժապետական ժողով կազմել ի Չօլիս :

288. Օրինաց 278, 280, 284 եւ 285 յօդուածոց արձանագրութիւնքը Ընդհանուր վարժապետական ժողովոյ ալ կը վերաբերին :

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

ՔՆՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐՏՕՆԱԳԻՐՔ

Ա.

Քննութիւնք

289 ա. Ազգային վարժարանաց մէջ պաշտօն վարելու համար քննութիւն տալու եւ Արտօնագիր ստանալու է :

Բ. կեդրոնական կրթական Տեսչութիւնը առանց քննութեան Արտօնագիր կուտայ իրենց աստիճանին համեմատ՝ անոնց որ իրենց բարի վարուքն ու կրթական ասպարիզին մէջ ցոյց տուած արդեամբը քաջածանօթ են :

գ. Անոնք որ սահմանեալ քննութեանց աստիճաններուն հաւասար (Յօդ. 306 Ա-Ե.) ուսմանց վկայական կը ներկայեն՝ նոյն աստիճաններու պահանջած ընդհանուր քննութիւններէն ազատ են :

290 ա. Քննութիւնները կը կատարեն

1. կեդրոնական կրթական Տեսչութիւնն՝ իրմէ կարգեալ Քննիչ Մասնախմբերու ձեռքը,

2. Գաւառական կրթական Տեսչութիւնը՝ իրենցմէ կարգեալ Քննիչ Մասնախմբերու ձեռքը,

3. Այցելու Տեսուչք՝ Գաւառական կրթական Տեսչութիւններէն կարգեալ Քննիչ Մասնախմբերու ձեռքը :

Բ. Կրօնական ուսմանց եւ Եկեղեցական երաժշտութեան քննութիւնները կը կատարեն Կրօնական Խորհրդականն ու իրմէ կարգեալ Քննիչները :

291. Գաւառական կրթական Տեսուչք քննութիւններն աւարտելէ ետք՝ անոնց եզրակացութեանցը վրայ տեղեկագիր կը ներկայեն կեդրոնական կրթական Տեսչութեան, նոյնպիսի տեղեկագիր կը ներկայեն Այցելու Տեսուչք Գաւառական Տեսչաց :

292. Քննիչ Մասնախմբերու անգամը կրնան մասնաւոր վարձատրութիւն ստանալ կեդրոնական կամ Գաւառական կրթական Արտօնագրէն :

293. Քննութիւնները տեսական եւ գործնական են, որոց ծրագիրներն ու կանոնադիրը կեդրոնական կրթական Տեսչութիւնը կը սահմանէ :

294 ա. Քննութիւնները տեղի կուսենան տարին երկու անգամ, բայց ի պահանջել հարկին արտաքոյ կարգի քննութիւններ ալ կրնան ըլլալ՝ եթէ քննիչ իշխանութիւնք կարեւոր դատեն :

Բ. Քննութեանց օրն ու տեղը կը ծանուցուին ամիս մը առաջ ազգային լրագրաց միջոցաւ եւ կանոններն ու ծրագիրները կը տրուին միշտ ամէն անոնց որ քննութեան կը պատրաստուին :

295 ա. Քննութիւն տալ եւ արտօնագիր ստանալ ուզողք պէտք է Օրինաց պահանջած տարիքն ունենան (Յօդ. 47, 186, 187 եւ 214) եւ որչեալ օրէն գէթ շարաթ մը առաջ գրով

խնայեն թէ ի՞նչ պաշտօնի կամ ի՞նչ ուսման համար քննութիւն տալ կուզեն, եւ միանգամայն ներկայեն 1. վարուց վկայական կամ վկայականներ այն թաղային իշխանութիւններէն՝ ուր բնակած կամ ճանչցուած են, 2. Մենդեան վկայական, 3. Պաշտօնավարութեան վկայական կամ վկայականներ՝ եթէ արդէն պաշտօն վարած են, 4. ուսմանց վկայական՝ եթէ ունին. եւ 5. իրենց համառօտ կենսագրութիւնը, որուն պարունակելի տեղեկութիւնները կեդրոնական կրթական Տեսչութիւնը կորոչէ :

Բ. Ազգային իշխանութեան չորսականող անձանց ուսմանց եւ վարուց վկայականները պէտք է որ իրենց Տեղական իշխանութիւններէն վաւերացած ըլլան :

Բ.

Արտօնագիրք

296. Արտօնագիրք երկու տեսակ են Ընդհանուր եւ մասնաւոր (Յօդ. 299):

297 ա. Ընդհանուր են այն Արտօնագիրները՝ որք իրաւունք կուտան Ստորին զըպրոցի մէջ աւանդուած բոլոր ուսմանց ու Բարձրագոյն դպրոցի եւ ուսումնարանաց մէջ աւանդուած քանի մը նոյնատեսակ ուսմանց դասատուութիւն ընելու :

Բ. Նոյնատեսակ զիտութեանց խումբերն ու իւրաքանչիւր խումբի պատկանեալ զիտութիւնները կեդրոնական կրթական Տեսչութիւնը կորոչէ քննութեանց ծրագրին մէջ :

298 ա. Մասնաւոր են այն Արտօնագրերը որք իրաւունք կուտան միայն մէկ ուսմանքի դասատուութիւն ընելու Բարձրագոյն դպրոցաց կամ Ստորին եւ Միջին ուսումնարանաց մէջ :

Բ. Բացառութիւն— եթէ հարկը պահանջէ՝ Ստորին դպրոցի մէջ աւանդուած միայն հետեւեալ դասերուն համար մասնաւոր Արտօնագիր կը տրուի՝ գեղագրութեան, գծա-

գրութեան, երաժշտութեան, մարմնամարզիչ, ձեռագործի եւ անասութեան :

299. Արտօնագիրները Վերջնական են (Յօդ. 300) եւ առ ժամանակեայ (Յօդ. 304 եւ 306 Ա-Ե) :

300. Վերջնական Արտօնագիր կը տրուի անոնց որ սահմանեալ քննութիւնը յաջողութեամբ կուտան կամ առ ժամանակեայ Արտօնագիր ստանալէ ետք երեք տարի արդիւնաւոր կերպով պաշտօն կը վարեն (Յօդ. 302) :

301. Առ ժամանակեայ Արտօնագիր կը տրուի անոնց որ սահմանեալ քննութիւնը միայն չհաջողութեամբ կուտան (Յօդ. 306 Ա-Ե) :

302 ա. Առ ժամանակեայ Արտօնագիրները միայն հինգ տարի զօրութիւն ունին : Անոնք որ մինչեւ ի լրանալ այդ պայմանաժամին սահմանեալ քննութիւնը յաջողութեամբ չեն տան կամ վերջին երեք տարուան միջոցին գէթ երեք վկայութիւն չստանան Այցելու Տեսչաներէն թէ արդիւնաւոր կերպով կատարած են պաշտօններն՝ ազգային վարժարանաց մէջ պաշտօն վարել չեն կրնար առանց վերստին քննութեան ենթարկուելու եւ Արտօնագիր ստանալու :

Բ. Այցելու Տեսչիչ նոյն վկայութիւնը ստանալու են կեղծութեան կամ Գաւառական կրթական տեսչութենէն :

303. Ազգային վարժարանաց մէջ դաս տալ կրնան առանց Արտօնագրի 1. անոնք որ ձրի դասախօսութիւն կրնեն կրթական իշխանութեանց հրաւիրանօք, 2. անոնք որ օգնական-վարժապետ կամ վարժուհի են եւ 3. անոնք որ օգնական-աշակերտ կամ աշակերտուհի են (Յօդ. 18, 113, 193, 194, 198, 199 եւ 216) :

304. Ամէն Արտօնագիր եւ վկայական (Յօդ. 89 գ.) իր զօրութիւնը կը կորուսնէ՝ եթէ անոր տէրը հինգ տարի շարունակ կըրթութեան ասպարէզէն հեռացած ըլլայ :

305. Կեղծութեան կրթական Տեսչութիւնը Առ ժամանակեայ Արտօնագիր մը կուշնչացնէ, Վերջնական Արտօնագիր մը Առ ժամանակեայ կը փոխէ եւ բարձրագոյն աստիճանի Արտօնագիր մը ստորին աստիճանի կիջեցնէ՝ եթէ փորձն ու Այցելու եւ Գաւառական Տեսչաց վկայութիւնները զայդ պահանջեն :

306. Արտօնագիրը հինգ աստիճան ունին. Ա. Մաղկոցի դաստիարակուհւոյ կամ դաստիարակի Առ ժամանակեայ Արտօնագիր կը տրուի անոնց որ Օրինաց պահանջած տարիքն ունին (Յօդ. 17) եւ Ստորին դպրոցի ուսմանց ընթացքին եւ մանկավարժութեան հիմնական սկզբանց քննութիւն կուտան չհաջողութեամբ կերպով :

Բ. Ստորին դպրոցի վարժապետի կամ վարժուհւոյ Առ ժամանակեայ Արտօնագիր կը տրուի անոնց որ Օրինաց պահանջած տարիքն ունին (Յօդ. 186) եւ Մանկավարժական դասարանաց ու Բարձրագոյն դպրոցի ուսմանց ընթացքին քննութիւնը կուտան չհաջողութեամբ կերպով :

Գ. Բարձրագոյն դպրոցի վարժապետի կամ վարժուհւոյ Առ ժամանակեայ Արտօնագիր կը տրուի անոնց որ պահանջուած տարիքն ունին (Յօդ. 187) եւ Ստորին ուսումնարանի ուսմանց ընթացքին ընդհանուր քննութիւն եւ իրենց ուսուցանելիք առարկային կամ առարկաներուն ու Մանկավարժական դասարանի ընթացքին մասնաւոր քննութիւն կուտան չհաջողութեամբ կերպով :

Դ. Ստորին ուսումնարանի վարժապետի կամ վարժուհւոյ Առ ժամանակեայ Արտօնագիր կը տրուի անոնց որ պահանջուած տարիքն ունին (Յօդ. 214) եւ Միջին ուսումնարանի ճիւղերէն միայն ընթացքին ընդհանուր քննութիւն եւ իրենց ուսանելիք առարկային կամ առարկաներուն եւ Մանկավարժական դասարանի ընթացքին մասնաւոր քննութիւն կուտան չհաջողութեամբ կերպով :

Ե. Միջին ուսումնարանի ուսուցչի Առ ժամանակեայ Արտօնագիր կը տրուի անոնց որ

պահանջուած տարիքն ունին (Յօդ. 214) եւ Բարձրագոյն ուսումնարանի մը մէջ ուսումնաւարտած եւ վկայագիր ստացած են եւ իրենց աւանդելիք ուսման կամ ուսմանց, ինչպէս եւ մանկավարժական հիմնական զկզբանց մասնաւոր քննութիւն կուտան չհաջողութեամբ կերպով :

307 ա. Կեղծութեան կրթական Տեսչութիւնը ամեն աստիճանի Արտօնագիր կուտայ. Գաւառական Տեսչութիւնը միայն ծաղկոցի, ստորին ու բարձրագոյն դպրոցի եւ ստորին ուսումնարանի. Այցելու Տեսչիչ միայն ծաղկոցի եւ ստորին դպրոցի :

Բ. Գաւառական եւ այցելու Տեսչաց տրուած Արտօնագիրները պէտք է կեղծութեան կրթական տեսչութենէն վաւերանան :

308 ա. Արտօնագրոց համար պէտք է հետեւեալ տուրքերը վճարուին .

Վերջնական արտօնագրոց տուրքերն են՝

1. Մաղկոցի	1/4 Օսմ. ոսկի
2. Ստորին դպրոցի	1/2 »
3. Բարձրագոյն դպրոցի	3/4 »
4. Ստորին ուսումնարանի	1 »
5. Միջին ուսումնարանի	1 1/2 »

Բ. Իսկ Առ ժամանակեայ Արտօնագրոց համար նշանակեալ տրոց կէտը :

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿՐԹԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԲ

ԳԼՈՐԹ ԱՌԱՋԾՆ

ԿԵԿՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

1. Ազգային Վարչութեան կրթական Խորհրդական

309. Ըստ Տրդ յօդուածի Ազգային Վարչական կազմակերպութեան Օրինաց Ազգային կրթութեան գործոց անօրինումն ու հսկողու-

թիւնը կը պատկանի Ազգային կեղծութեան Վարչութեան կրթական Խորհրդականին, որ կը վարէ իր պաշտօնը նոյն Օրինաց 12, 14, 15 (բ. պրք.) յօդուածոց համաձայն :

310. Կրթական Խորհրդականին եւ Վարչական Խորհրդոյ մէջ ծագած անհամաձայնութիւնը Ազգ. ժողովոյ կը ներկայի Պատրիարքին միջոցաւ՝ եթէ նա համամիտ է կրթական Խորհրդականին եւ կրթական Խորհրդականին միջոցաւ, եթէ Պատրիարքը համամիտ է Վարչական Խորհրդոյ :

311 ա. Կրթական Խորհրդականը կրնաւորուի Վարչական կազմակերպութեան Օրինաց Ցրդ յօդուածին համաձայն, իր պաշտօնը կը տեւէ երկու տարի (Օր. Վարչ. կազ. Յօդ. 14) :

Բ. Կրթական Խորհրդականն երբ օրինական շրջանն աւարտելէ յետոյ կամ յառաջ հըրաժարի, պարտի շարունակել իւր պաշտօնն մինչեւ որ իւր յաջորդն գործոց գլուխն անցնի :

2. Ընդհանուր Տնօրէն Ազգային Վարժարանաց

312. Կրթական Խորհրդականը թոշակաւոր պաշտօնեայ մը կուեննայ «Ընդհանուր Տնօրէն Ազգային Վարժարանաց» անուամբ, որոյ ընտրութիւնն ու անուանումը Վարչական կազմակերպութեան Օրինաց 16րդ յօդուածին համաձայն կըլլայ :

313. Ընդհանուր Տնօրէնը պէտք է 1. ուսումնական անձ մ'ըլլայ, 2. Մանկավարժական գիտութեանց, քաղաքակիրթ ազգաց կրթական օրինացն ու վարժարանաց ընթացքին, ինչպէս եւ դպրոցական վարչութեան մասնաւոր հմտութիւն ունենայ եւ 3. Ազգային կրթութեան ասպարիզին մէջ ծանօթ ըլլայ իր վարած պաշտօններովն ու գրական գործերովը :

314. Ընդհանուր Տնօրէնը ներկայ կըլլայ Ազգային ժողովոյ նիստերուն՝ երբ անոնց օրակարգին մէջ կրթութեան վերաբերեալ խնդիր կայ, եւ՝ եթէ երեսփոխան չէ՝ միայն ձայն կուեննայ :

3. Պաշտօն եւ յարաբերութիւնք

315. Կեդրոնական Կրթական Տեսչութեան պաշտօնն է

1. Ազգային կրթութեան ընդհանուր տեսչութիւնն ընել (Օր. Վարչ. կազմ. յօդ. 24) .

2. Ազգային կրթութեան վերաբերեալ օրինաց ծրագիրները նախաքննել կամ պատրաստել եւ առաջարկել եւ հաստատեալ Օրէնքները գործադրել .

3. Օրինաց տրամադրութեանց պահանջած ընդհանուր կանոնադրութիւնները յօրինել .

4. Ազգային կրթութիւնն ընդհանրացնելու եւ զարգացնելու միջոցները քաջալերել .

5. Ազգային վարժարանաց, մատենադարանաց եւ այլ ամէն տեսակ կրթական հաստատութեանց վրայ հսկել .

6. Ազգային կրթութեան պաշտօնեաները քննել եւ արտօնել, բայց ի կրօնագիտութեան դասատուներէն (Օր. Վարչ. կազմ. Յօդ. 19) .

7. Նոցա կայսրութիւնը բարեօրէնել, ապագայն արահովելու եւ հետզհետէ բուսողուններն հասցնելու հոգ տանել .

8. Ազգային վարժարանաց դասարբերն ու այլ դասական միջոցներն որոշել, բայց ի կրօնական ուսմանց վերաբերեալներէն (Օր. Վարչ. կազմ. Յօդ. 19) .

9. Ստորակարգեալ Կրթական իշխանութեանց որոշումներն վերաքննել կամ վաւերացրնել .

10. Ազգային կրթութեան սոյնտող մասնաւոր անձանց, ընկերութեանց եւ վանական մարանութեանց ուսմանց յայտագիրներն ու կանոնադրութիւնները քննել ու վաւերացնել եւ անոնց պատկանեալ կրթական հաստատութիւններուն վրայ հսկել .

316. Եթէ օրինաց տրամադրած պաշտօնները մինչեւ մէկ ամիս թափուր մեան ձեւորնչուա իշխանութեանց անհոգութենէն կամ այլ պատճառաւ Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը պէտք եղած ազգարարութիւնն ընելէ ետք ինք կը նշանակէ սահմանեալ պաշտօնեանց եւ անոր հաստատութիւնը կը պահանջէ համաձայն Օրինաց .

317. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կը հսկէ որ յանուն Ազգային կրթութեան եղած կտակներն անխիբի գործադրուին եւ Ազգին մէջ կրթութիւն տարածելու նպատակաւ կազմուած բարեգործական ընկերութիւնները իրենց նպատակին համաձայն գործեն, եւ տարին անգամ մը տեղեկագիր եւ հաշիւ կառնու յիշեալ կտակաց գործադիրներէն եւ ընկերութիւններէն .

318. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կտակաց եւ ընկերութեանց հաշիւներն քննելէ ետք Կեդրոնական Տեսչական Տեսչութեան կը յղէ զանոնք հանդերձ իւր դիտողութիւններովը .

319. Եթէ այդ հաշուց մէջ նենգութիւն ըլլայ կամ կտակաց գործադիրը կտակակատարի կամքին եւ ընկերութիւնը իրենց նպատակին համաձայն վարուած չըլլան՝ Ազգային Վարչութիւնը անոնց դէմ դատ կը բանայ ձեռնհաս Առեաններու առջեւ .

320 ա. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը իր հսկողութիւնը կը գործադրէ գաւառաց մէջ Գաւառական Կրթական Տեսչաց, իսկ Պօլսոյ մէջ Այցելու Տեսչաց միջոցաւ . կը հաղորդէ անոնց եւ անոնց միջոցաւ Կրթական բոլոր իշխանութեանց եւ պաշտօնէից իր դիտողութիւնները, կարգադրութիւններն ու հրահանգները եւ կը պահանջէ անոնցմէ կարեւոր դատած տեղեկութիւններն ու բացատրութիւնքը .

բ. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կրնայ ի պահանջել հարկին ուղղակի յարաբերութիւն ունենալ Կրթական իշխանութեանց եւ պաշտօնէից հետ .

321 ա. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը Պօլսոյ Այցելու Տեսչաներէն երեք ամիս անգամ մը եւ Գաւառական Կրթական Տեսչութիւններէն վեց ամիս անգամ մը ցուցակով, իսկ տարին անգամ մը ընդհանուր տեղեկագիր կառնու կրթական հաստատութեանց վիճակին վրայ հանդերձ վիճակագրական ցուցակօք .

բ. Տարեկան տեղեկագիրները երեք տարին անգամ մը պէտք է մանրամասն տեղեկութիւնք պարունակեն կրթական հաստատութեանց ներքին եւ արտաքին սոյնմաններուն, սոյնքն զարգացական շէնքերու եւ դոյից, ուսմանց միջոցներու, պաշտօնէից եւ աշակերտաց, հասութից եւ ծախսաց եւ այլ ամենայն կարեւոր նիւթոց վրայ, եւ միանգամայն պէտք է ներկայեն անոնց բարգաւաճման եւ յառաջադիմութեան նկատմամբ կարեւոր գաղտած միջոցներու առաջարկութիւնք .

դ. Տեղեկագրոց եւ ցուցակաց պարունակելիք նիւթոց մանրամասնութիւնները Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կ'որոշէ .

322. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը Գաւառաց վարժարաններուն վիճակին ձօտէն վերահասու ըլլալու համար ի պահանջել հարկին արտաքոյ կարգի քննութիւնք կ'ընէ մասնաւոր քննչաց միջոցաւ .

323. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը իր համարատուութիւնը կը կատարէ Սահմանադրական տարեգլխուն՝ ներկայելով Ազգ. Ժողովոյ Ազգային կրթութեան ընդհանուր վիճակը, իր ըրած տնօրէնութիւններն ու կարեւոր դատած առաջարկութիւնները .

4. Պարտիք

324. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը մասնաւոր փոյթ կը տանի

1. Վարժապետանոց մը հիմնելու (Յօդ. 407) .

2. Մանկավարժական դասախօսութիւնք հաստատելու (Յօդ. 273) .

3. Ազգային կրթութեան պաշտօնէից ներկան բարեօրէնելու եւ ազգան ապահովելու նըպատակաւ Մայրաքաղաքիս մէջ ընդհանուր ընկերութիւն մը կազմելու եւ Գաւառական Կրթական Տեսչաց միջոցաւ գաւառաց մէջ մասնաւոր ճիւղեր հաստատելու .

4. Կեդրոնական Մանկավարժական Թանգարան եւ Մատենադարան մը հաստատելու .

5. Մանկավարժական հանդէս մը, դասագրքեր ինչպէս եւ դասական այլ միջոցներ եւ

մատենադարանաց համար պիտանի գրքեր հըրատարակելու կամ հրատարակել տալու .

6. Վարժապետանոցի եւ ուսումնարանաց սուսցիչներ պատրաստելու համար բարձրագոյն ուսումնարանաց մէջ աշակերտներ դնելու [Յօդ. 267] .

325. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կը պատրաստէ եւ կը հրատարակէ

1. Ուսմանց ընդհանուր ծրագիրներն ու վարժարանաց կազմակերպութեան եւ բարեկարգութեան ընդհանուր կանոնադիրները .

2. Ուսուցման եղանակաց հրահանգները .

3. Աշակերտաց եւ վարժապետաց քննութեանց եւ մրցմանց կանոնները .

4. Վարժապետական Ժողովոց կազմական կանոնագիրը .

5. Մանկավարժական դասախօսութեանց ծրագիրն ու կանոնագիրը .

6. Ազգային վարժարանաց մէջ գործածուելիք օրագրութեանց, ժամանակացոյցներու, այլ եւ այլ տուժարաց եւ ցուցակաց, վկայականներու եւ վիճակացոյցներու, ինչպէս եւ սահմանեալ տեղեկագրոց մասնաւոր հրահանգներն ու ձեւերը .

7. Ազգային վարժարանաց մէջ գործածուելիք դասագրոց եւ այլ դասական միջոցներու եւ մատենադարաններու մէջ ընդունուելիք գրքեանց ցուցակները .

8. Վարժարանաց եւ գրասեղնաց շինութեան վերաբերեալ հրահանգները .

9. Գաւառական, Այցելու եւ Ներքին Տեսչաց եւ Հոգարարձուաց պաշտօնին վերաբերեալ հրահանգները, եւ այլ ամէն բան ինչ որ իւր պաշտօնին բնութիւնն ու օրինաց տրամադրութիւնքը պահանջեն .

5. Ազգային կրթութեան ընդհանուր պիտոյից հաստատուն եկամուտ եւ արկղ

326. Ազգային Կեդրոնական Վարչութեան արտօնութիւն կը տրուի ազգային կրթութեան ընդհանուր պիտոյից համար հաստատուն եկամուտ կազմելու եւ տարեկան ծախուց համար կեդրոնական կրթական արկղ հաստատելու .

(Հաստատու եկամուտ)

327. Հաստատուն եկամուտ կազմելիք միջոցներն են՝

1. Յանուն ընդհանուր Ազգային կրթութեան եղած կտակներն ու նուէրները, որոց անօրինութիւնը մասնաւոր անձի կամ մարմնոյ մը չէ յանձնուած .

2. Ազգայնոց ըրած կտակներու վրայ պահանջելի նուէրը .

3. Իր արկղի հաստիճին տասներորդ մասը [Յօդ. 328] :

Կրթական խորհրդականութիւնը կը պնդէ իւր ծրագրին Յօդուածոյն վրայ, որ էր .

327. Հաստատուն եկամուտ կազմելիք միջոցներն են՝

1. Այն ազգային կայուածներն որ մասնաւոր թաղի, գաւառի կամ հաստատութեան մը սեփականութիւն չեն .

2. Յանուն ընդհանուր ազգային կրթութեան եղած կտակներն ու նուէրները, որոց անօրինութիւնը մասնաւոր անձի կամ մարմնոյ մը չէ յանձնուած .

3. Ազգայնոց ըրած կտակներու արժէքէն կէս առ հարիւր .

4. Իր արկղի հաստիճին տասներորդ մասը (Յօդ. 328) :

(Կրթութեան արկղ)

328. Կեդրոնական կրթական արկղի ազդեցութիւնն են՝

1. Հաստատուն եկամտից տարեկան հաստիճը .

2. Կեդրոնական Սնտուկի հաստիճին առ նըւազն հինգերորդ մասը .

3. Իր հրատարակութեանց արդիւնքէն զօրինակի հաստիճը .

4. Մասնաւոր նպաստը և նուէրը .

5. Արտօնագրոց տուրքէն զոյսացած հաստիճը [Յօդ. 308] .

6. Կեդրոնական Ուսումնարանէն զոյսացած հաստիճը (Յօդ. 456) .

7. Վաւերանալիք դասագրքերէն և այլ դասական միջոցներէն հաշար օրինակէն բտան օրինակ .

8. Վարժարան շունեցող վանօրէից հաստիճին մաս մը՝ զոր կորուչէ Ազգ. Կեդր. Վար. շուքիւնն :

329. Ազգային ընդհանուր կրթութեան հաստատուն եկամտուն անհպելի է և անօրինչպէս և Կեդրոնական կրթական արկղի հաստիճները իրենց նպատակէն դատ օ և է ուրիշ բանի չեն կրնար գործածուիլ :

330. Ազգային ընդհանուր կրթութեան սրտկանեալ Հաստատուն եկամտին անօրինութիւնը Վարչական Խորհրդոյ կը վերաբերի, իսկ Կեդրոնական կրթական Արկղին՝ կրթական Խորհրդականին, որ իր տարեկան տեղեկագրին [Յօդ. 323] հետ կը ներկայէ Ազգ. ժողովոյ և իր մատակարարութեան հաշիւն . իսկ յաջորդ տարուան սխառնէն պէտք է ներկայէ տարեգլխէն զէթ երկու ամիս առաջ :

6. Գիւան

331 ա. Կեդրոնական կրթական Տեսչութիւնը իր յատուկ Գիւանը կունենայ՝ ուր մասնաւոր կանոնագրով մը սահմանեալ եղանակաւ կը սահմանին բոլոր պաշտօնական արձանագրութիւնները, տուժարներն ու այլ թղթերը :

բ. Կրթական Խորհրդականը իր հրամարման միջոցին Գիւանի գործերը կը յանձնէ ցուցակաւ իր յաջորդին :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆԻՔ

1. Գաւառական կրթական Տեսուչ

332 ա. Իւրաքանչիւր գաւառ կունենայ Գաւառական կրթական Տեսուչ մը, որ Գաւառական ժողովէն կը ընտրուի եւ Կեդրոնական կրթական Տեսչութեան կը վաւերանայ :

բ. Գաւառական կրթական Տեսչին պաշտօնը կը տեւէ երկու տարի :

333 ա. Գաւառական կրթական տեսուչը պատասխանատու են Գաւառական ժողովին եւ Ազգային կրթութեան Կեդրոնական Տեսչութեան :

բ. Գաւառական կրթական Տեսչին ստորագրեալ և պատասխանատու են նոյն գաւառին բոլոր կրթական իշխանութիւններն ու պաշտօնեաները :

334. Գաւառական կրթական Տեսուչը պէտք է ուսումնական անձ մ'ըլլայ եւ մանկավարժական զիտութեանց, ինչպէս եւ կրթական օրինաց եւ վարչութեան մասնաւոր հմտութիւն ունենայ :

335. Գաւառական ժողովը երբ հարկագրի Գաւառական կրթական Տեսուչը հրաժարեցնել պարտի իր որոշումը Կեդրոնական կրթական Տեսչութեան հաղորդել պատճառաբանեալ տեղեկագրով :

336. Կեդրոնական կրթական Տեսչութիւնը երբ կտուգէ թէ Գաւառական կրթական Տեսուչ մը պարտազանցութեան կամ յանցանաց մէջ կը գտնուի՝ բացատրութիւն կուղէ նոյն Տեսչէն եւ եթէ բացատրութիւնը գոնացուցիչ չի գտնուի՝ անոր պաշտօնանկութիւնը կտաջարկէ Գաւառական ժողովին : Եթէ մինչեւ երեք ամիս իր առաջարկութիւնը նկատողութեան չառնուի՝ ինք կը հրաժարեցնէ նոյն Տեսուչը եւ անոր տեղ ուրիշ մը կը կարգէ առ ժամանակեայ կերպով՝ մինչեւ որ Գաւառական ժողովը նոր Տեսուչ մը ընտրուի :

Եւրոպական ժողովը նոր Տեսուչ մը ընտրութիւնն ընէ :

2. Տեսուչի վարժարանաց գաւառից

337. Գաւառական կրթական Տեսուչը թոշակաւոր պաշտօնեայ մը կունենայ «Տեսուչի վարժարանաց գաւառին» անուամբ :

338 ա. Տեսուչը պէտք է 334 յօդուածին տրամադրած հանգամանքն ունենայ, Գաւառական կրթական Տեսչէն ընտրուի եւ Կեդրոնական կրթական Տեսչութեան հաստատուի :

բ. Գաւառական ժողովը կրնայ Տեսուչին ընտրութիւնը կամ անոր վաւերացումը, ինչպէս եւ Տեսուչին ոսկի որոշումը կամ անոր վաւերացումը կրնայ իրեն վերապահել :

339. Տեսուչին պաշտօնը երկու տարի կը տեւէ :

340. Տեսուչը ներկայ կըլլայ Գաւառական ժողովոյ նիստերուն՝ երբ անոնց օրակարգին մէջ կրթութեան վերաբերեալ խնդիր կայ եւ՝ եթէ անգամ չէ նոյն ժողովոյն միայն ձայն կունենայ :

3. Պաշտօն, սլարտիք եւ յարաբերութիւնք

341. Գաւառական Տեսչաց պաշտօնն է՝

- 1. Գաւառին մէջ գտնուած բոլոր թաղային, բարեգործական, վանական եւ մասնաւոր կրթական հաստատութեանց հսկողութիւնն,
- 2. Հաստատեալ օրինաց, կանոնաց եւ Կեդրոնական կրթական Տեսչութեան տուած հրահանգաց գործադրութիւնը,
- 3. Ստորակարգեալ կրթական իշխանութեանց որոշումներու վերաքննութիւնը կամ վաւերացումը եւ
- 4. Սահմանեալ քննութեանց կատարումը (Յօդ. 290)

342. Գաւառական կրթական Տեսչաց զլիաւոր պարտականութիւնքն են՝

1. Ամեն ջանք ի գործ դնել որ ամէն տեղ Օրինաց սահմանած վարժարանները հաստատուին եւ արդէն հաստատուածները Օրինաց

տրամադրութեանց համաձայն վիճակի մէջ գրուին .

2. Կրթութիւն տարածելու նպատակաւ ընկերութիւններ կազմելու քաջալերել, կազմուածներուն յարատեւութեանը աշխատել եւ հսկել միանգամայն որ անոնք իրենց նպատակին համաձայն գործեն .

3. Յանուն կրթութեան եղած կտակաց անթերի գործադրութեանը հսկել .

4. Ազգային կրթութեան յառաջադիմութեան, ինչպէս եւ կրթական պաշտօնէից վիճակը բարւոյնելու եւ ապագայն ապահովելու միջոցներ խորհիլ եւ առաջարկել .

5. Վարժապետական ժողովներու կազմութեան հոգ տանիլ եւ անոնց արդիւնաւոր ուղղութիւն տալ .

6. Վարժապետներ եւ վարժուհիներ պատրաստելու (Յօդ. 238), Մանկավարժական դասարաններ (Յօդ. 247) եւ մանկավարժական դասախօսութիւնք (Յօդ. 273) հաստատելու մասնաւոր փոյթ ունենալ .

7. Գաւառական մանկավարժական մատենադարան եւ թանգարան մը հաստատելու հոգ տանիլ .

343. Գաւառական կրթական Տեսուչք իրենց գաւառին մէջ թափուր մնացած պաշտօններու նկատմամբ Օրինաց 316 յօդուածին համաձայն կը վարուին եւ անմիջապէս տեղեկութիւն կուտան Կեդրոնական կրթական Տեսչութեան :

344. Գաւառական կրթական Տեսուչք իրենց հսկողութիւնը կը կատարեն Այցելու Տեսչաց [Յօդ. 358] միջոցաւ՝ համաձայն Օրինաց 320 եւ 321 յօդուածոց տրամադրութիւններուն :

345. Գաւառական Տեսչութիւնք Այցելու Տեսչաց տեղեկագիրները բնեկէ ետք՝ իւրաքանչիւր վարժարանի մասին իրենց ունեցած դիտողութիւնները կը հաղորդեն Հոգաբարձուաց եւ Տեսչաց եւ անոնց միջոցաւ բոլոր պաշտօնէից ի նկատառումն :

346 ա. Գաւառական կրթական Տեսուչք

ի պահանջել հարկին անձամբ կոչուելն իրենց հսկողութեանը տակ դանձուած վարժարանները, կամ մասնաւոր բննչաց միջոցաւ վերահասու կըլլան անոնց վիճակին եւ իրենց բնութեան արդիւնքը կը ներկայեն մասնաւոր տեղեկագրով Գաւառական Ժողովին եւ Կեդրոնական կրթական Տեսչութեան :

բ. Այցելութեանց ծախքը կը հօգացուի Գաւառական կրթական (Յօդ. 353 կամ ընդհանուր սնտուկէն :

347 ա. Գաւառական կրթական Տեսուչք սա նուազն տարին երկու անգամ, զարնան մէջ եւ աշնան սկիզբը կամ ամառուան արձակուրդի միջոցին ի ժողով կը գումարեն իրենց Այցելու Տեսուչները՝ գաւառին բոլոր կրթական հաստատութեանց ներքին եւ արտաքին պայմաններուն վրայ մանրամասն տեղեկութիւնք առնելու, անոնց յառաջադիմութեան միջոցներուն վրայ խորհրդակցելու եւ մանրամասն հրահանգներ տալու համար

բ. Ժողովոյ նիստերն առնուազն երեք օր կը տեւեն :

348. Գաւառական կրթական Տեսչութիւնք պէտք է միշտ իրարու հետ յարաբերութեան մէջ գտնուին եւ ուշադրութեան արժանի խնդիրները իրարու հաղորդեն, որպէս զի գլխաւոր կարգադրութեանց մէջ բառ կարելւոյն սկզբանց եւ տեսակէտներու միօրինակութիւն հաստատուի եւ փոխադարձաբար իրարու փորձառութենէն օգտիլ կարենան :

349. Իւրաքանչիւր Գաւառական Տեսչութիւն կը բնեկէ եւ իւր դիտողութիւններովը հանդերձ Կեդրոնական կրթական Տեսչութեան վաւերացումը կը ներկայէ իր գաւառին մէջ կազմուած կրթական բնկերութեանց կանոնադիրները, ինչպէս եւ վանական եւ բարեգործական վարժարանաց հաշիւները, ուսմանց ծրարագիրներն ու կանոնագիրները :

350. Իւրաքանչիւր Գաւառական կրթական Տեսչութիւն Օրինաց 321 յօդուածին սահմանած տեղեկագիրները կը ներկայէ թէ Կեդ-

րոնական կրթական Տեսչութեան եւ թէ Գաւառական Ժողովին :

4. Հաստատուն եկամուտ եւ արկղ

351. Իւրաքանչիւր գաւառ իր ընդհանուր կրթութեան պիտոյից համար կունենայ հաստատուն եկամուտ եւ արկղ :

(Հ------ն էլ---)

352. Հաստատուն եկամտի աղբիւրներն են՝

1. Յանուն գաւառին ընդհանուր կրթութեան եղած կտակներն ու նուէրները, որոց անօրինութիւնը մասնաւոր անձի կամ մարմնոյ մը չէ յանձնուած .

2. Ազգայնոց ըրած կտակներու վրայ պահանջելի նուէրը .

3. Գաւառական կրթական արկղի հասութիւն տասներորդ մասը :

Կրթական խորհրդակցանութիւնը կը պնդէ պահել իւր յօդուածն, որ է՝

352. Հաստատուն եկամտի աղբիւրներն են՝

1. Գաւառին մէջ գտնուած այն ազգային կալուածներն որ մասնաւոր տեղւոյ կամ հաստատութեան սեփականութիւն չեն .

2. Յանուն գաւառին ընդհանուր կըրթութեան եղած կտակներն ու նուէրները, որոց անօրինութիւնը մասնաւոր անձի մը կամ մարմնոյ մը չէ յանձնուած .

3. Գաւառական կրթական արկղի հասոյթին տասներորդ մասը :

(Կէն-ի-ն -էլ-)

353. Գաւառական ընդհանուր կրթութեան Արկղի աղբիւրներն են՝

1. Հաստատուն եկամտի տարեկան հասոյթը՝

2. Գաւառական սնտուկի հասոյթին առ նըւազն երրորդ մասը .

3. Մասնաւոր նօրատք եւ նուէրք .

4. Գաւառական ուսումնարանէն գոյացած հասոյթը [Յօդ. 459] .

5. Արտօճագրաց տարբը (Յօդ. 290 բ. գ. եւ 308] .

6. Վարժարան չունեցող վանօրէից հասոյթէն մաս մը՝ զոր կորոչէ Կեդր. Վարչութիւնը Գաւառական Ժողովոյ կարծիքն առնելով :

354 ա. Գաւառական կրթութեան ընդհանուր պիտոյից համար սահմանեալ հաստատուն եկամտին անօրէնութիւնը Գաւառական Վարչութեանց կը վերաբերի . իսկ կրթական Արկղին՝ Գաւառական կրթական Տեսչութեանց, որք իրենց տարեկան տեղեկագրոց հետ կը ներկայեն Գաւառական Ժողովոյ եւ իրենց մատակարարութեան հաշիւներն :

բ. Յաջորդ տարուան պիտանէն պէտք է ներկայեն տարեգլխէն զէթ երկու ամիս առաջ :

355. Գաւառական կրթութեան ընդհանուր պիտոյից հաստատուն եկամուտը անհպելի է եւ անոր, ինչպէս եւ կրթական արկղի հասոյթը իր նպատակէն զատ ու է բանի չի կըրնար զորձածուիլ :

356. Գաւառական Ժողովք եւ Վարչութիւնք պարտաւոր են ամեն ջանք եւ միջոց ի գործ դնել գաւառաց ընդհանուր կրթութեան պիտոյից եկամուտներն անեցնելու :

5. Դիւան

357. Գաւառական կրթական Տեսչութիւնք իրենց դիւանը կունենան եւ անոր կարգադրութիւնն ու իրենց յաջորդին յանձնումը կը կատարեն Օրինաց 331 յօդուածին համաձայն :

ՄԱՍԻՆ ԵՐՐՈՐԴ

ԱՅՅԵԼՈՒ ՏԵՍՈՒՉՔ

1. Կազմութիւն կրթական շրջանակաց

358 ա. Իւրաքանչիւր գաւառ իր ընդարձակութեան ու վարժարանաց թուոյն համեմատ կրթական շրջանակներու կը բաժնուի և իւրաքանչիւր շրջանակի դպրոցաց և ստորին ուսումնարանաց հսկողութեան համար առանձին Այցելու Տեսուչներ կը կարգուին :

Բ. Դպրոցաց և ուսումնարանաց հսկողութիւնը կրնայ մէկ Այցելու Տեսուչ յանձնուիլ եթէ ուսումնարանաց թիւը հինգէն աւելի չէ և Այցելու Տեսուչը Օրինաց 363 յօդուածին տրամադրած Արտօնագիրն ունի :

359 ա. Գաւառի մը կրթական շրջանակաց թիւը Գաւառական Տեսուչութեան առաջարկութեամբ Գաւառական Ժողովը կորչէ և Կեդրոնական կրթական Տեսուչութիւնը կը հաստատէ :

Բ. Մայրաքաղաքս ու իր արտարձանները երկու կրթական շրջանակի կը բաժնուին :

2. Ընտրութիւն Այցելու Տեսուչ

360 ա. Այցելու Տեսուչ ընտրութիւնը Գաւառական կրթական Տեսուչութիւնը կրնեն և Կեդրոնական կրթական Տեսուչութիւնը կը վաւերացնէ :

Բ. Մայրաքաղաքիս Այցելու Տեսուչ ընտրութիւնն ու անուանումը Վարչական Կողմակերպութեան Օրինաց 16րդ յօդուածին համաձայն կը ըլլայ :

Կրթական խորհրդականութիւնը կը պնդէ պահել հետևեալ սողերն, որք իւր ծրագրին մէջ սոյն յօդուածին իրր Բ. պարբերութիւն գրուած էին :

« Գաւառական Ժողովը կրնան Գաւ. կրթական Տեսուչ ընտրութիւնն կամ

անոնց վաւերացումը, ինչպէս և ոտնկի և այցելութեանց ծախքերու սրոշումն իրենց վերապահել » :

361. Այցելու Տեսուչը նախ երկու տարուան համար կը նշանակուին և յետոյ վեց տարուան համար կը հաստատուին իրենց պաշտօնին մէջ [Յօդ. 221 բ. և գ.] :

362. Ստորին և Բարձրագոյն դպրոցաց Այցելու Տեսուչ ընտրուելու համար գէթ Բարձրագոյն դպրոցի վարժարանի վերջնական ընդհանուր Արտօնագիր [Յօդ. 297, 300 և 306 Գ.] ունենալու է :

363. Ստորին ուսումնարանաց Այցելու Տեսուչ ընտրուելու համար գէթ Ստորին ուսումնարանի ուսուցչի վերջնական ընդհանուր Արտօնագիր [Յօդ. 297, 300 և 306 Գ.] ունենալու է :

364. Օրինաց 218, 219, 221 գ. և 222, 223 ա. 224-237 յօդուածները Այցելու Տեսուչ ալ կը վերաբերին :

3. Պաշտօն, պարտիք և յարաբերութիւնը

365. Այցելու Տեսուչ պաշտօնն է 1. իրենց շրջանակին մէջ գտնուած բոլոր թաղային, բարեգործական, վանական և մասնաւոր կրթական հաստատութեանց անմիջական հրահրութիւնը, 2. հաստատուել Օրինաց և կանոնաց և Կեդրոնական կամ Գաւառական Տեսուչութեան հրահանգաց գործադրութիւնը և 3. սահմանուել բնութեանց [Յօդ. 290 գ. սիր.] կատարումը :

366. Այցելու Տեսուչը իրենց հսկողութիւնը կը կատարեն Կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսուչութեան մասնաւոր հրահանգաց համաձայն շարունակ վարժարաններն այցելելով և հարկ դատած աստեղծին Հարարձաններէն և Տեսուչներէն տեղեկութիւնք առնելով, և գէթ վեց ամիս անգամ մը կատարեալ կերպով կը բնեն իւրաքանչիւր

վարժարանի ներքին և արտաքին վիճակը և բոս այնմ կը սրտարաստեն իրենց տարեկան տեղեկագիրը :

367. Այցելու Տեսուչը իրենց այցելութեանց միջոցին ուշադրութիւն կը դարձնեն զլիսուստագր՝ 1. աշակերտաց կրթութեան, վարուց և ստղծութեան վիճակին և անոնց կանոնաւոր կերպով դպրոց յաճախելուն, 2. վարժարանաց ներքին կազմակերպութեան և բարեկարգութեան, 3. ժամանակացոյցի և օրագրութեանց և ցուցակաց կանոնաւոր գործածութեան, 4. վարժարանաց շէնքերու և գրասեղանաց, դաստիան միջոցաց և մատենադարանաց, ինչպէս և բոլոր գոյից վիճակին, 5. սրահներէից և Հոգարարձուաց սրահներէ վարութեան, 6. զխոտղութեանց տեսրի սրահներէ վարութեան, 7. Հոգարարձուաց և ներքին Տեսուչ պաշտօնական [գրանի] արձանագրութեանց և թղթաց վիճակին, 8. Պաշտօնէից ոտնկի կանոնաւոր վճարման և վարժարանաց հաշիւներուն և 9. դպրոցական շինութեանց և նորոգութեանց :

368. Այցելու Տեսուչը իրենց զլիսուստ գիտողութիւններն ու հրահանգները մասնաւոր սրահներով կը հաղորդեն Հոգարարձուաց կամ ներքին Տեսուչ :

369. Այցելու Տեսուչը մասնաւոր ուշադրութիւն կը դարձնեն դասատուութեանց եղանակներուն և կերպերուն, անոնց Օրինաց սրահներով ուղղութիւնը [Յօդ. 74] կուտան և գործնական կերպով կը հրահանգեն վարժարանները :

370 ա. Այցելու Տեսուչը իրենց այցելութեանց միջոցին միշտ կը տեսակցին և կը խորհրդակցին վարժարանաց Հոգարարցուաց և Թաղային Վարչութեանց և Ժողովոց անդամոց ինչպէս և այլ սղղեցութեան տէր անձանց հետ կառավարիկն անոնց ինչ որ կրթութեան բարգաւաճմանը համար օգտակար և կարեւոր կը դատեն և կը յորդորեն զանոնք առ այն իրենց ջանքերն ու աջակցութիւնը չինայցելու :

Բ. Նմանապէս կը յորդորեն դպրոցական սրահներէն իրենց սրահաց անթերի կատարման, կողմեն անոնց իրենց խորհուրդներով, կը սրահներէն անոնց իրաւունքները, կը բաշխուին վարժարանական ժողովոց դասարանները և կը ջանան ներկոյ ըլլալ և արգիւնաւոր ուղղութիւն տալ անոնց ընթացքին :

371. Այցելու Տեսուչը կրնան ներկայ ըլլալ Թաղային Վարչութեանց և Ժողովոց նիստերուն՝ երբ անոնց օրակարգին մէջ կրթութեան վերաբերեալ խնդիր կայ և՛ եթէ անգամ չեն՝ միայն ձայն կուենենան :

372 ա. Այցելու Տեսուչը 3 ամիսն անգամ մը ցուցակածէ, իսկ դպրոցական տարեգրքիս, իրենց շրջանակին բոլոր թաղային և այլ վարժարանաց բնութիւնները կատարելէ ետք, ընդհանուր տեղեկագիր կը ներկայեն իրենց կրթական Տեսուչութեանց՝ հանդերձ իրենց գիտողութիւններովն ու առաջարկութիւններովը :

Բ. Երեք տարին անգամ մը տարեկան տեղեկագիրը պէտք է օրինաց 321 յօդուածի բարբերութեան տրամադրութեանց համաձայն ըլլայ :

4. Դիւան

373. Այցելու Տեսուչը սրտաւոր են, 1. իրենց տեսուչութեան և կարգադրութեանց կանոնաւոր արձանագրութիւնը բռնել, 2. վարժարանաց, աշակերտաց, պաշտօնէից կանոնաւոր ցուցակներն ունենալ, 3. իրենց ընդունած պաշտօնական թղթերուն հակիրճ բովանդակութիւնը յատուկ տեսրի մը մէջ կարգաւ նշանակել և 4. իրենց յղած պաշտօնական գրութեանց և տեղեկագրոց սրտովները պահել :

Բ. Այցելու Տեսուչը սրտաւոր են այդ բոլոր պաշտօնական թղթերը խնամօք պահպանել և իրենց հրատարման միջոցին իրենց յաջորդին յանձնել կանոնաւոր ցուցակով և անկէ ընկալագիր առնելով Գաւառական Կրթական Տեսուչութեան ներկայել :



ՊԵՏԱԿԱՆ ԶՈՐՐՈՐԳ

ԿՐԹԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆՔ

Ա.

ԳԳՐՈՑԱՑ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ

1. Հոգաբարձուք

374. Թաղին կողմէն վարժարանաց անմիջական հսկողութիւնն ու մատակարարութիւնը կընեն թաղային կրթական Հոգաբարձուք, որոց ընտրութիւնը կը կատարուի ըստ տրամադրութեան թաղային օրինաց :

Կրթական Խորհրդականութիւնը կը պնդէ անփոփոխ պահել իւր ծրագրին յօդուածն, որ է՝

374. Թաղին կողմէն վարժարանաց անմիջական հսկողութիւնն ու մատակարարութիւնը կընեն թաղային կրթական Հոգաբարձուք, որք թաղային ժողովներէն կընտրուին և կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեանէն կը հաստատուին :

375. Հոգաբարձու կրնան ընտրուիլ բարի վարուց տէր, խոհական և կրթութեան բարեկամ անձինք :

Կրթական Խորհրդականութիւնը կը պնդէ իւր ներկայած ձեւին մէջ պահել այս Յօդուածն, որ աւաստիկ՝

375. Հոգաբարձու կրնան ընտրուիլ առնուազն 25 տարեկան, բարի վարուց տէր, խոհական և լուսաւորեալ կամ կրթութեան բարեկամ անձինք :

376. Հոգաբարձուաց ընտրութիւնը գրողութեան տարեգլխին տմիս մը առաջ կը կատարուի, իրենց պաշտօնը նոյն տարեգլխուն կսկսի և երկու տարի կը տեւի :

377. Զնչ---

378. Զնչ---

379. Թաղական ժողովք երբ հարկադրին Հոգաբարձուն հրաժարեցնել, պարտին իրենց որչափն հաղորդել Կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան պատճառաբանեալ տեղեկագրով :

380. Կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութիւնը երբ կատուդէ թէ Հոգաբարձու կամ Փոխ-Հոգաբարձու մը պարտադանցութեան կամ յանցանոց մէջ կը գըտնուի՝ բացատրութիւն կուդէ Թաղական Խորհրդէն կամ Թաղային ժողովէն և՛ եթէ բացատրութիւնը գոհացուցիչ չի գտնէ՝ անոնց պաշտօնանկութիւնը կատաշարկէ : Եթէ մինչև երեք ամիս իր առաջարկութիւնը նկատողութեան շանուի՝ ինք կը հրաժարեցնէ նոյն Հոգաբարձուն կամ Փոխ-Հոգաբարձուն և անոր տեղ ուրիշ մը կարգէ առժամանակեաց կերպով մինչև որ նորն ընտրուի ըստ օրինի :

2. Փոխ-Հոգաբարձուք

381. Թաղ. Խորհուրդք Հոգաբարձուին կարծիքն անկող Փոխ-Հոգաբարձու մը կընտրեն, որ Հոգաբարձուին բացակայութեանն անոր պաշտօնը կը վարէ իր անձնական պատասխանատուութեանը ներքեւ :

Կրթական Խորհրդականութիւնն իւր ծրագրին Յօդուածին վրայ կը պնդէ որ է՝

381. Թաղային ժողովք Հոգաբարձուին ընտրութիւնը կատարելէ ետք անոր կարծիքն առնելով Փոխ-Հոգաբարձու մը եւս կընտրեն, որ Հոգաբարձուին բացակայութեանը անոր պաշտօնը կը վարէ իր անձնական պատասխանատուութեանը ներքեւ :

382. Օրինաց 375-րդ յօդուածին տրամադրութիւնը Փոխ-Հոգաբարձուաց ալ կը վերաբերին :

3. Օգնական Հոգաբարձուք եւ Ինձնակալութիւն

383. Մանչ տղայոց դպրոցաց համար Հոգաբարձուք կընեն ձեռնհաս անձերէ (Յօդ. 375) Օգնական-Հոգաբարձուք ընտրել, իսկ տղիկանց կամ երկսեռ դպրոցաց համար քէքէ մէկ կամ երկու ձեռնհաս խնամակալուհի ընտրեն :

384. Օգնական-Հոգաբարձուք և խնամակալուհիք անձնագլխ պաշտօնական սրատասխանատուութիւն չեն ունենար և իրենք իրենց ունէ կարկազրութիւն չեն ըներ, այլ միայն խորհրդատու ձայն կուսենան :

385. Օգնական-Հոգաբարձուաց և խնամակալուհեաց պաշտօնն է դպրոցները այցելել և իրենց դիտողութիւնն այցելուաց տետրին մէջ նշանակել կամ զանոնք ուղղակի Հոգաբարձուին հաղորդել, աշակերտները խորախուսել և պաշտօնեաները քաջաւերել և ամեն դպրոցական խնդրոց մէջ Հոգաբարձուաց օգնել :

4. Գործակալք

386 ա. Հոգաբարձուք կրնան իրենց սրատասխանատուութեանը ներքեւ գործակալ մը ունենալ և անոր յանձնել վարժարանաց շէնքին, գոյնց և մատակարարութեան վերաբերեալ գործերը :

բ. Գործակալաց ընտրութիւնը Հոգաբարձուք կընեն և Թաղ. Խորհուրդք կը վաւերացնեն :

գ. Գործակալք կրնան վարձատրութիւն ստանալ, որոց քանակութիւնը Թաղ. Խորհուրդք կորոշեն :

Կրթական Խորհրդականութիւնն այս Յօդուածոյն Բ. և Գ. պարբերութիւններն իր ծրագրոյն մէջ գրուածին նման պահել կը պնդէ, որք ահաւաստիկ՝

բ. Գործակալաց ընտրութիւնը Հոգաբարձուք կընեն և Թաղային ժողովք կը վաւերացնեն :

գ. Գործակալք կրնան վարձատրու.

թիւն ստանալ, որուն քանակութիւնը Թաղային ժողովք կորոշեն :

5. Պաշտօն, Պարտիք եւ յարաբերութիւնք.

387. Հոգաբարձուաց պաշտօնն ու պարտիքն են՝

1. Հաստատեալ Օրէնքն ու կանոնները և Թաղային ժողովոց և Բարձրագոյն կրթական իշխանութեանց հրահանգներն ու որոշումները գործադրել :

2. Ըստ կարելւոյն յաճախ այցելել դպրոցները և 3-4 շաբաթը անգամ մը ի խորհուրդ գումարել Օգնական-Հոգաբարձուներն ու խնամակալուհիները :

3. Օգնել բանիւ և գործով դպրոցական պաշտօնէից և հսկել որ անոնք իրենց պաշտօնը խզի մտօք կատարեն :

4. Հսկել աշակերտաց վարուց և կրթութեան և դպրոցաց ներքին բարեկարգութեան վրայ :

5. Վարժարանաց շէնքն ու գոյքերը ըստ վիճակի մէջ պահել :

6. Վարժարանաց հաստատուն եկամտից և արկղին տղրիւրները անցնել և սպաւոյնել և ծախքերը բանաւոր խնայութեամբ ընել :

7. Պաշտօնէից ուժիկները ժամանակին և ճշգրտութեամբ վճարել և աշակերտաց թոշակները կամ կրթական տուրքը անկորուստ հասարակել :

8. Վարժարանաց բոլոր պիտոյքը ժամանակին հոգալ :

9. Աշակերտաց կանոնաւոր երթեկուցութեանը մեծ հոգ տանել և ծնողաց պարտադանցութեանց նկատմամբ Օրինաց տրամադրութիւնը անաշատապէս գործադրել (Յօդ. 51)

388. Թաղային ժողովք կրնան Հոգաբարձուաց պաշտօնն ու պարտաւորութիւնը մասնաւոր կանոնադրութեամբ գծել. բայց այդ կանոնադրութիւնը պէտք է Օրինաց տրամադրութեանց և Կեղրոնական կրթական Տեսչութեան հրատարակելիք կանոնադրին համաձայն ըլլայ և Կեղրոնական կամ գաւառական կրթական Տեսչութեան վաւերանոց :

389. Հոգաբարձուք և ֆոխ-Հոգաբարձուք ներկայ կըլլան Քաղաքին Ժողովոց նիստերուն՝ երբ անոնց օրակարգին մէջ կրթութեան վերաբերեալ խնդիր կայ և՛ եթէ անգամ չեն՝ միայն ձայն կուենան :

390 ա. Հոգաբարձուք չեն կարող իրենց իրաւասութենէն վեր կարգադրութիւններ ընել : Արտաքոյ կարգի ստիպողական պարագայներու մէջ բացառութիւն կրնայ ըլլալ : Բայց պէտք է անմիջապէս գործին ստիպողականութիւնը բացատրեն և եղած անօրինութեան վաւերացումը խնդրեն Չեռնհաս իշխանութեւնէն :

բ. Գաւառական կամ Կեդրոնական Կըրթական Տեսչութիւնը, ինչպէս և Քաղաքին Ժողովը կրնան բարեփոխել կամ ոչնչացնել և զած անօրինութիւնը՝ եթէ զայն Օրինաց Համաձայն չի գտնեն և անոր ստիպողականութիւնը չընդունին :

391. Հոգաբարձուք մեծ փոյթ տանելու են որ թաղին ազատ մանկունքը կրթութենէ զուրկ չի մնան (Յօդ. 30 բ.) :

392. Հոգաբարձուք պէտք է բժիշկ զբաւուած տեղերը միշտ անոր օգնութեանը զիմեն զպրոցաց առողջապահական սրբմաններուն մասին խորհրդակցելու համար :

393. Հոգաբարձուք Քաղաքին Վարչութեան և Գահանայից անկախութեամբ ամէն տարի ապրիլ ամսու մէջ թաղին բոլոր գործակալներու անկախ (Յօդ. 49, 58 և 78) անկախ աղայոց ցուցակը շինելու են : որպէս զի գրոցարանին նոր շրջանի սկիզբը ներկայ աշակերտաց հետ բաղդատեն և գործոց շտապարաններու մասին բացատրութիւն ուղեն :

394. Հոգաբարձուք ամէն ֆոնդ ի գործ դնելու են որ թաղական հասարակ և այլ զբոսայտական գործարարութիւնը գործողական սրբմանից վրայ չի ծանրանան, այլ ունենալու եղանակու կատարուին :

395 ա. Հոգաբարձուք կամ գործակալը պէտք է իրենց ըրած ծախքերը հաստատող ընկալագիրներ առնեն անոնցմէ որոց հետ որ գրամական յարաբերութիւնը կուենան :

բ. Նմանապէս պէտք է խրատանչիւր զըստացական սրտածնէի հետ մասնաւոր սրբմանագիր կրնեն Օրինաց տրամադրութեանց համաձայն (Յօդ. 190) :

396. Հոգաբարձուք իրենց պատասխանատուութեան ներքեւ կրնան մինչեւ հինգ օսմանեան ոսկի արտաքոյ կարգի ծախք ընել :

397. Հոգաբարձուք 3 ամիսն անգամ մը ցուցակաձեւ և ամէն տարեգլխու ընդհանուր տեղեկագիր կը ներկայեն Քաղաքին Ժողովոց և Գաւառական կամ Կեդրոնական Կրթական Տեսչութեան իրենց խնամոց Յանձնուած զըստաց ներքին և արտաքին վիճակին վրայ՝ հանդերձ իրենց զխտորութիւններովն ու առաջարկութիւններովը :

398. Հոգաբարձուք իրենց տարեկան հաշիւները կը ներկայեն Քաղաքին Ժողովոց, որը յատուկ մասնախմբուր կը յանձնեն անոնց քննութիւնը : Հաշուներնից մասնախմբուր պէտք է հաշիւներն ստուգեն վաւերագրերով և քննութիւնը կատարելէ ետք ներկայեն զայն Քաղաքին Ժողովին : Քաղաքին Ժողովը հաշուեցուցակը երկու շաբաթ ի տես ժողովրդեան կախելէ և եղած զիտողութիւնները նկատողութեան տանելէ ետք կը վաւերացնէ և կը ներկայէ Գաւառական կամ Կեդրոնական Կրթական Տեսչութեան կրկին օրինակու, որք քննելով կը ներկայեն Վարչական Խորհրդին :

399. Հոգաբարձուք զպրոցական տարեգլխէն զէթ երկու ամիս առաջ կը ներկայեն Քաղաքին Ժողովին զպրոցաց յաջորդ տարուան պիւտանէն : Քաղաքին Ժողովը զայն քննել և վաւերացնելէ ետք կը ներկայեն Կեդրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութեան ի հաստատութիւն :

400. Հոգաբարձուք պէտք է Այցելու

ՄԱՍԻՆ ՎԵՅԵՐՈՐԴ

ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

407. Երբ հնար ըլլայ վարժապետանոց և վարժուչիւնոց, ինչպէս և բարձրագոյն աստիճանի մասնագիտական և ուսումնական հաստատութիւններ հիմնել՝ Ազգ. Ժողովը անոնց համար մասնաւոր օրէնքներ կը հաստատէ :

408. Մինչեւ որ Օրինաց տրամադրած Գաւառական տեսչութիւններն ու այցելու Տեսչուները հաստատուին՝ Գաւառական Տեսչութեանց սրտածնը Ուսումնական Խորհուրդները կը վարեն՝ ուր որ նոյն Խորհուրդները կան : Իսկ ուր որ չկան՝ Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը ինք Այցելու Տեսչուներ կը նշանակէ և անոնց միջոցաւ կը կատարէ իր հսկողութիւնը կամ ուղղակի յարաբերութիւն կը հաստատէ Հոգաբարձուաց հետ :

409. Մինչեւ որ Քաղաքին վարչութեան կազմակերպութեան Օրէնքը հրատարակուի և գործադրութեան դրուի և Կրթական Հոգաբարձուաց (Յօդ. 374 և 404) ընտրութիւնները կատարուին՝ վարժարանաց հսկողութիւնն ու մասնակարարութիւնն ըստ ստանձնոյն Քաղական Խորհուրդներէն կազմեալ Հոգաբարձութիւնը կը ընեն :

410. Մինչեւ որ զպրոցական հաստատուն եկամուտներն ու արկղները Օրինաց տրամադրութեանց համաձայն կազմութիւն ըստանան (Յօդ. 36, 38 և 122) Քաղաքին սրբատուներու հասոյթին առ նուազն կէսը կըրթութեան կը յատկանայ :

411. Ազգային վարժարանաց շէնքերն ու անոնց յարակից մասերը, գրասենյակներն ու վարժարանաց ներքին կազմութիւնը պէտք է Օրինաց և հրահանգաց սահմանած վիճակին մէջ գրուին—չէնքերը առ առաւելն մինչեւ հինգ և գրասենյակներն առ առաւելն մինչեւ երկու տարի, իսկ ներքին կազմութիւնը մինչեւ 1882—1883 զպրոցական տարուայ սկիզբը [Մայիս] :

Տեսչաց սահմանած ամէն տեղեկութիւն տան և անոնց հրահանգները ճշդիւ գործադրեն, և եթէ ունենան օրինաւոր սրտածնա ունին զանոնք չի գործադրելու՝ պէտք է անմիջապէս գաւառական կամ Կեդրոնական Կրթական Տեսչութեան տեղեկագրեն :

401. Հոգաբարձուք կարգադրութիւն մը ընելէ առաջ պէտք է Տեսուչ-վարժապետին կամ վարժուչուցն, և՛ եթէ վարժապետական խորհուրդ կայ՝ և անոր կարծիքն առնուին :

402. Հոգաբարձուք ունենալ զխտորութիւն կամ յանդիմանութիւն պէտք չէ ընեն սրտածնից ի ներկայութեան աշակերտաց :

6. Իրաւն

403. Հոգաբարձուք պէտք է՝ 1. իրենց ըրած որոշմանց և կարգադրութեանց արձանագրութիւնը բռնեն. 2. ընդունած սրտածնական թղթերը սրահն և զանոնք ընդունելութեան կարգովը տեսարակի մը մէջ նշանակեն. 3. իրենց յղած թղթոց սրտածնները սրահն. 4. սրտածնից սրբմանները յատուկ տեսարի մը մէջ արձանագրեն. 5. վարժարանի հաշուեկառմարները և զայնց ցուցակը կանոնաւոր եղանակաւ բռնեն և 6. այդ բոլորը իրենց հրատարակած միջոցին իրենց յաջորդին յանձնեն ցուցակաւ և անկէ ընկալագիր առնելով Քաղաքին Ժողովին ներկայեն :

բ.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆՔ

404 ա. Իւրաքանչիւր Ուսումնարան իր յատուկ Հոգաբարձուն կուենան :

բ. Եթէ ուսումնարանը Քաղաքին գրպոցին հետ մէկ յարկի տակ գտնուի՝ երկուքին հոգաբարձութիւնը կրնայ մէկ անձի յանձնուիլ :

405. Հոգաբարձուք իրենց պատասխանատուութեանը ներքեւ կրնան մինչեւ տասն օսմ. ոսկի արտաքոյ կարգի ծախք ընել :

406. Օրինաց 374—392, 394, 395 և 397—403 յօդուածները ուսումնարանց Հոգաբարձուաց ալ կը վերաբերին :

412 ա. Ներկայ Օրինաց հրատարակու-
թենէն առաջ գործադրութեան դրուած ուս-
մանց ծրագիրները միայն մինչև 1881—82
դպրոցական տարւոյն վերջը կրնան գործա-
դրուիլ:

Բ. Այդ սրտմանովա՛մբ քանակէ՛ ետք ա-
մէն ծրագիր՝ որ Օրինաց արամադրութեանց
համաձայն և կեդրոնական կամ Գաւառական
Տեսչութենէն փաւերացած չէ՝ առ ոչինչ կը
համարուի և զայն գործադրող Հոգաբարձուք
և պաշտօնեայք յանցաւոր կը դատուին:

413 ա. Արտօնութիւն կը տրուի կեդ-
րոնական կրթական Տեսչութեան որ ներկայ
Օրինաց հրատարակութեան միջոցին պաշտօնի
մէջ գտնուող վարժապետաց և վարժուհեաց
երեք տարուան համար վկայագրեր տայ
խրատանշիւրին իր կորողութեան համեմատ,
եթէ ստուգէ որ 1. Օրինաց սրահանջած տա-
րիքն (Յօդ. 17, 186, 187 և 211), 2. բարի
վարք և 3. փորք ի շատէ իրենց ստանձնած
պաշտօնին պահանջած հմտութիւնքն ու յարմա-
րութիւնն ունին:

Բ. Այդ վկայագրին ստացողները եթէ ե-
րեք տարին քանակէ՛ ետք Օրինաց սահմանած
քննութիւնը տալով Արտօնագիր չստանան
[Յօդ. 306 Ա.—Ե]. սնտահետեւ վարժապետու-
թեան պաշտօն վարելու իրաւունքն կը զեր-
կուին:

414. Օրինաց 295 յօդուածի արամա-
դրութիւնները այն վկայագիրը խնդրողներուն
ալ կը վերաբերին:

415. Նախընթաց 413 թղ. յօդուածին
արամադրած վկայագիրը չունեցող վարժա-
պետք և վարժուհիք կրնան իրենց պաշտօնը
շարունակել մինչև 1882 Մայիս. իսկ անոնք
որ Օրինաց հրատարակութենէն վերջ պաշտօնի
կը կոչուին՝ ալ տր է կամ Օրինաց 289 ա. յօդ-
ուածին պահանջած քննութիւնը կամ 413 թղ.
յօդուածին արամադրած վկայագրին ստանան.
Եթէ ոչ՝ Օրինաց 229 թղ. յօդուածի ա. պար-
բերութեան արամադրութեանց համաձայն կը
դատուին. Եթէ նոյն յօդուածի Բ. պարբե-
րութեան արամադրութեան ներքեւ չեն իյնար:

416. Մինչև 1884 Մայիս Արտօնագիր
խնդրող պաշտօնէից համար երկու ամիսն ան-
գամ մը քննութիւնք տեղի կունենան. որոց
որն ու տեղը կեդրոնական կամ Գաւառական
կրթական Տեսչութիւնը կը հրատարակէ. բայց
ի պահանջել հարկին արտաքոյ կորդի քննու-
թիւնք ալ կրնան ըլլալ:

417. Ներկայ Օրինաց հրատարակուած
որէն նախորդ Ուսումնական Խորհրդոց հրատա-
րակած ծրագիրները. կանոնադրներն ու հը-
րահանգները կը ընջուին՝ Օրինաց 412 ա. յօդ-
ուածին արամադրած բացառութեամբ:

418. Ուսումնական Խորհուրդներէն փա-
ւերացած դասադրերը փաւերական կը համար-
ուին միայն մինչ ի սպասումն այն օրինակաց,
որոց սպադարութիւնը արդէն եղած է ներկայ
Օրինաց հրատարակութենէն առաջ:

419 ա. Ներկայ Օրինաց վերաբննելի է
հաստատութենէն երեք տարի յետոյ. կրնայ
սակայն մինչև այն նպայմանա՛մբ մասնա-
ւոր բարեփոխումներ կրել եթէ կեդրոնական
կրթական Տեսչութիւնն և կամ Ազգ. Ժողովոյ
Գաստիոսակութեան Գիւանք տաաջարկեն և
Ժողովն ուզէ նկատողութեան ստնուլ:

Բ. Եթէ վերաբննութիւնը տեղի ունենայ՝
Օրինաց նոր սպադարութեամբ կը հրատարա-
կուի հանդերձ բարեփոխուլ կամ յաւելուլ
յօդուածոց սուանձին ցուցակու:

420. Ազգային Ժողովը Պատրիարքին և
Վարչական Խորհրդին կը յանձնէ ներկայ Օրի-
նաց գործադրութիւնը:

Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ. — Թաղային կրթական հաստատութիւնք

ԳԼՈՒԻ ԱՌԱՋԻՆ. —

Մաղկոց 1—20

ԳԼՈՒԻ ԵՐԿՐՈՐԴ. — Թաղային դպրոցք.

Ա. — կազմութիւն դպրոցական թաղի 21—24

Բ. — Պարտիք և իրաւունք թաղին

1. Պայմանք հիմնարկութեան դպրոցի, դպրոցատեղիք և այլ պիտոյք 25—35

2. Դրահական միջոցք 36—48

Գ. — Պարտիք և իրաւունք ծնողաց և աշակերտք

1. Պարտիք և իրաւունք ծնողաց 49—57

2. Աշակերտք 58—64

Դ. — Ներքին կազմութիւն դպրոցաց

1. Աստիճանք և նպատակ, ուսմանց ծրագիրք և միջոցք 65—74

2. կազմութիւն կարգաց 75—79

3. Երկսեռ դպրոցք 80 և 81

4. Ժամանակ ուսման և պարապոյ 82—86

5. Քննութիւնք, կարգախօխութիւնք, վիճակացոյցք, վկայագիր և հանդէս 87—90

6. Օրագրութիւն և ցուցակք 91

ԳԼՈՒԻ ԵՐՐՈՐԴ. —

Ա. — կրկնիչ վարժարանք 92—101

Բ. — Երկկողման և կիրակնօրեայ վարժարանք 102—115

ԳԼՈՒԻ ԶՈՐՐՈՐԴ. — Թաղային ուսումնարանք

Ա. — Իրաւունք և պարտիք թաղին

1. Պայմանք հիմնարկութեան, շէնք և այլ պիտոյք 116—120

2. Դրամական միջոցք 121 և 122

Բ. — Ներքին կազմութիւն ուսումնարանաց

1. Աստիճանք և նպատակք, ուսմանց ծրագիրք և միջոցք 123—139

2. կազմութիւն կարգաց 140 և 141

3. Աշակերտք և աշակերտուհիք 142—151

4. Քննութիւնք և ժամանակ ուսման և պարապոյ 152—155

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ. — կեդրոնական և Գաւառական ուսումնարանք

Ա. — կեդրոնական ուսումնարան 156—158

Բ. — Գաւառական ուսումնարան 159—163

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ. — կրթական հաստատութիւնք՝ որոց կազմութիւնք ներկայ
Օրէնքով չէ սահմանուած:

Ա. — Վանական մրարանութեանց վարժարանք 164—168

Բ. — Բարեգործական կրթական հաստատութիւնք 169—173

Գ. — Մասնաւոր վարժարանք 174—177

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ. — կրթական պաշտօնեայք

ԳԼՈՒԻ ԱՌԱՋԻՆ.

Ա. — Դպրոցաց պաշտօնեայք.

1. Տեսուչ-վարժապետք կամ վարժուհիք 178—185

2. Վարժապետք և վարժուհիք 186—192


3. Օգնական վարժապետք կամ վարժուհիք 193—197

4. Օգնական աշակերտք կամ աշակերտուհիք 198 և 199

Բ. — Ուսումնարանաց պաշտօնեայք

1. Տեսուչ և ֆոխ-Տեսուչ 200—209

2. Ուսուցիչը կամ ուսուցչուհիք	210—212
3. Ուսուցչաց խորհուրդ	213—215
4. Օգնական-ուսուցիչը կամ ուսուցչուհիք	216 և 217
Գ. — Ընդհանուր իրավունք եւ պարտիք պաշտօնէից	218—227
ԳԼՈՒԻ ԵՐԿՐՈՐԴ. — Պատրաստութիւն կրթական պաշտօնէից	
Ա. — Պատրաստութիւն դպրոցաց ժէջ	238—246
Բ. — Պատրաստութիւն մանկավարժական դասարանաց մէջ	247—266
Գ. — Պատրաստութիւն բանբարդոյն ուսումնարանաց մէջ	267—270
ԳԼՈՒԻ ԵՐԲՈՐԴ. — Ինքնակրթութիւն կամ կատարելագործութիւն կրթական պաշտօնէից	
Ա. — Մրցում	271 և 272
Բ. — Մանկավարժական դասախօսութիւնք	273—276
Գ. — Վարժապետական ժողովք	
1. Կրթական չրջանակաց վարժապետական ժողովք	277—282
2. Գաւառական վարժապետական ժողովք	283—286
3. Ընդհանուր վարժապետական ժողով	287 և 288
ԳԼՈՒԻ ԶՈՐՐՈՐԴ. — Քննութիւնք եւ Արտօնագիրք	
Ա. — Քննութիւնք	289—295
Բ. — Արտօնագիրք	296—308
ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ. — Կրթական իշխանութիւնք .	
ԳԼՈՒԻ ԱՌԱՋԻՆ. — Կեդրոնական կրթական Տեսչութիւն	
1. Ազգային Վարչութեան Կրթական Խորհրդական	309—311
2. Ընդհանուր Տնօրէն Ազգային վարժարանաց	312—314
3. Պաշտօն եւ յարաբերութիւնք	315—323
4. Պարտիք	324 և 325
5. Ազգ. կրթութեան ընդհանուր պիտոյից հաստատուն եկամուտ եւ արկղ	326—330
6. Դիւան	331
ԳԼՈՒԻ ԵՐԿՐՈՐԴ. — Գաւառական կրթական Տեսչութիւնք	
1. Գաւառական կրթական Տեսչ	332—336
2. Տնօրէն վարժարանաց գաւառին	337—340
3. Պաշտօն, պարտիք եւ յարաբերութիւնք	341—350
4. Հաստատուն եկամուտ եւ արկղ	351—356
5. Դիւան	357
ԳԼՈՒԻ ԵՐԲՈՐԴ. — Այցելու տեսուչք	
1. Կազմութիւն կրթական չրջանակաց	358 և 359
2. Ընտրութիւն այցելու Տեսչաց	360—364
3. Պաշտօն, պարտիք եւ յարաբերութիւնք	365—372
4. Դիւան	373
ԳԼՈՒԻ ԶՈՐՐՈՐԴ. — Կրթական հոգաբարձութիւնք	
Ա. — Դպրոցաց Հոգաբարձութիւնք	
1. Հոգաբարձութիւնք	374—380
2. Փոխ-Հոգաբարձութիւնք	381 և 382
3. Օգնական-Հոգաբարձութիւնք եւ Խնամակալուհիք	383—385
4. Գործակալք	386
5. Պաշտօն, պարտիք եւ յարաբերութիւնք	387—402
6. Դիւան	403
Բ. — Ուսումնարանաց Հոգաբարձութիւնք	404—406
ՄԱՍՆ ՎԵՅԵՐՐՈՐԴ.	
Առժամանակեայ տրամադրութիւնք	407—420



ՊԵՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԷ

1. — Վաւերացումն ասենազրութեանց .
2. — Բացակայութիւն .
3. — Ասաջարկութիւն Ս. Փափազեան էֆէնտիի, լրագրական հրատարակութեանց զէմ ազգային պաշտօնատարները պաշտպանելու մասին .
4. — Միջազէտ .

ՅՐԱԿԱՐԳ

Մրազիր Թաղային օրինաց .

- Ա. — Գեր. Արօնական խորհրդականին պատասխանազիրն՝ ի մասին կիլիկոյ կաթողիկոսական խնդրոյն վերաբերեալ հարցման .
- Բ. — Ազգազիր Աժեն. Ս. Պատրիարք Հօր, ի մասին իւր մտալուստ հրատարման .
- Գ. — Երկարումն կրթական օրինաց ծրագրի նախաքննութեան պայմանաժամուն .
- Դ. — Բացակայութիւնը .
- Ե. — Փակումն Ազգային ժողովոյ 1880 ի տարեյրջանին :

ՅԱՆԿ ԻՆԴՐՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ ԵՐԶԱՆԻ 1880 ԱՄԻ

ՄՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱՑ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Գլին 2 դրուշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ ՄԱՅՈՒՑ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի և Դպրարիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայը և Հայ գրավճառաց բով